ԳԻՐՔ LIV



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 5-6 ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ

ԹԻՖԼԻՍ

ԷԼԷՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆՈՒՄ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՍ, 7

1909

Վեհ. Տ. Տ. Մատթէոս Ա. (պատկեր)
Տիկին Վիլլիրուէ. Լէօնար'ի. ֆրանս. թարգմ. Մինաս Բեր-
բերեան 1
*** Բանաստեղծութիւններ Յարութիւն Պետրոսեան 13
Տ. Գրիգոր Ա. քարտէժ և Գրիգոր Զ. ապիրատ Մ. Ա. Օ. 13
Դու մի' վհատիր. բանաստ. Խենթ 38
Ի՞նչ է հասարակութիւնը. Pessimist. . . . 39
Ժողովրդի մէջ. Օպերգերի. թարգմ. or. Ն. Աղանեանց . 55
Քսան դաղ լերան վկան. Լ. Խանզադէ . . . 69

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Quelqus notes sur les eaux minerales du Caucase
Ն. Յարոյ։— Կ. Կոստանեանց. Տ. Ներսէս Ե. Աշտարակեցի կաթողիկոս ամենայն հայոց. մի հատուած նորա պատմութիւնից. Գիւտ ա. f. Աղանեանց.— Ստացուած գրքեր։ 79

ԱՄՍՕՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ողջոյն Վեհ. Հայրապետին։ Գարեգին Եղիբարեան.— Ո՞վ պէտք է լինի նեմարանի տեսուչ։ Վ. Ա. —Վեհ. Հայրապետը Թիֆլիսում.— Լուրեր.— Կոչ.— Հաշիւ ի նպաստ Թիւրքահայաստանի հայ տառապեալների հանգանակիչ մասնաժողովի։ 86

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԱՆԳԼԻԱՅԻ

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հ. Բոկլի—Նոտովիչի համառօտած

Թարգմանեց Վարդգէս Աղանեանց

ԳԻՆՆ Է 75 ԿՈՊ.

ԳԻՐՔ LIV



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 5-6 ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԷԿՏՐԱՏՊԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ ՊՕԼԻՑ. 7
1909

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ.

ԱԼԵՔ. ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՏԻԿԻՆ ՎԻԼԼԻՐՈՒԷ

ԼԷՕՆՏՐԻ

Մի ամիս անցնելուց յետոյ նրանք պէտք է բաժանուէին։ Քաղաքացուհի Վիկտուար Վելլիրուէն ազատուած էր, իսկ նրա ամուսինը բանտ էր տարուած, ուր պէտք է սպասէր դատարան կոչուելուն։ Լուծման ժամը մօտենում էր։

Խնդիրը, աղերսը՝ զինուորական յանձնաժողովների համար նշանակութիւն չունէին. նրանք անողոք էին, ինչպէս մահուան պատիժը կատարող զինուորները։ Ի՞նչ անելու էր։ Նախ և առաջ հարկաւոր էր մի փաստաբան ճարել։ Վիկտուարը մի քանի փաստաբանների հասցէներ ունէր։ Բայց նա միշտ տատանւում էր։ Մի առաւօտ, երբ դեռ անկողնից չէր վերկացել, նա մտածեց մի նամակ գրել դատաւորներին նրանց զուրթը շարժելու համար։

Գրեմ... բայց նրանք չեն էլ կարդայ նրա նամակը։ Իսկ եթէ նա գնայ անձամբ խնդրի... այդ զինուորականներին. նրանք չեն էլ ընդունի։ Իսկ եթէ ընդունեն էլ՝

Ծանօթ. Այս պատմուածքի նիւթը վերցրած է ֆրանսիական մեծ յեղափոխութեան (1789-1899) դէպքերից։ Քաջ բրիտանուհու դէպքը իրօք տեղի է ունեցել «Դիրեկտօրիա»-ի ժամանակ, երբ էմիգրանտներին զինուորական դատարանի էին ենթարկում։ Պատմուածքի հեղինակ՝ Լէնօտրը յայտնի է ֆրանս. մեծ յեղափոխութեան միջադէպերի և մանրամասնութիւնների ուսումնասիրութիւններով։ Յայտնի է նրա բազմահատոր «Յեղափոխական Պարիզը»։

հէնց առաջին խօսքից կհեռացնեն, առաջ քան թէ նա կարողանայ իր ամուսնու գործը պաշտպանել...

Պաշտպանե՞լ. ահա գեղեցիկ միտք։ Ա՜յո. նա ինքը կպաշտպանէ նրան. ինքը—դատաստանի առաջ։

Եւ խսկոյն վեր թռչելով անկողնից, նա սկսում է արագ-արագ ման գալ սենեակում, յօրինելով մտքում իր պաշտպանողական ճառի յառաջաբանը։ Երբ որ տեսակցութեան ժամը հասաւ, նա վազեց բանտ և հաղորդեց ամուսնուն իր մտադրութիւնը։ Միշտ հաւատ ընծայելով իր ընկերուհու ոյժերին—նա հաւանեց և նրա այդ ծրագիրը։

—Ես քեզ բոլոր փաստաբաններից գերադասում եմ. եթէ դու քաջութիւն ունենաս դատաստան դուրս գալու՝ ես փրկուած եմ։

Վիկտուարը վերադառնում է տուն և սկսում է գրել իր պաշտպանողական ճառը։ Բայց արդեօք թոյլ կտա՞ն, որ նա արտասանէ իր ճառը։ Այդ բանի համար հարկաւոր է յանձնաժողովի քարտուղարի թոյլտուութիւնը ստանալ։ Նա տեղեկութիւններ է հաւաքում նրա մասին. դամի երիտասարդ սպայ է, երեսուն երկու տարեկան, կապիտան Վիվէլօ։ Նա գնում է սպայի մօտ և տեսնում է, որ սա վերին աստիճանի անթափանցելի և խորհրդապահ մի անձն է։ Կնոջ մտադրութիւնը զարմացնում է սպային՝

—Տիկին. այն, ինչ որ դուք խնդրում էք, չի համապատասխանում ընդունուած սովորութեան։

—Բայց օրէնքի հակառակ հո՞ չէ։ Ես իմ ամուսնու համար միշտ անում էի այն, ինչ որ համապատասխան էի գտնում պարտականութիւններիս և զգացմունքներիս։ Ա՜յժմ էլ՝ նրան մեղադրում են, իսկ ես պաշտպանում։ Կարծեմ պարզ է։

Սպան գլուխ տուեց և աւելացրեց, որ «իր կողմից արգելք չի տեսնում»։

Բայց այդ բաւական չէր. նա պէտք է այցելէր դա-

տաստանի նախագահ գեներալ Կադոլ՛ին, որը զինուորական ուսումնարանում էր բնակւում։

Երբ Վիկտուարը իր գայրոյթն էր յայտնում օրէնքների խստասրտութեան առթիւ՝ գեներալը սիրտ սառեցնող ձայնով արտասանեց՝

—Մենք այստեղ ոչ թէ օրէնքները քննադատելու, այլ գործադրելու համար ենք։

Բայց Վիկտուարին վիճակուած էր աւելի ևս տաժանելի յուզմունքներ կրել։

Սարսափահար նա վերադառնում էր բանտից, ուր գնում էր ամէն օր։ Ամուսնու երեք ընկերները, որոնք նոյն յանցանքի մէջ էին մեղադրւում, դատարան էին կոչուած և մահուան դատապարտուած։ Վիկտուարը տեսել էր, ինչպէս նրանք գնում էին գլխատման վայրը։ Նրա ամենամօտ ընկերները աշխատում էին յետ կանգնեցնել նրան իր դիտաւորութիւնից՝ «ի՞նչ հարկաւոր է անիրագործելի ցնորքներ ստեղծել... Նրա ամուսնու գործը—անյուսալի է. ի՞նչ հարկ կայ ինքն իրեն ի ցոյց հանել և դեռ իղուր մեղադրանքների ենթարկուել»։

Բայց Վիկտուարը մնում էր անդրդուելի։ Նա ուսումնասիրում էր գործը, տեղեկութիւններ էր հաւաքում դիրեկտորիայի օրէնքների և կարգադրութիւնների միջից։ մտնում էր այն բնակարանը, ուր յանձնաժողովի նիստերն էին տեղի ունենում և ներկայ էր լինում այդ նիստերին, որպէսզի ընտելանայ դահլիճին և դատաստանական կարգերին։ Նա բոլորովին մաշուել էր յոգնածութիւնից և յուզումներից։ Վերջապէս ճակատագրական օրը հասաւ։

Մարտի 23 էր։ Ձատկի նախատօնակը։

Նիստը բացուելու էր ժամը 11½-ին։

Վիկտուարը վեր էր կացել ժամը 6-ին և 8-ին նա արդէն բանտումն էր, որպէսզի կարողանայ տեսնուել ամուսնու հետ և քաջալերել նրան։ Նա վերադառնում է տուն, հագնում է լայն թևերով մարմաշեայ սպիտակ

զգեստը, մէջքից փաթաթում է ապրեշումէ թեթև գոտի, իսկ գլուխը ծածկում է սպիտակ կրէպից կարած չամչիկը։ Նա խմում է մի թաս սուրճ և կուլէ տալիս կոկորդը մաքրելու համար—մի ձու։ Վերջապէս նա կառք է նստում իր ընկերուհու, տիկին Արդօ'ի հետ՝ դատաստանական ատեան գնալու համար։ Կամրջին մօտենալիս նա հեռուից տեսաւ մեղադրեալին ուժեղ պահակի հսկողութեամբ. նրան թուաց թէ ինքը ուշաթափւում է...

Դահլիճում հաւաքուած էր ամբոխը։ Վիկտուարը հասաւ իրան ցոյց տուած տեղը. նրա սիրտը բաբախում էր, կոկորդը չորացել էր։ Այնտեղ մի փոքրիկ սեղան կար, վերան թուղթ, թանաք և գրիչ։ Ներկայ եղողները հրում էին միմեանց տեսնելու համար այդ փոքրիկ, սպիտակ հագնուած կնոջը, որը պաշտպանների նստարանի կողմն էր անցնում։ Մշտական յաճախորդները միմեանց մէջ նկատողութիւններ էին անում՝

—Հաղորդուողի նման է.

—Ինչպէս կարմիր աչքեր ունի.

—Երևի շատ է լաց եղել...

Նա լաց չէր եղել, նա այրւում էր ջերմախտով բռնուածի պէս։ Ամենից աւելի նա վախենում էր այն բոպէից, երբ փոքրիկ դուռը պէտք է բացուէր և ներս մտնէր պահակներով շրջապատուած իր ամուսինը։ Նրա մօտ նստած տիկին Արդոն նրան այդ տեսարանին պատրաստելու նպատակով երկու անգամ շշնջաց՝

—Քաջութիւն. ես լսում եմ զինուորների ձայնը։

Վիկտուարը կարծում էր, թէ կուշաթափուի, չի կարողանայ տանել այդ տեսարանը։ Այնուամենայնիւ նա զսպեց իր յուզմունքը և որովհետև մեղադրեալը դեռ չէր երևացել՝ նա միջոց ունեցաւ ուշքի գալու։

Ահա վերջապէս և նա... Սարսափելի աղմուկ է. նրան շրջապատել են քսան պահապան-զինուորներ, որոնցից երկուսը բռնած են նրա ձեռներից։ Նրան ստիպեցին նստել,

ուղիղ դատաւորների դիմացը, աթոռի վրայ. երեք քայլ հեռաւորութեամբ նստած է նրա կինը։ Նա աչքերով փնտրում է կնոջը և տեսնելուն պէս ժպտում է նրան և փոխադարձ ժպիտ է ստանում։ Դալիս են դատաւորները։ Նրանք եօթ հոգի են, բոլորն էլ նշանագգեստներով, երկայն բեխերով, յատակին քսքսուող սրերով։ Նրանք նստում են և գեներալ Կատօլը նշան է անում, որ լռեն։

Քննութիւնը սկսւում է։ Վիլլիերուէն պատասխանում է հանգիստ. զեկուցանողը կարդում է իր եզրակացութիւնը։ Դատաւորներից մէկը դիմում է քարտուղարին՝

—Այս թշուառ արարածը անկարող է ինքն իրան պաշտպանել. ես չեմ տեսնում նրա փաստաբանին։

Քարտուղարը ցոյց է տալիս Վիկտուարի վերայ՝

—Ահա նա.

—Մթթէ,—շարունակում է դատաւորը, այնքան ոյժ կունենայ արդեօք։

Աւաղ. Վիկտուարն ինքն էլ չգիտէր այդ. նրա սիրտը բաբախում էր։ Վախից նա աղօթում էր, աղօթում էր ինքն իրեն. նա աշխատում էր հաւաքել ոյժերը. չմտածել...

Ցանկարծ լսեց, որ իր մասին են խօսում։

—Ո՞ւր է քո փաստաբանը—հարցրեց մեղադրեալին նախագահը.

—Իմ փաստաբանը կինս է։

Այն ժամանակ Կադօլը, դառնալով, հարցնում է իր սիրտ սառեցնող ձայնով.

—Ասելու բան ունի՞ք.

—Ունիմ—ասում է Վիկտուարը կանգնելով և վերցնելով իր թերթիկները ու ապա սկսում է՝

«Քաղաքացիք դատաւորներ»...

Առանց շփոթուելու նա՝ նախ ներողութիւն է խնդրում իր համարձակութեան համար. յետոյ՝ դառնալով խնդրին նա յայտնում է, որ իր ամուսինը երբէք տարագրուած չէ, որ նա հիւանդ է եղել և երկար ժամանակ պահոտուել է Օրլէանում։ Յետոյ նա շօշափում է իրաւական

խնդիրները, կարծիք է յայտնում օրէնքների մասին, դէպքի ժամանակն է որոշում... Շատ կարելի է, որ աւելի նայում էին նրա վրայ, քան լսում էին նրա ճառը։ Այնպիսի մի լռութիւն էր տիրում, որ լիփ-լիքը դահլիճը կարծես դատարկ լինէր։

Նա չէր վստահանում հեռացնել թերթիկներից իր աչքերը, վախենալով դատաւորների հայեացքներում կարդալ անգութ խստութիւն կամ նախավճիռ. վախենալով յուզուելուց՝ նա չէր նայում և ամուսնու վերայ։ Միայն վերջացնելով օրէնքների յօդուածների խնդիրը, նա համարձակւում է բարձրացնել աչքերը...

Նախագահի այտերից խոշոր արցունքներ էին թափում. նրա բոլոր ընկերները նստած էին գլխիկոր, ինչպէս նստած են լինում խոր զգացուած մարդիկ. նրանցից մէկը բռունցքներով իր աչքերն էր սրբում։

Այդ րոպէին ինքը Վիկտուարն էլ քիչ էր մնում, որ լաց լինէր, բայց ինքն իրան զսպեց և անցաւ ճառի վերջաբանին՝

«Դուք ծնողներ և ամուսիններ էք և ձեզնից ոչ ոք անզգայ չէ դէպի բնութեան ձայնը։ Դուք չէք կամենայ, որ ոչնչանայ մի համերաշխ ընտանիք, որ քակուին ամենասերտ սիրոյ կապերը, որբանան երեխաները... առանց որ դրանից մի օգուտ ստանայ հայրենիքը։ Դուք ճշմարտասէր էք և չէք ցանկանայ մի անմեղ զոհ պատժել։ Ձեզ ծանօթ են անբաղդութեան իրաւունքները, որ նոյնչափ սուրբ են, որչափ և առաքինութեան իրաւունքները։ Եւ որովհետև դուք ինձ թոյլ էք տուել պաշտպանելու իմ ամուսնուն—նա կարող չէ մահուան դատապարտուել։

Նա լռեց։ Նրա պաշտպանողական ճառը տևեց քառասուն և երկու րոպէ։ Ոչ մի ծափ, ոչ մի խրախոյս. դահլիճը լուռ էր՝ շարունակում էր տիրել դառն և ծանր լռութիւն։ Նախագահն անգամ գլխիկոր—չէր վստահանում բերան բաց անելու. միայն նրա այտերը դողում

էին, իբրև ապացոյց ներքին յուզմունքի։ Վերջապէս նա զսպեց իրան և դարձաւ մեղադրեալին՝

—Ինչ կարող էք աւելացնել Ձեր պաշտպանի ճառին. և բացասական պատասխան ստանալով, շարունակեց՝— ուրեմն կվերադառնաք բանտ. այդպէս է կարգը։

Եւ ահա Վիլլիբուէն վեր կացաւ տեղից, գլուխ տուեց դատաւորներին, մօտեցաւ կնոջը և տարածեց իր ձեռնեբը։ Ամբոխը չդիմացաւ՝ գուցէ սա երկու սիրող սրտերի վերջին հրաժեշտն էր. միթէ՞ կարող է նրանց ընդմիշտ բաժանել միմեանցից... Վիկտուարը պինդ գրկեց իր ամուսնուն և ջղային կերպով հառաչեց։

Լալիս էր և ամբոխը. պահնորդներն անգամ շուռ էին տուել երեսները՝ նրանց աչքերում արցունք էր երևացել։

Այնուամենայնիւ մեղադրեալին տարան։

Դատաւորները հեռացան խորհրդակցելու։ Նրանց խորհրդակցութիւնը կէս ժամ տևեց։ Կէս ժամ Վիկտուարը յուզմունքի մէջ էր՝ հասնել էր արդեօք նա իր նպատակին. ընդունա՞կ են արդեօք նրանք արդարացնելու նրան. ինչ պիտի անէ, երբ սարսափելի վճիռը լսէ. նա մտադիր էր հաւաքել ժողովուրդ և փողոցում կրկին արտասանել իր պաշտպանողական ճառը։ Յանկարծ մէկը նրա ականջին մօտ արտասանեց՝

—Արդարացրին։

Այդ քարտուղարն էր, որը դահլիճ վերադարձող դատաւորների առաջից էր գալիս։

Նախագահը բարձր ձայնով կարդաց՝

«Ի նկատի առնելով... ի նկատի առնելով... միաձայն անմեղ է ճանաչուած»։

Ուրիշ ոչ մի բան կարելի չեղաւ լսելու՝ բարձրացաւ հրճուանքի և ծափահարութիւնների կատարեալ որոտ՝

—Կեցցէ, կեցցէ... հիանալի է...

Գենեբալը սպառնալիքով բարձրացաւ տեղից.

—Այստեղ թատրոն չէ. դուք իրաւունք չունէք ոչ հաւանութիւն տալ մեր վճիռներին և ոչ էլ կշտամբել նրանց։

Բայց նրա բարկացկոտ ձայնը դողդողում էր, բեխե-

ը շարժուում էին և նա մեղմօրէն աւելացրեց՝

—Իհարկէ, ես համաձայն եմ, որ այս բոլորը շատ սրտաշարժ է և կարող է սաստիկ յուզել։

Դահլիճում ներկայ եղողները կրկին լռեցին։ Վիկտուարը կանգնած դիմեց դատաւորներին՝

—Հաւատացէք, քաղաքացիք, ասաց նա պարզ կերպով, որ իմ շնորհակալութիւնը հաւասար է իմ երջանկութեանը։

Ամբոխը իսկոյն շրջապատեց նրան։ Վիկտուարն աշխատում է խոյս տալ աղմկալից ցոյցերից, բայց այժմ—որովհետև նիստը վերջացած էր—հիացումը և հրճուանքը կրկնապատկուել էին։

Լսւում են բացականչութիւններ՝

—Ուր է նա, չի երևում։

—Է՜հ. դուք նրան ծածկում էք.

—Հարկաւոր է նրան սեղանի վրայ կանգնեցնել, որպէսզի կարողանանք նրան լաւ մտիկ տալ։

Մի բանուոր, ձեռները մէջքին դրած մօտենում է Վիկտուարին և կրկնում՝

Ի՞նչ լաւ էք արել, սատանան տանի, ինչ լաւ. այ ղօչաղ կին ..

Դատաւորները իջնելով ամբիոնից՝ շնորհաւորում են նրան։

Նա մի ժամ սպասեց, մինչև որ քարտուղարը պատրաստեց վճռի պատճէնը և իրան յանձնեց։

Նա կառք նստեց։ Ամբոխը, որ խռնուել էր փողոցում, բարձրաձայն շնորհաւորում էր նրան։ Շատերը կառքի ետևից դիմեցին բանտ։ Թաղի բոլոր բնակիչները հաւաքուել էին բանտի փոքրիկ հրապարակի վրայ։

Եւ երբ նա յաղթական քայլերով դուրս եկաւ ազատած ամուսնու թևից բռնած՝ ցնծութեան աղաղակները թնդացրին օդը՝

—Ահա նրանք. կրկին միասին. երկար կեանք. բարի աջողում...

Ֆրանս. թարգմ. ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ

***

Լուռ երկնքում աստղերը հեզ
Կախ են ընկել պլպլում,
Մանուկ հրեշտանք առած կարծես
Ուրախ ժպտում ու ցոլում:

Խորհրդաւոր կէս գիշերին
Մայր երկիրը կուրծքը բաց
Ցոյց է տալիս այն աստղերին
Անթիւ վէրքեր ու հարուած։

Եւ երկնքի աստղերը վառ
Կորցնում են փայլ ու հրեշտանք,
Արտասուաթոր նայում են վար.
Երգում են վիշտ ու տանջանք...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

---

*
* *

Ամբոխի կուռքը ջախջախել կուզեմ,
Թռիչքիս առաջ լեռները սուզեմ
Մինչ խորքն անդունդի շէջս ինչպէս սլաք
Թռչեմ ու չափեմ ե՛ւ ծով, ե՛ւ ցամաք,

Թեւերս միշտ վե՞ր, գլուխս՝ հպարտ,
Ճեղքեմ ու անցնեմ ամպերը բարդ-բարդ,
Թող ինձնից պարտուած աշխարհի վրայ
Ցաղթութեան երգս ուժգին որոտայ...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ.

Տ. ԳՐԻԳՈՐ Ա. ՔԱՐԱՎԷԺ

79. Գրիգոր Տղայի մեռնելէն ետքը յաջորդին ընտրութիւնը մեծ խնդիրի պատճառ չեղաւ, որովհետև կարծես ընկալեալ օրէնք եղած էր թէ հարկաւ Պահլաւունեաց տունէն պէտք էր ըլլար Հայոց կաթողիկոսը։ Կային նոյն պահուն իբր կաթողիկոսացուք, նաև Գրիգոր Ապիրատ, որդի Շահանի, նախկին արքեպիսկոպոս Տարսոնի և յետոյ Կեսարիոյ, արդէն 71 տարեկան ծերունի մը, որ Գրիգոր Տղայի ընտրութեան ատեն ալ իբր ընտրելի նկատուած էր, և կ'ընտրուէր իսկ եթէ Շնորհալիին կտակը և Մլեհ իշխանի և Նուրէտտին սուլտանի պաշտպանութիւնը զօրացուցած չըլլային Վասիլի որդին։ Երկրորդ կաթողիկոսացուն էր Ներսէս Լամբրոնացի՝ արքեպիսկոպոս Տարսոնի, թոռն Շահանի, արդէն 40 տարեկան, մօր կողմէն Պահլաւունի, կաթողիկոսարանի գործերուն վարժ, ժիր և գործունեայ. և Լևոն իշխանի մտերիմ (Տղայ 215)։ Սակայն երկուքն ալ Արևելեայց առջև լաւ համբաւ և վստահութիւն չէին վայելեր, իրենց բուռն օտարասէր ձգտումներուն համար, ինչպէս որ յայտնապէս կ'ամբաստանուէին, և իրենք ալ չէին ծածկեր իրենց դիտումը, համոզուած ըլլալով թէ Լևոն ներքնապէս, թէ Հայոց եկեղեցին պիտի պայծառանայ, երբ նորա ինքնուրոյն դիրքը դադարի, և յունական կամ լատինական եկեղեցւոյն մօտենալով, անոնց պաշտպանութիւնը վայելէ։ Ամենուն ծանօթ էին Արևելեայց դիտումները, որք կրնային բաժանման կերպարանը ստանալ, եթէ երբէք նկատի չառնուէին. ուստի Լևոն բոլոր իւր իշխանական զօրութիւնը գործածեց, և կաթողիկոս օծել տուաւ Պահլաւունի Վասիլի թոռը, և Գրիգոր Տղայի քուերորդին, որ յառաջ Վահրամ կը կոչուէր, այլ եկեղեցականութեան մտնելով Գրիգոր անուն էր առած, և եղաւ Գրիգոր Ե։ Ոմանք զայն Տղայ, և ուրիշներ Մանուկ մականունով կը կոչեն, որովհետև կարի մանկահասակ կաթողիկոսացաւ։ Թէպէտ տարիքը ճշտիւ յիշուած չէ, այլ Գրիգոր Գ. Պահլաւունիէն մեծ եղած պէտք չըլլայ, որ աչքի զարնելու չափ անչափահաս կար-

ծուեցաւ։ Սովորաբար տրուած Քարավէժ կամ Գահավէժ մականունը, լոկ մահուան պարագայէն առնուած է, և իւր կենդանութեան գործածուած չէ։

80. Գրիգոր Քարավէժի կաթողիկոսութեան տևողութիւնը 16 ամիս կը հաշուի, և այդ կարճատև միջոցին մէջ հայրապետական գործունէութիւն ունեցած չէ, և ունենալ իսկ կարողացած չէ։ Ինքն մանուկ և անփորձ, այլ Արևելեայց ուղղութեան կողմնակից էր. և անոնց շնորհիւ ալ կաթողիկոսացած էր, հետևաբար իրեն հակառակորդ ունեցաւ Լամբրոնացին և բոլոր միութենականաց խումբը, որք իւր մահուընէ յետոյ ևս չդադարեցան մեղադրանօք խօսիլ անոր վրայ։ Հակառակորդներուն մէջ՝ Լամբրոնացիէն ետքը նշանաւորագոյն անձն էր Յովհաննէս արքեպիսկոպոս Սսոյ, Լամբրոնացւոց ցեղէն, և Ներսէս Լամբրոնացիի Կոստանդին հօրեղբօր որդին, որ յետոյ կաթողիկոս եղաւ և Մեծաբարոյ մականունով ճանչցուած է։ Ուրիշ նշանաւոր հակառակորդ մըն էր Անանիա եպիսկոպոս Սեբաստիոյ՝ Գետադարձի ցեղէն, որ օրինաւոր կաթողիկոսութեան չկարենալով հասնիլ, հակառակաթոռ մը եղաւ Յովհաննէսի դէմ։ Երկու կողմերուն մէջ միջասահման և անկախ դիրք մը կ'ուզէր պահել Լևոն։ Արտաքին յարաբերութեանց ջերմ կուսակից լինելով կը պաշտպանէր Լամբրոնացին և համախոհները, Հայ եկեղեցւոյ ինքնօրէնութեան յարգն ալ ճանչնալով, չէր ուզէր կոտրել Տուտէորդին և համախոհները, և երբեմն ասոնց և երբեմն անոնց կամքը հաճելով, երկու կողմերն ալ շահել կ'աշխատէր։ Գրիգոր Վահրամը կաթողիկոս օծել տալով Արևելեայները կը գոհացնէր, Ներսէսն ու Յովհաննէսը իրեն խորհրդական պահելով Կիլիկեցիները կը հաճեցնէր։ Իսկ մանուկ կաթողիկոսը ինքնիրեն գործել կարող չէր, Արևելեայները հեռու էին, և Կիլիկեցիները իրեն խորհրդակից ու գործակից չէին։ Ահա իւր կաթողիկոսութեան անգործ անցնելուն իսկական պատճառը։

81. Վերջի վերջոյ մանուկ կաթողիկոսին հակառակորդները զօրացան, և վրան ամբաստանութիւններ կուտեցին Լևոնի առջև, բայց դժուար է ճշտել թէ ինչ էին անոր վերագրեալ յանցանքները։ Սմբատ կը գրէ թէ ամբաստանուեցաւ իբր թէ ինքնիշխանութեամբ ունէր զհայրապետութիւնն, և թէ ոչ ունի իմաստութիւն վարել զհայրապետութիւնն (Սմբ. 106), այլ ասոնք ծանրակշիռ պարագաներ չէին կրնար ըլլալ, և պէտք է ենթադրել թէ աւելի ծանր ամբաստանութիւններ եղան մանուկ կաթողիկոսին դէմ, և կրկնուեցան երեք չորս անգամ, մինչև որ Լևոն ալ շարժուեցաւ։ Յովհաննէս Մեծաբարոյ Լևոնի հրամանով Հռոմկլայ գնաց, առնել ըստ իմաստութեան իւրում (Սմբ. 107), իսկ անոր ըրածը եղաւ բարեկա-

մութիւն կեղծելով կաթողիկոսը խաբել. և յանկարծակի կերպով ձերբակալել զայն իւր դղեակին մէջ։ Հռոմկլայեցիք ոտք ելան ու զէնք առին, արիւն թափուեցաւ և քաղաքը թալանուեցաւ, այլ Յովհաննէսի մարդիկը զօրացան, և Գրիգոր Քարավէժ կաթողիկոս շղթայակապ Լևոնի բերուեցաւ, և իշխանի հրամանով Կոպիտարի բերդին մէջ բանտարկուեցաւ, մինչև որ եպիսկոպոսաց ժողով գումարուի, կաթողիկոսին դատը քննուի և պարտուպատշաճը որոշուի։ Այստեղ ալ արժան է դիտել տալ կաթողիկոսներն ալ դատաստանի ենթարկելու օրէնքը։ Գումարուած ժողովին գլխաւորներն էին Ներսէս և Յովհաննէս և Անանիա կաթողիկոսին ոխերիմ հակառակորդները, թէպէտ Լամբրոնացին կ'ըսէ թէ չորս անգամ հրաժարեցաւ և միայն հինգերորդ հրամանին վրայ ժողովին գնաց (Տղայ 224)։ Այլ ինչ օգուտ, որ ինքն ալ չքաշուեր իւր գործունեայ մասնակցութիւնը խոստովանել։ Ժողովը հարկաւ տեղի ունեցաւ կեդրոնական քաղաքի մը մէջ, այլ ճշտուած չէ թէ Սիսի կամ Տարսոնի մէջ, բայց հաւանականագոյն կերևի Սիսը։

82. Լամբրոնացին փաքրիշատէ ակնարկութիւններ ունի այս ժողովին գործերուն վրայ, այլ թէ ինչ էր կաթողիկոսին վերագրուած յանցանքը զայն չյիշեր, և կ'երևի թէ ժողովն ալ չէ կըրցած ճշտել։ Լամբրոնացին կը մեղադրէ «Արևելեայները որ հեռաւոր լինելով և կաթողիկոսը լաւ չճանչնալով՝ մանկահասակ կաթողիկոս մը ունենալ ուզեցին, որպէս զի անոր հովանաւորութեամբ անվրդով հետևին գինեմոլութեան, որովայնապարարութեան և այլ մոլութեանց։ Սակայն եթէ Զորոգետացի վանականներ միայն անկարգ կեանք վարելու փափագ ունէին, իրենց համար դիւրին էր նոյնն ընել ով ալ ըլլար հեռաւոր կաթողիկոսը։ Իրենց ժողովին համար կ'ըսէ Լամբրոնացին թէ իրենք առընթեր, այսինքն մօտ էին և տեղեակ ամեն բանի, և արդար իրաւամբ զմանուկն նահանջեցին և չարակնեցին իշխանութեան (Տղայ. 227)։ Կաթողիկոսը իւր արգելանաց միջոցին կրցած է Արևելեայներուն թուղթ գրել և գործերուն վիճակը ծանուցանել, և Արևելեայք ալ այն գրութենէն շարժուած կաթողիկոսին պաշտպանութեան ձեռնարկած են յատուկ պատգամաւորութիւն հանելով, ինչպէս անարգանօք կը յիշէ Լամբրոնացին. Զմանկան անհանձարի զիր այնպիսի մանկանց պատգամաւորութեամբ պատուեցին (Տղայ 227)։ Այդպիսի առթի մէջ, և մանաւանդ մանկահասակ անձի մը վրայ դրուելիք ամբաստանութիւնը՝ իւր անկարգ կենցաղը կրնար ըլլալ, սակայն կը դիտեմք թէ ոչ ուրեք այսպիսի մը կայ, և այս պէտք է վճռական համարուի երիտասարդ կաթողիկոսին պաշտպանութեանը համար։ Կը մնայ իւր անփորձութիւնը կաթողիկոսութեան բարձր պաշ-

տօնին հանդէպ. բայց այն ալ յայտնի էր, և պէտք չէր զարմանային զինքն օծող եպիսկոպոսները, ևս առաւել՝ պէտք չէր ամբաստանէին և դատէին։ Վստահութեամբ կրնանք ըսել թէ բոլոր գայրոյթին պատճառը կաթողիկոսին հակոտարասէր ուղղութիւնն էր և Արևելեայներուն հետ համամտութիւնը, որ ծանր կուգար Լամբրոնացիին և իրենններուն, քանի որ չէին կրցած զայն իրենց գործիք ընել, և կը բարկանային որ չինազանդէր ամենեցուն (Սմբ. 106)։ Իբր այն թէ յիշեալ եպիսկոպոսներուն իրաւունքն ըլլար հրամայել, և կաթողիկոսին պարտքը հնազանդել, մանաւանդ Լամբրոնացիին իրաւունքը, որ մինչև վերջ կը յիշէ և Լևոնի ալ կը յիշեցնէ, թէ ինքն կաթողիկոս ընտրուած պիտի ըլլար, եթէ Արևելեայներուն համախոհ եղած ըլլար (Տղայ 215)։

83. Երիտասարդ կաթողիկոսը Կոպիտաւի բերդին մէջ իմացաւ թէ զինքն պաշտօնանկ ընել որոշուած է. միւս կողմէն Հռոմկլայեցիք իրեն զգացուցին, որ եթէ բերդէն փախչի, իրենք պատրաստեն զինքն Հռոմկլայի մէջ պաշտպանել զինու զօրութեամբ, վասնզի, ինչպէս ըսած եմք, Հռոմկլայ կաթողիկոսներուն հայրապետանոցը և իշխանական դղեակն էր միանգամայն։ Արևելեայներուն համախոհութիւնն ալ պիտի ծառայէր իւր կաթողիկոսութիւնը զօրացնելու։ Գրիգոր հաւանեցաւ այդ խորհուրդին, որ մեղադրելի ալ չէ երիտասարդ անձի մը համար, կտաւները պատռելով չուան կազմեց, և անոնցմով բերդին պատուհանէն կախուելով փախչել կ՚ուզէր, այլ կտաւը՝ խզեցաւ և բերդից ներքև եղողքարաժայռերուն վրայ ինկաւ, և բարձաւ մեռեալ (1194)։ Այս է սովորական պատմութիւնը, և ասկէ է Քարավէժ մականունին ծագումը։ Այլ Կիրակոս պատմիչ կ՚ըսէ, թէ ըստ այլոց կաթողիկոսի հակառակորդներէն Յովհաննէս և Անանիա գործակցութեամբ ուրիշ վեց եպիսկոպոսաց, ընկեցին զնա, որք ակն ունէին ժառանգել զաթոռն, և կը յարէ. ԶՁշմարիտն ՅԻայն ծածկագէտն Աստուած գիտէ (Կիր. 70)։ Բայց եթէ կաթողիկոսին հակառակորդներ իրենց ձեռքով չսպաննեցին երիտասարդ կաթողիկոսը, գոնէ նորա մահուան պատճառ եղան իրենց թշնամական և բռնաւորական ընթացքով և դժբաղդ երիտասարդը յուսահատութեան մղելով։ Այդպէս վերջացաւ Գրիգոր Ե. կաթողիկոսի կեանքը, ուրիշ յիշատակ մը չթողլով իւր ետեւէն, բայց եթէ հակառակութեանց շնորհիւ կաթողիկոսանալը, և հակառակութեանց երեսէն մեռնելը, առանց հակառակութեանց գլուխ լինելու, այլ միայն ուրիշներու հակառակութեանց զոհ երթալով, թէ կաթողիկոսանալուն և թէ կաթողիկոսութիւնը դադարելուն մէջ։ Իւր հակառակորդներուն գլուխն էր Լամբրոնացին, որ իւր գրութեանց մէջ ալ անխնայ կը հարուածէ զայն, նոյն

ինքն խղճալի մահուանէն ետքը, և այդ գրութեանց տպաւորութիւնը կը մնայ տակաւին, ձախող լոյս մը սփռելով անոր անուան շուրջը, թէպէտ, ինչպէս տեսանք, իրական և դրական ամբաստանութիւն մը չծանրանար Գրիգորի կեանքին և գործերուն վրայ, իսկ իւր խակութեանն ալ աւելի պարտաւոր են անոնք, որք զինքն կաթողիկոս ընելու գործակցեցան։

Տ. ԳՐԻԳՈՐ Զ. ԱՊԻՐԱՏ

84. Լամբրոնացին և իրենները, եթէ չսպաննեցին, գոնէ բարեբաղդ պարագայով մը ազատեցան Քարավէժին անձէն, որ իբր օծեալ կաթողիկոս արգելք մընէր իրենց նպատակին։ Այն ժողովը, որ Քարավէժը կը դատէր և անոր պաշտօնանկութիւնը կը պատրաստէր, հարկ չունեցաւ վճիռ արձակել, թէև Լամբրոնացին կ'ըսէ թէ արդար իրաւամբ զմանուկն նահանջեցին (Տղայ 227)։ Գոնէ հարկ չունեցան պաշտօնանկութիւնը գործադրել. այլ իսկոյն անցան նոր կաթողիկոսի ընտրութեան։ Պահլաւունիներէն կաթողիկոս ունենալու սկզբամբ և մրցակիցներու անհամաձայնութեան բնական հետեւութեամբ, ոչ Ներսէս, ոչ Յովհաննէս և ոչ Անանիա կաթողիկոսութեան պիտի չկոչուէին, և այս պատճառով ընտրուեցաւ Գրիգոր արքեպիսկոպոս Կեսարիոյ, Պահլաւունի տոհմէն, Շահան զօրավարին որդին, Պահլաւունի և Շնորհալի կաթողիկոսներուն եղբօրորդին, Տղայի հօրեղբօրորդին, և Լամբրոնացիին մօրեղբայրը, ամօք ծանրացեալ և արդէն տկարացեալ 72 տարեկան ծերունի մը. Լամբրոնացիին հետ ըստ ամենայնի կապուած և անոր ազդեցութեան ենթարկուած անձ մը, որով Ապիրատին կաթողիկոսութիւնը կերպով մը Լամբրոնացիի կաթողիկոսութիւն ըսել էր։ Ապիրատ մականունը նոր կաթողիկոսին առաջին աշխարհական անունն է, որ կիրառութենէ խափանուած չէր, և իբր մակդիր անուն գործածուած էր, Պահլաւունիներուն ժառանգական դարձած Գրիգոր անունին հետ։

85. Արևելեայք լաւ հասկացան Ապիրատին ընտրութեան նշանակութիւնը, և այս պատճառով անդստին սկիզբէն չուզեցին ճանչնալ ասոր կաթողիկոսութիւնը։ Այդ միջոցին Քարավէժին պաշտօնանկութիւնը դիւրացնելու համար, ժողովը գիր մը ուղղած էր Արևելեայներուն, գիր մըն ալ Լևոնի կողմէն գրուած էր և եպիսկոպոս մըն ալ պատգամաւոր ղրկուած էր, զոր արժանաւոր եպիսկոպոս կ'անուանէ Լամբրոնացին (Տղայ 227), այլ ով ըլլալը չյիշեր։ Մինչ այս մինչ այն Քարավէժի մահը լսուեցաւ և Ապիրատի կաթողիկոսութիւնը հաչակուեցաւ. Արևելեայք բացէբաց մերժեցին

զայն. և կաթողիկոսական աթոռին ուղղութիւնը փոխելու համար գրեցին Լևոնին, որ փոխանակ Պահլաւունիներէն կամ անոնց մերձաւորներէն մէկը ընտրելու, կաթողիկոսութեան աթոռը բարձրացնէ Անւոյ Բարսեղ արքեպիսկոպոսը. և որովհետև նոր ուղղութեան գլխաւոր դրդիչը Տարսոնի Ներսէս արքեպիսկոպոսն էր, յայտնապէս ամբաստանեցին զայն իբր օտարասէր և օտարացեալ, ազգային եկեղեցւոյ կանոնները և աւանդութիւնները և ծէսերը անարգող. և ինքնագլուխ նորութիւններ մուծանող. և խնդրեցին որ իսպառ հեռացուի կաթողիկոսարանին գործերէն և իշխանին խորհրդակցութիւնէն։ Միանգամայն իրենց գիրերը տանելու և միտքերնին աւելի լաւ բացադրելու համար վարդապետ մն ալ ուղարկեցին, որուն անունը անծանօթ մնացած է. իսկ Լամբրոնացին կը գրէ. զմեզ յանդուգն բերանով գրպարտեցին հրեշտակութեամբ միոյ մոնոզոնի, որոյ և անունն Աստուծոյ էր գիտելի (Տղայ 228)։ Լևոն որ չէր ուզեր երկու կողմերն ալ կոտրել, Ապիրատին կաթողիկոսութիւնը պաշտպանեց և Անեցին կաթողիկոսացնել չուզեց, թէպէտ Արևելեայք կանխած էին և զայն կաթողիկոս հռչակած էին։ Միայն Լամբրոնացիին եռանդը չափաւորելու համար, Հեթումի ձեռօք ազդարարութիւն և հրաման ուղղեց, որպէսզի միութենական գայթակղեցուցիչ ճիգերէ ետ կենայ, և կաթողիկոսարանի և պալատի գործերէն քաշուի, զոնէ առժամեայ և առերևոյթ կերպով, զի ինչպէս յետագայ եղելութիւններէն ալ պիտի երևնայ, Լևոնի և Լամբրոնացիի ներքին մտերմութիւնը երբեք չդադրեցաւ։

86. Բայց այսչափ ալ ծանր եկաւ Լամբրոնացիին, որ այնչափ բուռն եռանդով միութենական գործին կը հետեւէր, և նոյնչափ և աւելի բուռն կերպով Արևելեայներուն դէմ հակառակութիւն կը տածէր, և մասնաւորապէս անոնց պետին Տուտէորդի վարդապետին դէմ։ Այդ առթիւ գրեց Լևոնին այն նամակը որ մեզի ալ հասած է, և որ աւելի թշնամանողական է քան պաշտպանողական, թէպէտ նպատակը իւր պաշտպանութիւնն է եղած։ Նամակին թուականն է Գունդ Հեռիի կամ Հենրիկոս կոմսին պատգամաւորութեամբ Տարսոն եկած տարին (Տղայ 231), որ ըստ Սմբատայ (Սմբ. 105) կ'իյնայ Ապիրատի ընտրութեան յաջորդ տարին (1195)։ Լամբրոնացին այդ նամակով ոչ միայն Զորոյգետացիները կը թշնամանէ և կը նախատէ, այլ և իրենց ընտրած Անեցին, և վախճանեալ Քարավէժի յիշատակը, և նոյնիսկ Լևոն իշխանը, որ զիջողութեամբ կը վարուէր Արևելեայց հետ։ Իւր եղբօր Հեթում իշխանի ձեռօք ընդունած ազդարարութիւնը յիշելով կ'ըսէ, թէ Լևոն դատած է զինքն իբր անկարգ և անօգուտ,

Եւ իւր ուղղութիւնը իբր երանեալ հարց շաւիղէն օտար, և թէ այս կերպով իրեն հայրապետութեան արժանի չլինելը հասկացուցած, և նոյն ինքն Լեւոնի անունին արատ բերելը իմացուցած, և եթէ շարունակէ, ունեցած պատիւն ալ կորսնցնելու վտանգը զգացուցած, Լամբրոնացին բացէբաց կը մերժէ սխալուած լինելու ենթադրութիւնը, և ինքզինքը փարիսեցիներէ զրպարտուած Յիսուսին հետ կը բաղդատէ։ Իւր վրայ խօսուած ամբաստանութիւններուն անցնելով կը յիշէ նախ քահանայական մետաքսեայ զգեստով և բացաւ գլխով և առաջի ժողովրդեան պատարագելը, և կը ծաղրէ Հաղբատացւոց վիղարով և փիլոնով և վարագոյրի ներքև պատարագելը (Տղայ 218). յետոյ կը յիշէ ընդամենայն քրիստոնեայս անխտիր հաղորդելը, և կը պարծենայ թէ իրեն համար, է Հայն որպէս զԼատինացին, և Լատինացին որպէս զՀելլենացին, և Հելլենացին որպէս զԵգիպտացին, և Եգիպտացին որպէս զասորին. և կը յարէ թէ ընդ իրաքանչիւրսն որ միմեանց Թշնամիք են, խառնիմք (Տղայ 220)։ Յայդմ Լամբրոնացին հակասութեան մէջ կ'իյնար, եթէ մի կամ միւս կողմ կը յարէր ըստ բերման, և եթէ զիրար նզովողները հաւասարապէս ուղղափառ կը կարծէր, բոլոր ըսածնին ընդունելով։ Իւր միութենական ձգտումները զինքը՝ կը յորդորէին անխտիր յոյնին կամ լատինին յարելու, անոնց ըսածներուն համակերպելով. մինչ մեզի ընդունելի և մեր եկեղեցւոյն հոգւոյն համաձայն է որ օտար եկեղեցիներու հետ հաղորդութեան մէջ լինինք, երբ նոքա մեր ուղղութեան մօտենան, և ոչ թէ մեք մօտենանք անոնց ուղղութեան և կերպով մը մուրանք որ մեզ իրենց հաղորդութեան ընդունեն, և ընդունուելու համար պայմաններ առաջարկեն, և մեք պարտաւորուինք այն պայմաններուն հպատակիլ։

87. Լամբրոնացւոյն այդ նամակը ժամանակին հոգւոյն և միութենական խնդրոյն ճշգրիտ գաղափարը տալուն, քանի մը մանր քաղուածներ ևս ընել աւելորդ չեմք սեպեր։ Լամբրոնացին իւր պաշտպանութեան համար կը յիշէ իրեն համախոհ անձերը, և զանոնք կը դիմադրէ Զորոյգետացւոց։ Իւր բարեկամներն են, Վասպուրականէն Ստեփանոս եպիսկոպոս Տիրացու մականուանեալ և Գէորգ և Ստեփանոս և Քրիստոստուր և Տիմոթէոս ճշդնաւոր վարդապետք Վարագայ, Տարոնէն Եսայի եպիսկոպոս և Թէոդորոս վարժապետ, Եկեղեցեաց գաւառէն Սեպուհոյ միաբանք. ասոնցմէ զատ Խաչենոյ իշխանք որ իւր աշակերտ Յովսէփը Աղուանից կաթողիկոս էին ընտրած, Անտիոքայ լատիններ և յոյներ որ զինքն իբր նոր Պողոս Տարսոնացի բարեհամբաւեր են, Ասորւոց պատրիարքը որ իրեն պատուաւոր թուղթ

էր գրեր, և ինքն Լևոն որ Գունդ Հեռիի առջև Ներսէսն էր գո-
վեր։ Ասոնց վրայ կ'աւելցնէ Գրիգոր Տղայ և Ներկայ Գրիգոր Ա-
պիրատ կաթողիկոսները։ Ասոնց դէմ Զորոյգետացիները դնելով-
կը յիշէ Տուտէորդին և Քոբարեցին իբրև երկուս արս որք իբրև ըզ-
շունս լիրբս հաջեն և Անեցին կը կոչէ արբեալ ի զուսանաց և յորովայ-
նամոլութենէ և յարբեցութենէ (Տղայ 229,232), կը պաշտպանէ եկեղեց-
ւոյ մէջ յունարէն աւետարան կարդացնելը (Տղայ 237), և կը
պնդէ որ եթէ Լևոն իւր պալատին մէջ կարող է օտարազգեաց
կերպով հագուիլ, օտար ազգաց պատուանունները գործածել, և
օտարազգիները իբր պաշտօնեայ պահել, ինքն ալ կարող է նոյնը
ընել եկեղեցւոյ մէջ։ Կը յիշէ ևս սատուածայայտնութեան
տօնի և երրորդ ամուսնութեան համար ամբաստանութիւններ,
այլ առանց մանրամասնելու։ Ապա կը խօսի ինչ ինչ սովորու-
թիւններու վրայ զորս Լատիններէն առնելով նորոգած է Տարսո-
նի մէջ, զորօրինակ, քահանայական զգեստով պատարագել, ճա-
շու ժամերը զատ զատ ըսել, խաղաղական ժամ ըսել եկեղեցւոյ
մէջ, կրօնաւոր օրհնել, աղքատաց հաստատուն կերակուր բաշխել,
և այլն (Տղայ 241)։ Ասոնց վրայ դարձեալ Տուտէորդիին դառ-
նալով, զոր յառաջ Թանձրապորտ էր կոչած (Տղայ 226), այժմ նորա
ուսումնական կարողութիւնն ալ անարգելով կ'ըսէ, թէ իբր զբուն
ի յետնոցն յիմ ձեռնասուն աշակերտացն չէ (Տղայ 243)։ Խօսքը ամփո-
փելով կ'ըսէ թէ Զորոյգետացի երկու երեք Խուղխ են գրեալ նախա-
տինք, ես գիրք մի բովանդակ եմ գրեալ զՀայոց ազգիս անկարգութիւնս որ
յետոյ մտեալ են (Տղայ 246)։ Կ'երևի թէ կ'ակնարկէ իւր պատարա-
գի մեկնութեան և եկեղեցական կարգաց ճառերուն՝ յորս ստէպ
օտարները կը բարձրացնէ և Հայերը կը նախատէ։ Սակայն իւր
գրած օտարներուն ներքին անկարգութիւնները, զորս նոյն իսկ
իրենց մատենագիրներ կ'ամբաստանեն, չյիշեր։ Օգտակար է հր-
բեմն օտարը գովելով իւրը յանդիմանել։ Բայց ոչ վրէժխնդրու-
թեան, այլ խրատաբանութեան հոգւով պէտք է կատարել զայն։

88. Լամբրոնացիին նամակին արդիւնքը որոշակի գրուած
չէ, այլ կ'երևի թէ մեծ ազդեցութիւն ալ չգործեց. զի ոչ մի կողմ
իւր ուղղութենէն չշեղեցաւ։ Լևոն սաստիկ սպառնալիքներ ընե-
լով Լամբրոնացիին՝ նորա եղբօր Հեթումի ձեռքով, կրկին նպատակ
ունէր. մէկմը Լամբրոնացիները զսպել որք ինքնագլուխ դիրք մը
կը պահէին, մէկ մըն ալ Արևելեայները շահել որք բաժնուիլ
կը սպառնային։ Ապա թէ ոչ Լևոնին համար Լամբրոնացի Ներ-
սէսէ աւելի յարմար գործիք մը չէր կրնար գտնուիլ, քանի որ
Լևոն Յոյներէ և Լատիններէ թագ ստանալու հետամուտ էր. և լաւ
գիտէր որ երկուքն ալ այդ շնորհը չէին ըներ, եթէ եկեղեցական

միութիւն ալ տեղի չունենար, ինչոր Լամբրոնացին կը պաշտպանէր։ Սակայն Լևոնի ուղղութիւնը սոսկ արտաքին էր, Լատինները կամ Յոյները խաբել, թագը ստանալ, և անով բոլոր հայ իշխաններու գլուխ լինել, և երբ զօրանայ այն ատեն իւր ազգային դիրքը պաշտպանել։ Իսկ Լամբրոնացին իբր եկեղեցական անձ, կեղծիք գործել չէր ուզեր, այլ սրտով ու հոգւով միաբանութիւնը հաստատել և զայն անխախտ պահել։ Անոր համար, համաձայն էր Լևոնի երբ կը պաշտպանէր, անհամաձայն էր երբ Լևոն առերեսս և անկատար միութեամբ կը գոհանար։ Լևոնի պէտք էին Արևելեայք, զի իբրև Հայոց թագաւոր կրնար օր մը իւր իշխանութիւնը մինչև այն կողմերը ընդարձակել, եթէ այնտեղ իրեն կապուած ազգայիններ ունենար։ Սակայն Արևելեայք ալ կէս առ կէս գործերու վստահութիւնին կորսնցուցած էին, և միանգամ ընդմիշտ Պահլաւունեաց տունէն զայթակղած էին։ Լամբրոնացին կասկածելի էր, Ապիրատ վստահութիւն չէր ազդեր, Անեցին Բարսեղ եթէ կաթողիկոսանար, կարող էր ազգային եկեղեցւոյն ինքնուրոյնութիւնը պահպանել։ Ուստի կը պահանջէին որ Անեցին կաթողիկոս ըլլայ, և իրենք զայն հռչակած լինելով, այլևս անկէ չբաժնուեցան, և այն ժամանակէ (1195) Արևելեայք Կիլիկեցւոց հետ յարաբերութիւններին խզեցին, և այնպէս մնացին մինչև որ յարաբերութիւնը վերանորոգուեցաւ Յովհաննէս Մեծաբարոյի ժամանակ Հայ Ուռպելեանց միջնորդութեամբ, Բարսեղ Անեցիի մեռնելէն ետքը։

89. Ապիրատ կաթողիկոսի ժամանակին նկարագիրը բոլորովին անհաստատ կերպարանմը առաւ ըստ եկեղեցականին, վասն զի Հայեր ամէն կողմեր ձգտելով, կարծես թէ և ոչ մի կողմ կը ընդունէր հակիլ իրօք և արդեամբ։ Սակայն արտաքնոց առջև կարևոր դիրք մը ունենալ կը կարծուէին, և Հայոց բարեկամութիւնը ամենէն բաղձացուած էր։ Ասորիք որք մինչև այն ատեն ազատ կաթողիկոսութիւն մըն էին, այս միջոցին Հայոց հովանաւորութեան ներքև մտան։ Ժամանակին Ասորւոց կաթողիկոսն էր Միքայէլ, այլ իրեն դէմ ելաւ Յովհաննէս, որ յառաջ կը կոչուէր Թէոդորոս Բարվեհերոն, և զօրացաւ Լևոնի օգնութեամբ, Հռոմկլայի մէջ հաստատուեցաւ, և քաղաքականապէս և եկեղեցականապէս Հայոց դերիշխանութիւնը ընդունեցաւ, և այսպէս շարունակուեցաւ այնուհետև։ Յոյներ աղէկ աչքով չէին նայեր Հայոց և Լատինաց մերձաւորութեան վրայ, և Ալեքսիս Անգեղոս, որ Իսահակ եղբայրը կուրացնելով անոր տեղը անցած էր (1195) ըսկսաւ սաստիկ կերպով Հայերը հալածել բոլոր իւր կայսերութեան մէջ, որուն մաս կը կազմէին տակաւին Կիլիկիոյ զանազան գա-

ւառները։ Բռնի կրկնամկրտութիւններ, կրկնաձեռնադրութիւններ, հալածանքներ և տանջանքներ այնչափ շատցան, որ Լևոն և Ապիրատ հարկ սեպեցին ուղղակի բանակցութեան մտնելով յարաբերութիւնները քաղցրացնել և ազգայնոց հանգստութիւնը ապահովել։ Բանակցութեանց համար պատգամաւոր ընտրուեցաւ Ներսէս Լամբրոնացի, Յոյներու հին բարեկամ մը, որ միաբանասէր ձգտումներով լեցուն Կոստանդնուպոլիս գնաց (1196), և յուսաց թէ կարող պիտի լինի յաջող ելք մը ունենալ։ Սմբատ կը գրէ թէ Լամբրոնացին Կոստանդնապոլսոյ մէջ բանակցութիւններ ունեցաւ Յունաց իմաստուններուն հետ և հաւանեցոյց զնոսա խելքն իւրովք (Սմբ. 109), այլ ուրիշ տեղեկութիւններ կը ցուցնեն թէ ապարդիւն մնացին Լամբրոնացիին ջանքերը, զի Յոյներ ևաքանզևս բարձրացուցած էին իրենց առաջարկները և նախկին ինն գլուխները առաւելօք կը պահանջէին։ Լամբրոնացին ձեռնունայն դառնալով սաստիկ ցաւ զգաց Յունաց վրայ, և ձախող փորձառութենէն զգացուած չափաւորեց իւր սրտաբաց ձգտումները, և իմացաւ թէ այն ուղղութիւնը և այն աստուածային սէրը, որ պէտք է նախագահէ ամեն եկեղեցական գործերու, յարգուած չէ հաւասարապէս ամեն եկեղեցիներէ։ Ինքն իսկ կը գրէ թէ գտաւ Յոյները հրէական կամօք ընդ նիւթս կապեալ, և խոստովանի. Ստրջացեալ ի հոգևոր կամս մեր դարձաք յիմաստախոհ յուսոյ սոցա ամօթով (Սիսուան 465)։ Այն ատեն չզղջաց թերևս իւր եղբայրակից վարդապետներուն դէմ ըրած բուռն յարձակումներուն վրայ։ Այդ ժամանակէ ետքը Լամբրոնացիին գրութեանց մէջ չեմք տեսներ այլ ևս իւր առաջին ժամանակաց բուռն լեզուն։

90. Սոյն միջոցին կ'իյնայ նոր ծռազատիկ մը (1197), Հայոց և Յունաց տոմարական տարբերութեան պատճառով, որուն նախընթացը տեղի ունեցեր էր Վկայասէրի օրով (1102)։ Հայոց ուրիշ եկեղեցիներէ ունեցած տարբերութեանց ամէնէն աննշանակն է այս, որ ոչ ծիսական և ոչ դաւանական կարևորութիւն ունի, այլ պարզապէս տոմարական հաշիւներու տարբերութենէ կը ծագի, որուն ծագումն ալ դարձեալ յունական էր։ Սաղէքսանդրացւոյն և Իրիոն Բիւզանդացւոյն դրութիւններէն առջև եկած։ Միութենական ձգտմանց մէջ առաջին կէտերէն մին պէտք էր լինէր, որ Հայերը չբաժնուէին Լատիններէն և Յոյներէն Քրիստոսի յարութեան յիշատակին օրուան համար. և մանաւանդ սոյն միջոցին՝ Լևոնի և Լամբրոնացիի դիտումներուն շատ համաձայն պիտի լինէր որ Հայեր հրաժարէին իրենց տարբերեալ զատիկէն, բայց բոլորովին հակառակն եղաւ։ Կիլիկիա ամբողջ իւր տարբեր զատիկը տօնեց ուրիշներէն շաբաթ մը ետքը, և զայն Յունաց և

Լատինաց և բոլոր օտարաց դէմ պաշտպանեց։ Դիտելի է որ Լամբրոնացին կը գտնուէր Կոստանդնոպոլիս, իւր ապարդիւն պատգամաւորութեան մէջ, և սիրտ չունեցաւ նոյն միջոցին Հայոց կողմէ զիջողութիւններ թելադրել։ Ծռազատիկի պատճառով շփոթութիւններ տեղի ունեցան Վրաց հետ ալ, որէ ըսել Արևելեայ Հայոց սահմաններուն մէջ, ուր Վրացիք հայ եկեղեցի մը այրեցին 40 անձերով, այլ պարտաւորուեցան եկեղեցւոյն համար 100,000 և 40 անձերուն համար 40,000 տարեկան տուգանք վճարել։ Երուսաղէմի մէջ ալ նոյն շփոթութիւններ պատահեցան, այլ Հայեր կրցան ամեն կողմ իրենց սովորութիւնը պաշտպանել։

91. Այդ գործին ժամանակակից է Լամբրոնացիին թուղթը առ Ոսկան Անտիոքացի, արգելական ճգնաւոր, որ բերան եղած էր Անտիոքի յոյն եկեղեցականաց, որք Հայ եկեղեցւոյն քահանայութիւնը առոչինչ համարելով, կրկին կը պաշտէին Հայոց վրայ թէ մկրտութեան և թէ ձեռնադրութեան խորհուրդները, ինչպէս ուրիշ տեղ ալ յիշած եմք։ Այսպիսիներուն պատճառները երեք էին. նախ որ Հայեր մի բնութիւն կ'ըսէին և Քաղկեդոնի ժողովը չէին ընդուներ, երկրորդ որ Հայոց կաթողիկոսները յոյներէն ձեռնադրութիւն չէին առնուր. երրորդ որ ս. Սահակ Պարթևի տեսիլքն ալ հաստատած էր հայոց քահանայապետութեան դադարումը։ Լամբրոնացին այդ անարգանքներուն դէմ չկրցաւ ժոյժ ունել, և այն որ ուրիշ առիթներու մէջ շատ դիւրամէտ էր Հայերը ստորնացնելու և օտարը բարձրացնելու, այս անգամ կարի խիստ վշտացած Յունաց չափազանցութենէն, ամենայն զօրութեամբ կը պընդէ, թէ Հայոց եկեղեցւոյ քահանայութիւնն ու քահանայապետութիւնը ամբողջական և հաստատուն են, թէ մի բնութիւն ըսել սխալ չէ, թէ Քաղկեդոնի ժողովը չընդունել մոլորութիւն չէ, թէ Յոյներէն ձեռնադրութիւն ընդունելու պարտք չկայ, թէ Ս. Սահակի տեսիլքը քահանայապետութեան Լուսաւորչի ցեղէն դադարելուն համար է, եթէ երբեք տեսիլքին պատմութիւնը ճշմարիտ է, վասն զի Խորենացին զայն չպատմեր։ Լամբրոնացիին առ Ոսկան նամակին դիմաց աւելի կ'ոգևորուիմք մեք, քան նորա առ Լևոն նամակին ընթերցմամբ։ Տարբերութեանց պատճառն ալ փոքրիշատէ ակնարկեցինք, և մխիթարական է մեզ դիտել՝ թէ իւր վերջին օրերուն մէջ Լամբրոնացին շատ տարբեր կերպով սկսաւ կըշռել Հայոց եկեղեցւոյն կացութիւնը և նորա օտար եկեղեցեաց հետ միանալուն խնդիրը, մանաւանդ երբ վիրաւորեալ անձնականութեան բուռն կիրքերն ալ սկսան մեղմանալ։

92. Կը մնայ մեզ այստեղ Լևոնի թագադրութեան վրայ խօսիլ, ոչ գործին քաղաքական տեսակէտէն՝ որ մեզ չպատկանիր,

այլ գործին պարզապէս եկեղեցական կողմէն, զի այդ պատուոյն իբր պայման հարկ եղաւ եկեղեցական միութիւն կնքել, և այնուհետև արքունական թագը ընդունել։ Լևոն Տաւրոսեան հայ իշխանաց իշխանապետն էր, այլ պատուով և աստիճանով աւելի ինչ չունէր. և կը փափագէր թագաւոր անունը ստանալ։ Տասուերկու տարիէ իվեր որ իշխանապետութիւնը ժառանգած էր եղբօրմէն, շատ ընդարձակած էր իւր սահմանները, աճեցուցած իւր զօրութիւնը, և կարևոր անձնաւորութիւն մը դարձած Արևելքի մէջ։ Ոչ Լատիններու և ոչ Յոյներու հպատակ էր, և ոչ ալ հարկատու, այլ բնական կերպով մը ճանչնար մեծագոյն և հզօրագոյն վեհապետներու գերակշռութիւնը։ Միթէ՞ չէր կրնար Լևոն իւրովի առնուլ թագաւորի անունն ու աստիճանը, որուն կը փափագէր։ Ի հարկէ կրնար, զի ոչ ումեք համար տալու պարտաւոր էր, այլ կարող էր իւր դէմ հակառակութիւն շարժել, կարող էր նոյն ինքն իշխաններուն նախանձը գրգռել, և եթէ թև և թիկունք չունենար, կարող էր իւր ձեռնարկութեան մէջ ձախողել։ Այս պատճառներով իւր նպատակին հասնելու համար անխտիր նոյն ժամանակի վեհապետներուն կը դիմէր, և իւրաքանչիւրին սիրտը շահելու կաշխատէր։ Ասոնք էին Յունաց կայսրը, Գերմանաց կայսրը՝ և Հռովմի պապը։ Առաջին անգամ գերմանիոյ կայսրը՝ թագաւորութեան անուն և աստիճան և պատիւ տալու խոստումն ըրած էր (1190), և եթէ իւր և որդւոյն մահերը և խաչակիրներուն տկարանալը հետզհետէ յաջորդած չըլլային, նոյն ատեն Փրեդերիկոս իւր խոստումը կատարած կը լինէր, և Հայոց և Լևոնի երկար տագնապալից հետամտութեան տեղի չէր մնար։ Փրեդերիկոսի խոստումէն մինչև Լեւոնի հանդիսաւոր պսակուելը ինը տարիներ անցան (1190-1199), և այդ միջոցին տեղի ունեցած բոլոր դիպուածներ, որ սերտ կապակցութիւն ունեն նոյն նպատակին հետ։ Քաղաքական և եկեղեցական ամեն գործողութիւններ կը դիտեն միայն Լևոնի թագադրութիւնը դիւրացնել և ապահովել։ Իւր բարեկամներ կ՚աշխատին իրեն նպաստել, իւր թշնամիք կ՚ուզեն զայն խափանել, Արևելեայք ալ գիտեն թէ ինչ բանի համար կը մշակուի հայ եկեղեցւոյն օտար եկեղեցեաց հետ միութեան հարցը, և բացէբաց կը պատասխանեն, թէ ազգը պէտք չունի պատիւի մը որ եկեղեցին զոհելով ձեռք պիտի բերուի։

93. Լևոնի թագը, ինչպէս երեք կողմէ խնդրուեցաւ, նոյնպէս ալ երեք կողմէ տրուեցաւ։ Յունաց կայսրէն թագ խնդրելու բանակցութիւնը օտար չէր Համբրոնացիին պատգամաւորութենէն, որուն կ՚ընկերանային Հալկամ և Բակուրան և Պողոս իշխաններ (Սմբ. 109)։ Այն անգամ պատգամաւորութիւնը գործը չվերջա-

ցուց, այլ երբ քիչ ետքը գերմանաց կողմէն թագի տուուչութիւնը եղաւ, Ալեքսիս Անգեղոս չուզեց որ Հայերը իրմէ զատուին, ինքն ալ յղեց արքունական նշանները, և ըստ Կիրակոսի յորդորեց իսկ զԼևոն որ լատինաց տուածէն աւելի իւր տուածը գործածէ, զի առմեզ հուպ ես քան թէ ի Հռոմ (Կիր. 76)։ Իսկ Գերմանաց կայսրեր տուած թագը յղուած էր գերմանացի բանակին հետ ի Պրոզոմայիս, և Յովհաննէս արքեպիսկոպոս Սսոյ յատկապէս այնտեղ ղրկուեցաւ թագը բերելու. ինչպէս ալ եղաւ, թագին հետ եկաւ յատկապէս յղեալ լատին արքեպիսկոպոս մը, որ պաշտօն ունէր կայսեր և պապին կողմանէ Լեւոնի հետ բանակցել և յարաբերութեանց պայմանները կնքել։ Այդ երկու առաքումները տեղի ունեցան ծռազատիկին յաջորդ տարին (1198), և Լամբրոնացին իւր յիշատակութեանց մէջ կ'ըսէ թէ արևմտեան և արևելեան կայսերը պսակեցին զԼևոն քարամբ պատուականաւ յեկեղեցին Տարսոնի որ իմ անարժանութեամբս հովուի (Սիս. 469)։ Սակայն այդ Տարսոնի եկեղեցւոյն մէջ կատարուածը վերջնական օծումն ու թագադրութիւնը չէ, պաշտօնական խոստումն է, և թեթև օրհնութիւնն է, որով Լևոն թէպէտ Քրիստոսապսակ կը կոչուի, սակայն մեծագոյն և վերջնական հանդիսութիւնը վերապահուած է, և աշխարհագումար ժողովով պիպի կատարուի յետոյ, և մեք գիտեմք թէ այն հանդէսին ներկայ չեր Լամբրոնացին Ներսէս, Տարսոնի և Լամբրոնի արքեպիսկոպոս, զի հանդէսին ներկաները իւր երկու յաջորդներն են, Վարդան արքեպիսկոպոս Լամբրոնի և Ստեփանոս արքեպիսկոպոս Տարսոնի (Սրբ. 110)։ Վերջին տուուչութիւնը պիտի կատարուի Հռոմի պապին արտօնութեամբ, այն որ արևմտեան եկեղեցականութեան գլուխն էր, և նոյն իսկ Գերմանիոյ կայսրներուն թագադրութիւնն օրհնողը և արտօնողը։ Լևոնի փառքը պիտի լրանար պապական իշխանութեամբ պսակուելով։

94. Թագ ընդունելու գործողութիւնը էր նոյն իսկ արևմտեաններուն լեզուով զգեստաւորութիւն (Snoes titura) կոչուածը, որով թագ և իշխանութիւն ընդունողը կը համարուէր ստորադրեալ և աւատական հպատակ տուողին։ Արևմտեան կայսրներ իրենց իշխաններուն վրայ ուրիշ միջամտութիւն չունէին, բայց եթէ անոնց իշխանութիւն տալ կամ բաշխել, որ է վաւերացնել, զի այլով ամենայնիւ, անոնք իրենց երկիրներուն ազատ վարիչներն էին։ Իսկ այն որ հպատակն էր՝ պարտաւոր էր ընդունել այն պայմանները, զոր գերիշխանը կը դնէր, և իւր իշխանական իրաւանց պահպանութիւնն ալ անոր հաճութեան կը պարտէր։ Լևոն ալ Արևմուտքի կայսրէն և պապէն թագ ընդունելով, պէտք էր մտնէր արևմուտքի գերիշխանութեան տակ, նոյն կերպով որով մտած էին

արևմտեայ իշխանները և արևելեան լատին իշխանները։ Կայսրն քաղաքականապէս և պապն եկեղեցականապէս գերիշխանութիւն մը ստացած պիտի լինէին, և որովհետև նոր ինչ էր օտար ազգէ և եկեղեցիէ աւատական հպատակ մը ունենալ, հարկ էր որ յառաջագոյն պայմանները ճշտուէին, և ահա թէ ինչու տեղի կ'ունենան պաշտօնական բանակցութիւնք և կը տևեն երկար ատեն, երկու տարի, և այդ միջոցին երկու կողմանք ալ կը յառաջեն քայլառքայլ խզումի վտանգէն վախնալով։ Այս կերպով կ'արդարանան այն շփոթ պատմութիւնք, որք մի կողմանէ Լևոնը 1197-ին պսակուած կ'ենթադրեն, և միւս կողմէն 1199 տարւոյ սկիզբը կը յետաձգեն պսակուելը։ Կայսեր կողմանէ բանակցութիւնք շատ երկար չեղան, ամենայն ինչ քաղաքական և արտաքին էր. ինչ որ ուրիշներու համար կայր, պէտք էր Հայոց համար ալ արժէր, եթէ պարագայք ներէին որ Արևելեանք Արևմտեաններուն հետ յարաբերութիւն ունենային, թէ ոչ ամենայն ինչ ինքնին կը խափանուէր։

95. Նոյնպէս չէին եկեղեցական յարաբերութիւնները. հոգևոր յարաբերութիւնք տևական կրնային ըլլալ ամէն առթի մէջ, նախընթաց օրինակ ալ չկար. վասդի Հայոց եկեղեցին ցայնվայր ոչինչ յարաբերութիւն չունէր լատին եկեղեցւոյ հետ իւր վարչութեան մասին. և ինչ որ նախընթաց 13 տարիներու մէջ (1184-1197) սկսած էր, լոկ արտաքին և պատահական և պատուասիրական էր, և հաստատուն կերպարան չունէր և երկու կողմունք ալ փորձեր կը կատարէին, և ոչ աւելի։ Պաշտօնական բանակցութեանց սկիզբը պէտք է դնել նոյն տարին. յորում Լևոն առաջին անգամ իբր պսակեալ կը յիշուի (1197), և այս պաշտօնական բանակցութեանց պայմանները հարկ էր Հայոց կողմանէ եկեղեցական ժողովով մը նախապատրաստել, և կը կարծենք թէ այս իսկ է այն որ սովորաբար կը կոչուի ժողով Տարսոնի ՈԻԶ թուին, զոր կը սիրենք ընթեռնուլ ՈԽԶ (1197), զի ՈԻԶ-1177 թուին, ոչ Տարսոն Հայոց էր, ոչ Լևոն իշխան կար, և ոչ Լևոն քրիստոսապսակ թագաւոր էր, և ոչ Տարսոնի մէջ ժողով գումարուած էր, ինչպէս Հռոմկլայի ժողովին առթիւ խօսեցանք (յօդ. 65)։ Լամբրոնացիին ճարտարարուեստ ատենաբանութիւնն ալ, եթէ լոկ գրական երկասիրութիւն մը չէ, կամ եթէ հրապարակ չելած պատրաստութիւն մը չէ, կրնայ յարմարիլ սոյն տարւոյ պարագաներուն և կարեոր նպատակին։ Իսկ Շնորհալիի եղբօր որդի Գրիգոր կաթողիկոսն ալ, որ կը յիշուի խորագիրին մէջ, կը լինի Շահան եղբօրորդին Ապիրատը, և ոչ Վասիլ եղբօր որդին Տղայն։ Նմա կուղղէ ատենաբանն իւր խօսքը. Ով Յիսուսի փոխան ի մէջ մեր. իսկ

նոր Զօրաբաբէլը, որ յարևմտից յարեալս ծգեաց զընդարձակութիւն ծեռինն կըլինի Լևոն (Տղայ 136)։ Իսկ ծեր և դատաւոր անուամբ քննադատուածը կը լինի անշուշտ Տուտէորդին որ տարից գրութեամբ հակառակութիւնը կ'արծարծէ (Տղայ 132)։ Ատենաբանութեան մեծագոյն մասը ընդհանուր կերպով միութեան պաշտպանութիւն է առանց որոշելու թէ ո՞րու հետ և ինչ բանի մէջ։ Եւ իրօք ալ Լեւոնի փնտրածը որևէ միութիւն մընէր, և պարագայներ անտարբեր էին իրեն համար։

96. Լամբրոնացին մասնաւորութեանց իջնելով, միառմի յառաջ կը բերէ որչափ ինչ խնդիրներ կային մէջտեղ։ 1. Երկու բնութեանց բացատրութիւնը, յորում մեր և այլոց ազգաց համամիտ լինելը ապացուցանելով, կերպով մը կը թելադրէ անոնց բացատրութիւնը ընդունել որով մեք խաղաղարարի վարձքը ընդունած կը լինիմք։ 2. բաժակի նիւթին տարբերութիւնը, զի հացինխմորուն կամ անխմոր լինելը փոփոխակի Յունաց և Լատինաց նմանելով, դժուարին կ'ըլլար ո՞ր կողմին երթալնիս որոշել, ուստի ջուրին վրայ կը պնդէ, և կ'ըսէ թէ քանի որ գինիի կազմութեան մի տարրը ջուր է, ջուր աւելցնելն ալ կրնայ ընդունուիլ։ 3. Ծնունդի տօնին համար կ'ըսէ, թէ պէտք է մէկտեղ տօնուի, ինչպէս ի միասին կը տօնուի յարութիւնը։ Ուրիշ մասնաւոր խնդիրներու ակնարկներ աւելի թեթև կերպով կատարուած են։ Մեք իբրև հաստատուն չեմք ուզեր պնդել թէ Լամբրոնացիին ատենաբանութիւնը Տարսոնի ժողովին մէջ արտասանուած ըլլայ, վասնզի կը զգամք թէ ատենաբանութեան ընդհանուր հոգին աւելի Յունաց քան թէ Լատինաց հետ միութեան նպատակին կը ծառայէ։ Բայց միւս կողմէն ալ կը դիտեմք, թէ միութեան խընդիրը, ինչպէս վերագոյնդ ալ ցուցուցինք, Լամբրոնացիին միտքին մէջ համահաւասար է թէ Յունաց և թէ Լատինաց համար, և ինչ որ միոյն համար կը խօսէր միւսին համար ալ կ'արժէր, բաւական էր որ ընդունէր Հայ եկեղեցւոյն կղզիացեալ կացութիւնը, որուն ոգւով չափ հակառակողն էր։ Կը նկատեմք դարձեալ թէ յիշեալ թուականը (1197), Լամբրոնացիին Կոստանդնուպօլսէ դառնալուն և Ալեքսիս Անգեղոսէ թագ ակնկալելուն տարին է. և Յունաց հետ միութեան խնդիրն ալ ժամանակին խնդիրը լինելէ չէր դադարած։

97. Լամբրոնացիին ատենաբանութեան նման, ժամանակն անորոշ և որոշելը դժուար գրութիւն մընալ, Յունաց ինն գլուխներուն պատասխանն է, որ Տարսոնի ժողովի անուամբ և նոյնպէս ՈՒՁ 1177 թուականով կը գտնուի յօրինուած (Կալ. Պտմ. 331)։ Եթէ այդ պատասխանները Հռոմկլայի (1179) ժողովին չեն կրնար

պատկանիլ, վասնզի ինն գլուխներ այն ժողովին մէջ նկատի չառնուեցան, ապա յարմարագոյն է կարծել թէ Տարսոնի ժողովին (1197) գործերուն կը պատկանին։ Պատասխանները այսպէս գրուած են. 1. Եւտիքէսը կը նզովեմք. իսկ Դէոսկորոսի համար պէտք է որ նախ նորա գրութեանց ժոլորեալ լինելը հաստատուի։ 2. Քրիստոսի բնութիւնը մի յերկուց ըսելով, երկութիւնը ընդունած կը լինիմք։ 3. Որ խաչեցարի ձևը Ս. Հայրերէն առած եմք։ 4. Տօներու օրերը տօները չեն փոփոխեր, այլ եթէ Յոյնք հայոց խնդիրները կատարեն, Հայերն ալ պատրաստ են այդ կէտին վրայ զիջողութիւն ընել։ 5. Եթէ ձէթ դիւրագիւտ լինի, միւռոնը անով կը պատրաստեն։ 6. Լատինք ալ անխմոր կը պատարագեն, ուստի Հայք բաղարջը կը պահեն։ Իսկ բաժակին ջուր կը խառնեն, եթէ Յոյնք Հայոց խնդիրները կատարեն։ 7. Երբոր ընդարձակ եկեղեցիներ շինելու կարողութիւն ունենան, ժողովուրդը ներս կ'առնեն։ 8. Երբոր տեսնեն որ վերջին չորս ժողովներ առջի երեքին միաբան են, անոնք ալ կ'ընդունին։ 9. Հայոց կաթողիկոսութիւնը Յունաց կայսրէն ընդունել յանձն կ'առնուն, եթէ Յոյնք Հայոց տան Անտիոքի պատրիարքութիւնը։ Յունաց ինը գլուխներուն այդ պատասխանները տալէ ետքը Հայոց կողմանէ ալ եօթը գլուխներ կ'առաջարկուին Յոյներուն։ 1. Մեղուցեալք կանոնական ապաշխարութիւնը լրացնելէ յետոյ աստիճան ընդունին։ 2. Ապաշխարողաց համար գրուած կանոններ խստիւ պաշտպանուին։ 3. Մալեալներ և կըրճատեալներ եկեղեցականութեան չընդունուին։ 4. Պատարագի հացը բաղարջ գործածեն։ 5. Պատարագի մնացորդները հողի տակ չթաղեն և բաժակին տաք ջուր չխառնեն։ 6. Կրօնաւորներ և քահանայներ ձուկով ու գինիով պահքը չլուծեն։ 7. Հայոց կաթողիկոսները միանգամայն Անտիոքի պատրիարք ճանչցուին Յունաց համար։ Այս է առաջարկեալ թուղթին համառօտութիւնը։ Այս թուղթը ինչպէս և ատենաբանութիւնը, յոմանց անունը սխալած կարծելով Հռոմկլայի ժողովին կը վերագրուին, յայլոց թուականը սխալած կարծելով Տարսոնի ժողովին կը տրուին, ուրիշներէն ալ իբր լոկ գրական երկասիրութիւններ կը կարծուին և ոչ երբեք ժողովական գործեր։ Երեք կարծիքներն ալ ուժով փաստեր չունին, իսկ մեք աւելի հաւանական գտած ենք երկրորդ կարծիքը։

98. Վերջին միջոցին Լևոնի թագադրութեան համար կատարուած նախապատրաստական միութենական գործողութիւններէն, իրաց թողլով կասկածաւորները, աւելի ստոյգները պատմենք։ Յունաց կայսեր կողմանէ թագի տուուչութիւնը կատարուեցաւ առանց պաշտօնական պայմաններու. Գերմանացւոց կայսեր կող-

մանէ ալ աւատական հպատակութեան խոստմամբ գործը վերջացաւ. աւելի երկար եղան Հռոմի պապի հետ բանակցութիւնները։ Կոնրադոս կարդինալ, եպիսկոպոս Սաբինայի՝ Հռոմի մօտ և արքեպիսկոպոս Մոգունտիոյ ի Գերմանիա, նուիրակ եկած էր թագադրութիւնը կատարելու. այլ կը պահանջէր որ Հայք հռոմէական եկեղեցւոյ հպատակին։ Մասնաւոր պայմաններ ալ ունէր. 1. Ամեն տօները ըստ ժամանակի ընել Լատինաց նման։ 2. Եկեղեցական պաշտամանց ժամանակ ժողովուրդը ներս առնել։ 3. Երկու ճրագալոյցները միայն ձուկով ու ձէթով լուծել. և ոչ կաթով ու կիթով (Կիր 75)։ Այս երեքին վրայ ուրիշ պատմիչ մը երկու ևս կ'աւելցնէ. 4. Մանկտւոյն լատիներէն սորվեցնել։ 5. Կաթողիկոսին անուամբ պարբերաբար հպատակութեան պատգամաւորներ յղել ի Հռոմ (Սիս. 466), Ի հարկէ այս չափով չէին վերջանար Լատինաց պահանջները, գուցէ անոնք չեն յիշուիր Յունաց պահանջներուն հետ նոյն լինելուն համար. բայց Լատինք չէին կրնար գոնէ իրենց համար հիմնական երկու կէտերն ալ չպահանջել. 1. Հռոմի պապը եկեղեցւոյ բացարձակ իշխան ճանչնալ և 2. Հոգւոյն սրբոյ և յորդւոյ բղխումը դաւանել։ Եպիսկոպոսներ կը դժուարանան այսչափ պայմաններ ընդունել, և ոչ դաւանեցան առնել զխնդիրսն (Կիր. 75), բայց Լեւոն պէտք ունէր այս պայմաններուն իւր թագադրութեան համար. ուստի պատասխանեց եպիսկոպոսներուն. դուք մի ինչ հոգայք վասն այդորիկ, ես հաճեցից զմիտս նոցա առ անգամ մի կեղծաւորութեամբ։ (Կիր. 76)։ Բայց լատին նուիրակը թագաւորէն աւելի կաթողիկոսին և եպիսկոպոսներուն հաւանութիւնը կ'ուզէր։ Լեւոն պարտաւորուեցաւ այդ նպատակով եպիսկոպոսները բռնատադել և իւր կամքին հնազանդեցնել։ Գրիգոր կաթողիկոս և Ներսէս Տարսոնի և Յովհաննէս Անտիոքի և Անանիա Սեբաստիայի արքեպիսկոպոսներ. և այլ ևս ինը եպիսկոպոսներ համաձայնութեամբ երդման ձև մը պատրաստեցին Լեւոնի համար, յորում պապին պահանջները կը պարունակուէին, թէպէտ ոչ ձևը հասած է մեզ և ոչ պարունակութիւնը, որ մօտէն կարծիք մը կազմէինք։

99. Ասոնք եղան Լեւոնի թագ ընդունելուն պայմանները, և այս եղաւ Տարսոնի մէջ գումարուած ժողովին որոշումը, կամ լաւ ևս բռնադատեալ 12 եպիսկոպոսներուն համակերպութիւնը։ Անտեղի չէ կարծել, թէ ժողովը աւելի բազմաթիւ էր եպիսկոպոսներով և վարդապետներով և իշխաններով, և թէ 12 եպիսկոպոսները կը յիշուին լոկ պապական նուիրակին հետ յարաբերութեան մտնելուն համար։ Լեւոնին մանակի և կէս պաշտօնական թագադրութիւնը կատարուած էր, իբրև թագաւոր ճանչցուած էր, բայց

մեծահանդէս տօնախմբութիւնն ալ պէտք էր, ինչպէս այսօր ալ թագաւորներ և կայսրներ իրենց, պաշտօնավարութեան սկսելէն ամիսներ ետքը թագադրութեան հանդէսներ կը կատարեն։ Այդ հանդիսութեան համար Լևոն մինչև հեռաւոր երկիրներ հրաւէրներ ղրկեց եպիսկոպոսներուն և իշխաններուն, լատին գլխաւորներուն և ուրիշ նշանաւոր անձերու, և նախապատրաստութիւններ հրամայեց արտասովոր ճոխութեամբ։ Հրաւէրը հանդէսէն վեց ամիս յառաջ ղրկուեցաւ, և այս միջոցին (1198 յուլիս 14), հանդիպեցաւ Լամբրոնացիին մահը, որ Լևոնի մտերիմ բարեկամն էր և նորա փառաւորութեան մեծ օգնիչը, և յաջող ելքին վկայն ևս լինելէ յետոյ, տօնին և հանդիսութեան մասնակից չկրցաւ ըլլալ։ Թագադրութիւնը կատարուեցաւ միւս տարւոյ սկիզբը աստուածայայտնութեան տօնին (1199 յունուար 6)։ Երկու եկեղեցական նախագահներ կային հանդէսին. Կոնրադոս կարդինալ պապական նուիրակը թագը դրաւ յանուն պապին և յանուն կայսեր, և Գրիգոր Ապիրատ կաթողիկոս օծումը տուաւ յանուն եկեղեցւոյ և յանուն ազգին, և այդ պատճառով Լատիններ կրցան նուիրակը ճանչնալ իբրև հանդիսադիր. և Հայերն ալ իրենց կաթողիկոսը իբրև հանդիսութեան գլուխ համարել։ Հանդիսութեան նկարագիրը զանց կ'ընենք, բաւական լինի ըսել թէ եկեղեցական արարողութեան ձեւակատարութիւնը Լատիններէն փոխառեալ էր, և կանուխէն Լամբրոնացիէն թարգմանուած, և չեմք գիտէր թէ ինչու չգործածեցին այն կարգը, զոր ունէին հարկաւ հայեր, և որով Դէորգ Գառնեցին օծած էր Աշոտն ու Սմբատը։

100. Լամբրոնացիին մահը կը հարկադրէ զմեզ գոնէ համառօտ տեսութիւն մը ընել անոր վրայ, որ իւր ժամանակին մէջ առաջնակարգ դիրք մը ունեցաւ, և որ ցարդ նոյն նշանաւոր համբաւը կը վայելէ։ Լամբրոնացին մեռաւ տակաւին երիտասարդ, հազիւ 45 տարին լրացուցած (1153-1198), այլ արդէն 22 տարուընէ ի վեր եպիսկոպոս էր, և 24 տարուընէ ի վեր ընդհանուր գործոց մէջ դեր ու դիրք ունէր, և բազմահատոր և բազմաթիւ երկասիրութեանց հեղինակ էր, որք ցարդ արժանապէս կը գնահատուին։ Իսկ մեք մատենագրական տեսութիւններ զանց կ'ընեմք։ Լամբրոնացին, այն համեմատաբար կարճ կեանքին մէջ կը ցուցնէ իւր վրայ տարբեր կերպարաններ, երբեմն ճգնասուն անապատակեաց, երբեմն գրասէր մատենագիր, երբեմն ժողովուրդին հովիւ, երբեմն արքունիքի խորհրդական։ Առաքինի և չափաւոր մի կողմանէ, միւս կողմանէ զայրացկոտ և պահանջող, երբեմն յերկրայնոց բոլորովին հրաժարեալ, և երբեմն աշխարհային գործոց գլխաւոր ախոյեան։ Այդ ամենը միաւորողը բուռն եռանդն էր

և բուռն կիրք մը, որք կը տիրէին անոր հոգիին, և ինչ բանի որ ձեռնարկէր, մեղմ և հանդարտ գործունէութիւն չէր կրնար պահել։ Այդ պատճառով եթէ միշտ անխոնջ ժրութեամբ գովելի էր, ոչ միշտ զգուշաւոր խոհեմութեամբ կրցաւ գովելի ըլլալ։ Մեք աւելի բարձր պիտի սեպէինք Լամբրոնացին, եթէ կարենար Արևելեայները շահել, և եկեղեցւոյ մէջ կաթողիկոսական անջատում ստեղծելու առիթ չտալ, քան թէ երբ բուռն յարձակմամբ աջ և յահեակ, և իւր հակառակորդները հեգնելով առիթ տուաւ Կիլիկիան Արևելքէն անջատելու, որով և Կիլիկիոյ մէջ հետզհետէ զօրացաւ լատինականութեան միտումը, և պապէն թագ ընդունելու հետամուտ Լևոնին յաջորդները եղան բուն իսկ լատինադաւան և լատինածէս Լևոններ, որք հայ միւռոնն իսկ իրը անսուրբ կարծել համարձակեցան։

101. Լամբրոնացիին կեանքին գլխաւոր նկարագիրը միութեան խնդիրին մէջն է։ Պէտք է ըսել թէ ինքն չստեղծեց զայն. Շնորհալին, իւր հոգևոր ծնողը, բուն իսկ հեղինակն էր, բայց ինքն այնպէս իւրացոյց և այնպէս ընդարձակեց, որ ինքնահնար յատուկ գոյն մը տուած եղաւ այդ խնդիրին։ Երկու մաս ունեցաւ միութեան խնդիրը, նախ Յոյներու և յետոյ Լատիններու հետ։ Լամբրոնացին երկուքն ալ ընդգրկեց և երկուքը իմիասին պաշտպանեց, թէպէտ անոնք իրարու համաձայն չէին։ Շնորհալիին տեսութիւնը բարձր էր. Քրիստոսի եկեղեցւոյն մէջ վերանորոգել առաջին դարերու կամ նախաքաղկեդոնական ժամանակի վիճակը, յորում ամէն եկեղեցիներ իրարու. կապակցած էին, առանց զիրար նզովելու կամ իրարու հպատակելու, լոկ իրը անդամք միացեալք ի գլուխն Քրիստոս։ Բայց երբ տեսաւ որ ուրիշ եկեղեցիներ այդ ուղիղ սկզբունքէ աւելի բան մը կը պահանջէին, Շնորհալիին սուրբ միտքը պղտորեցաւ և միութեան խնդիրը սկսաւ թուլցնել։ Լամբրոնացին ընդհակառակն լաւ գիտնալով իրաց այս վիճակը, առաւել ևս հեռեցաւ գործին։ Լամբրոնացիին ըրածները և գրածները զննելով, ոչ ուրեք կը գտնեմք թէ իւր եկեղեցին մոլորեալ կը կարծէ, այլ միայն ծիսական և բարեկարգական կէտերը խաթարեալ կը տեսնէ, և նոյները օտար եկեղեցիներու մէջ պայծառ կը կարծէ, և կ'ուզէ անոնց հետևել։ Սակայն չմերժեր թէ սովորութիւն ըսուած բաներ, իսկոյն չեն խափանուիր, թէ անոնց էականութեան ոյժ վերագրելու չէ, թէ անոնց մէջ Հայեր զիջողութեան պարտաւոր են։ Լամբրոնացին կ'ուզէ որ ի սէր խաղաղութեան Հայերը զիջանին, բայց խաղաղութեան սէրէն աւելի իրենց տկարութեան պատճառով, որովհետև բարձ-

բաձայն կը հոչակէ թէ օտարներ մեզմէ աւելի մեծ և աւելի զօրաւոր են։

102. Դժուարագոյն էր Լամբրոնացիին դիրքը, Յոյներուն և Լատիններուն իրարու հակառակելնուն մէջ, բայց ինքն անոր մէջէն ալ կ'ելլէ։ Ի՞նչ հոգ որ անոնք իրարու թշնամի են, ինքն ընդ իւրաքանչիւրսն կը խառնուի և զընաւսն կը շահի Պօղոսի խօսքին համեմատ (Տղայ 220)։ Սակայն այս կերպով և ոչ մին շահած կ'ելլար։ Երբ Յոյնին հետ երկու բնութիւն կ'ընդունէր, Լատինն ալ կը հաւանէր, բայց երբ Լատինին հետ եւ յորդոյ բղխումը ընդունի, Յոյնը պիտի հակառակէր, և երբ Յոյնին հետ առանձնական դատաստանը մերժէր, Լատինը իրմէ պիտի ուծացնէր։ Երբ Լատինին հետ պապական գերիշխանութիւն քարոզէր, Յոյնը պիտի զայրացնէր, իսկ երբ Յոյնին հետ պատրիարքական դրութիւնը պաշտպանէր, Լատինէն պիտի բաժնուէր։ Լամբրոնացիին մտածած միութիւնը ընդ բնաւսն, իսկական հակասութիւն մը կը դառնայ։ Մեք անհնար չեմք տեսներ բաժանեալ եկեղեցիներու հետ միութիւն պահել, ինչպէս այսօր իսկ Հայ եկեղեցին կը պահէ, այլ այդ կը ճշմարտուի լոկ կրաւորական դիրքի մէջ, և ոչ թէ միութիւն կազմելու հետամտութեամբ և զիջողութեանց պայմանով, ինչպէս Լամբրոնացին կ'ըսէր։ Շատ կը սխալին Հռոմէականք, որք Լամբրոնացին իբր կաթոլիկ կ'ուզեն ներկայել։ Լամբրոնացին Լատինը կը սիրէ, վասնզի քրիստոնէութեան մի ճիւղ է. բազմաւոր է, զօրաւոր է, փայլուն է, անկէ օգուտ կրնայ քաղուիլ, և ոչ թէ վասն զի միակ ուղղափառն է։ Լամբրոնացիին համար Լատինք և Յոյնք, Հայք և Վիրք, Ասորիք և Եգիպտացիք հաւասարապէս ուղղափառ են (Տղայ 148), և ով որ այդ համոզում ունի, նա Հռոմէական դաւանութեան համամիտ չկրնար ըլլալ։ Լամբրոնացին աւելի յարում ունի և աւելի գովեստ կը խօսի Յունաց քան Լատինաց, ինչ որ Լամբրոնացիներու ազգատոհմիկ հաստատուն սկզբունքն էր. և իւր աւելի եռանդուն ժամանակին մէջ Յոյներու հետ բանակցութեանց հետևած է։ Արդ եթէ Յոյն եկեղեցոյ դաւանութեան յարած էր, Լատին եկեղեցոյ դաւանութեան համամիտ չէր կրնար ըլլալ։ Հետևաբար Լամբրոնացին իւր տեսակին մէջ առանձնայատուկ համոզում մը ունի եկեղեցական խնդիրներու վրայ, որ սկզբամբ հայկական ներողամիտ դրութիւնն է, միայն թէ եռանդուն ձգտմամբ կասկածելի դարձաւ, և ուրիշներուն և իրմէ հոքը եկողներուն գայթակղեցուցիչ եղաւ։ Չեմք հասկանար հետևաբար Լամբրոնացին սրբացնելու համար Հռոմէականներուն եռանդը, ամեն առթի մէջ առ Լևոն նամակը սուրբի մը գրիչ չէ։

103. Լամբրոնացիին նման ծայրայեղ մըն ալ Տուտէորդին է, Արևելեայց ուղղութեան անձնաւորութիւնը։ Ազգային եկեղեցւոյ ինքնուրոյն դիրքը պահելու նպատակով, կը պահանջէ որ ոչ մի եկեղեցւոյ հետ յարաբերութիւններ մշակուին, միութեան խօսքը վերցուի, միաբանութեան ակնկալութիւնն ալ չնչուի, միւս եկեղեցիներ իբրև մոլորեալ դատապարտուին և իբր պիղծ խորշելի համարուին։ Ազգային եկեղեցւոյ պատիւով զգածուած, անվայել կը տեսնէր ինչ որ օտարք կ՚ընէին, վայելուչ և օրինաւոր կը կարծէր ինչ որ նոյն միջոցին Հայերը կը գործէին, թէև հին աւանդութենէ եկած չլինէր, և լոկ խրթնացեալ ատեններու աղաւաղում լինէր։ Մանր տաճարներ ունենալ, և պաշտամանց ժամանակ ժողովուրդը տաճարէն դուրս պահել, եկեղեցական զարդեր չունենալ, սեւաթոյր ասուին իբրև եկեղեցական զարդ համարել, և վանականութեան նախանձայուզութիւնը մինչև ծայրը տանելով նոյն իսկ պատարագելու ատեն արեղայական կոքուղը գլուխէն չհանել, և այլ այսպիսի բաներ, երբեք իբրև հնաւանդ չէին կրնար ընդունուիլ, այլ Տուտէորդիին համար միմի մեծիջեան անհաւատարմութեան նիւթ կը կազմէին։ Մեզի համար երկու կողմերն ալ ծայրայեղ էին, և իրենց պահանջումներուն մէջ չափազանց և անիրաւ, այլ եթէ սկզբունքի կէտը պիտի դիտենք, աւելի ապահով և աւելի ողջամիտ էր Տուտէորդիի ընթացքը՝ իւր պահպանողական դիրքով, քան թէ Լամբրոնացիին ընթացքը՝ իւր օտարամոլ շարժումներով։ Իրօք ալ յաջորդ դարեր իրաւունք տուին Տատէորդիին։ Կիլիկեցւոց միութենական ընթացքը օտարամոլութեան դարձաւ, օտարամոլութիւնը ախթարմայութեան և ունիթորութեան յանգեցաւ, և ախթարմայներ և ունիթոռները վերջապէս ազգային եկեղեցիէն բաժնուեցան, և ազգային եկեղեցին կը վտանգէին իսկ, եթէ Արևելեայց ընդդիմակաց կուսակցութիւնը չըլլար։ Այժմեան Հայ եկեղեցին զոր ունիմք և որով կը պարծիմք, Տուդէորդիին կը պարտինք և ոչ Լամբրոնացիին։ Ընդհակառակն այժմեան Հռոմէական Հայեր ինքզինքին Լամբրոնացիին անունով պաշտպանել կը կարծեն, թէպէտ, ինչպէս տեսանք, Լամբրոնացին օտար է զուտ հռոմէական մը ըլլալէ, և հեռու այժմեան կաթոլիկ ուղղութենէն։ Իսկ մեք պատմութեան կարգին դառնանք։

104. Լամբրոնացիին մահուընէ և Լևոնի թագադրութեան հանդէսէն ետքը, 4 տարի ևս կաթողիկոսութիւն վարեց Ապիրատ՝ մինչև իւր մահը (1203)։ Այդ միջոցին գործերը շատ չեն. և դժուար իսկ էր հանդուն գործունէութիւն սպասել ութսնամեայ ծերունի կաթողիկոսէն։ Գլխաւոր յիշելիքնիս է կաթողիկոսին և պապին

միջև թղթակցութիւնը։ Նախ Ապիրատ կը գրէ առ Իննովկենտիոս Գ. պապ (1199 մայիս 23), և շնորհակալութիւն կը մատուցանէ ղրկուած թագին և տրուած հրամաններուն համար, և օգնութիւն կը խնդրէ Այլազգիներու դէմ (Կալ. Պտմ. 346)։ Ապիրատին հետ Լևոն ալ առանձինն կը գրէ իւր շնորհակալութիւնը։ Իննովկենտիոս կը պատասխանէ Ապիրատին (1199 նոյեմբեր 23), բարձրացնելով իւր պապական իշխանութիւնը, և միանգամայն կը պատասխանէ Լևոնին (1199 նոյեմբեր 25), և կ'աւելցէ նոր խաչակրութեան կազմութիւնը, այն որ չորրորդը եղաւ, և միւս տարուոյն սկիզբը տեղի ունեցաւ։ Այդ ոճով նամակներ շարունակուեցան, որոնց լատիներէնները կը գտնուին Իննովկենտիոսի ճոխ նամականիին մէջ։ Այդ միջոցին նոր նուէրներ ալ կը ղրկէ պապը։ Լևոնի կը տրուի Ս. Պետրոսի դրօշը, իսկ Ապիրատի կը նուիրուի պալլիում, որ է լատինական եմիփորոն, յատկապէս լատին արքեպիսկոպոսներու հաժար սահմանուած, իբր նշանակ իշխանութեան, զոր մերայինք սովոր են վերարկու թարգմանել, Pallium բառին հասարակ իմաստով (Կալ. Պտմ. 356)։ Իբր պապական շնորհ նկատուեցաւ այն ատեն Իննովկենտիոսի կոնդակը, որով հայոց կաթողիկոսը Հռոմի աթոռին իբր անընդմիջապէս կապուած կը յայտարարէր, և կ'արգելուր Արևելքի լատին եպիսկոպոսներուն և նոյն իսկ Անտիոքի լատին պատրիարքին, որ Հայերու վրայ իրաւասութիւն չգործածեն (Կալ. Պտմ)։ Այդ հրամանը նոր պատիւ մը չէր Հայոց աթոռին, այլ միայն նպատակ ունէր պապին անմիջական իրաւասութիւնը պաշտպանել, Այդ իրաւասութիւնը օրինական ձև առած էր, ոչ թէ եկեղեցական այլ քաղաքական իրաւամբ, որովհետև Հայեր թագաւորական թագին շնորհիւ ինքզինքնին Արևմուտքի կայսեր և Արևմուտքի պապին հնթարկել յանձնառու եղած էին։ Հայոց կողմանէ երկրորդական դիտումներ ալ կային, զի Լևոն իւր հրովարտակներուն մէջ շնորհիւ հռոմէական աթոռոյն թագաւոր լինելը չէր յիշեր Արևելեայց գրած ատենը, և Արևմտեայց արած ատենն ալ չորս հինգ տարի ետքը սկսաւ զեղչել։ Անհրկբայ էր ուրեմն որ Լևոն հարկադրուած էր հպատակութիւնը կեղծել, մինչև որ իւր նպատակին հասնէր, և իւր իշխանութեան մէջ զօրանար, և ոչ թէ նպատակ ունէր իսկապէս հպատակ լինել Արևմտեայց։ Իւր վերջին գործերն ալ Լատինաց դէմ հակառակութիւններ եղան, ինչպէս յաջորդ պատմութիւններ կը ցուցնեն։

105. Հետևաբար Ապիրատի թղթակցութիւնք որչափ ալ ընդարձակ բացատրութիւններով և խոնարհ ոճերով լեցուն ըլլան, չեն կրնար երբեք իբր Հայաստանեայց եկեղեցւոյ կարծիք վկա-

թեան ծառայել։ Ապիրատի անձին գալով, մեք ընդունեցանք թէ նա արտաքին յարաբերութեանց ջերմ պաշտպան կուսակցութեան գլխաւորներէն էր, և ի հարկէ տարբեր ալ չէր կրնար լինել, երբ տարիքն ալ աւելի զիջող ընթացքի կը միտեցնէր զինքն։ Իւր կեանքին վերջին տարիներու մէջ զրկուած էր իւր ժիր և հաւատարիմ գործակիցէն, այսինքն Լամբրոնացի Ներսէսէն, և Պահլաւունեաց տունէն ուրիշ նշանաւոր եկեղեցական անձնաւորութիւն մը չկար, որ Լամբրոնացիին տեղը բռնէր։ Հետևաբար նոյն ինքն Լևոն թագաւորն էր, որ ծերունի կաթողիկոսը կը գործածէր, և իրօք ալ բոլոր Ապիրատի վերագրեալ գործողութիւններ և թղթակցութիւններ, աւելի քաղաքական քան թէ եկեղեցական կերպարանք ունին, և շարունակ Լևոնի գրուած թագն է գրութեանց նիւթը, օտարներու դէմ օգնութեան և նիզակակցութեան խօսքերով խառնուած։

106. Ապիրատի վերջին ժամանակին մէջ տեղի ունեցաւ նաև Լամբրոնի և Հեթումեանց անկումը։ Պահլաւունւոյն ժամանակէն յիշեցինք Ռուբինեանց և Հեթումեանց հակառակութիւնը, որուն մեծ շարժառիթն էր Հեթումեանց անպայման յունասիրութիւնը, զոր եկեղեցական կերպով ալ ընդարձակեց Լամբրոնացին, Հեթումեանց տունի լուսաւոր աստղը։ Ռուբինեանք բարձրացան և թագ կապեցին, Հեթումեանք չկրցան տանել անոնց մեծութիւնը, և որովհետև Լևոն Լատիններուն յարած և երախտագէտ էր, Հեթում իշխան Լամբրոնացիին եղբայրը, Յոյներուն օգնութեամբ թշնամութիւն գրգռեց Լևոնի դէմ, մանաւանդ երբ Լևոն բացակայ էր և Կիպրոս էր գացած իւր աներոջ Գուիտոն թագաւորին տեսութեան։ Լևոն իրաւունք կարծեց նենգութիւնը նենգութեամբ յաղթահարել, և Կիպրոսէ դառնալուն կեղծեց թէ իւր Ռուբէն եղբօր պզտիկ աղջիկը կ'ուզէ Հեթումի Օշին որդւոյն ամուսնութեան տալ, և այս պատրուակով բոլոր Հեթումեանց տունը գերեց, Լամբրոն և Պապերոն դղեակները գրաւեց, և Լամբրոնացիներու իշխանութիւնը ջնջեց (1201)։ Ապիրատ կաթողիկոս, որ Հեթումի մօրեղբայրն էր, իւր ազգականներուն համար միջնորդեց. և Լևոն հաճեցաւ ազատութիւնը շնորհել, այլ ոչ իշխանութիւնը, հանգիստ ապրելուն համար գիւղեր և ագարակներ տուաւ ուրիշ կողմեր, բայց վերջէն Հեթումի ընթացքին վրայ կասկածելով, նորէն զայն բանտարկեց (1202)։ Այս անգամ Ապիրատ պարտաւորուեցաւ անձամբ Հռոմկլայէ Սիս գալ, և ստացաւ ազգականներուն ազատութիւնը, և Հեթում վերջնական կերպով հանդարտութիւն գտնալու համար, որոշեց կրօնաւորիլ և վանք քաշուեցաւ։ Ասոր վրայ Լևոն և Հեթում ի սրտէ հաշտուե-

ցան։ Հեթում իշխան, որ Դրազարկի վանքը քաշուած էր, քահանայ ձեռնադրուեցաւ Հայր Հեղի անունով, նոյն վանքի առաջնորդ ալ եղաւ, և տարիներ ետքը (1210), Լևոնի կողմէն Հռոմ Իննովկենտիոս Գ. (1138—1216) պապին իբր եկեղեցական պատգամաւոր ղրկուեցաւ։

107. Ապիրատ 81 տարեկան էր Հռոմկլայէ Սիս եկած ատենը, և շուտով իւր տեղը չկրցաւ վերադառնալ. գուցէ և Լևոնի համար հաճոյագոյն էր կաթողիկոսը իւր մօտ և իւր տրամադրութեան ներքև ունենալ։ Սակայն երկար պիտի չտևէր այդ կացութիւնը, վասն զի տարի մը ետքը (1203) Ապիրատ Գրիգոր Զ. կաթողիկոս վախճանեցաւ Սսոյ մօտ Արքակաղնոյ վանքին մէջ, ուր էր իւր առաջամեայ բնակութիւնը։ Ապիրատով կը փակուի Պահլաւունի տան կաթողիկոսներուն շարքը, որոց եօթներորդն ու վերջինը եղաւ Գրիգոր Զ. որուն յաջորդեց Յովհաննէս Մեծաբարոյ, արքեպիսկոպոս Սսոյ, Հեթումեանց կամ Լամբրոնացւոց ազգատոհմէն, Ապիրատի վրայ շատ ըսելիք չմնար, զի արդէն գործերուն հետ իւր նկարագիրն ալ տուինք. և ցուցուցինք իւր տկար կողմերը, և իւր ըրած սկզբնաւորութեանց հետևութիւններն ալ նախատեսել տուինք, Ապիրատին համար կը բաղձայինք ըսել, թէ ապիրատ ինչ ոչ գործեաց, և իրօք ալ ութսնամեայ ծերունիէն չարութիւններ պէտք չէր սպասել։ Սակայն պէտք է խոստովանել թէ Լամբրոնացիի և Լևոնի ձեռք խաղալիք եղաւ, և ինքն ալ միութեան սիրայար մը լինելով, հաւանեցաւ և վաւերացուց որչափ ինչ որ անոնք թելադրեցին կամ առաջարկեցին։ Իւր կաթողիկոսանալովն իսկ Արևելեայց հետ յարաբերութիւնը խզուեցաւ, որք հակաթոռ կաթողիկոսով մնացին մինչև իւր մահը։ Վերջէն Լևոնի թագը ապահովցնելու համար Լատիններուն գիրկը նետուեցաւ, և իւր անունով արդարացուց որչափ ինչ Լևոն առերեսս յանձնառու եղաւ ի նշան քաղաքական և եկեղեցական հպատակութեան Արևմտեայց հանդէպ։

108. Բարեբաղդաբար, ինչ ալ ըլլան Ապիրատին և Լևոնին գրութեանց իմաստները և յանձնառութեանց ընդարձակութիւնները, անոնք չեն կրնար և ոչ մի կերպով ծանրակշռութիւն ունենալ Հայ եկեղեցւոյ ուղղութեան և վարչութեան ու վարդապետութեան վրայ։ Հայոց եկեղեցւոյ սկիզբն ալ յայտնի է։ Նախնական կացութիւնն ալ ստոյգ է, Հռոմի հետ յարաբերութեանց նպատակն ալ բացայայտ է։ Իրաւ մեր ալ կարծիքն է, թէ պէտք չէր այնպիսի ծանր պայմաններով ընդունել թագ մը, զոր իւր կամքով և զօրութեամբ կարող էր կապել Լևոն, և Արևմուտքէն ոչ ոք կրնար հակառակ դիտողութիւն ընել, սակայն երբ հակառակն ալ գոր-

Ծուեցաւ, չեմք կարծեր թէ լոկ պետական քաղաքականութեամբ մը՝ մեր եկեղեցւոյն իրական և իրաւական վիճակը խախտուի։ Միութեան փափագը նուիրական է և սուրբ, այլ նուիրական սուրբ սիրտէ պէտք է բղխի, և այդպէս եղաւ իսկապէս Շնորհալիին փափագը· Տղայն չափազանցեց այդ իղձերը, իսկ Ապիրատ բոլորովին շեղեցաւ, երբ Լեոնի քաղաքականութեան ծառայեցուց Եկեղեցւոյ ամենաբարձր ուղղութիւնը։ Յաջորդ դարեր աւելի ևս այլայլեցին եկեղեցւոյ նուիրական սկզբունքները, և Ապիրատ Գրիգորէ դար մը ետքը Անաւարզեցի Գրիգոր համարձակեցաւ ազգային եկեղեցւոյ աւանդական ծէսերն ալ խախտել։ Սակայն այդ ամենը ցաւալի միջադէպներ են միայն, որք ազգային եկեղեցւոյն բուն կացութիւնը չեն այլայլեր, և արդեամբ ալ կը տեսնենք, որ ծանրածանր տագնապներէ յետոյ լուսաւոր և անսասան կը մնայ մեր սուրբ եկեղեցւոյն հնաւանդ և ինքնուրոյն կացութիւնը։

Մ· Ա· Օ·

ԴՈՒ ՄԻ ՎՀԱՏԻՐ...

Դու մի վհատիր... տառապիր անվերջ.
Թող հոգոյդ խորքում եռան հուր, կայծակ,
Թող դաժան լուծը անարգ կռուի մէջ
Ծանրանայ վրադ... եղիր նահատակ։

Բայց դու վհատիր, եթէ հանոյքի,
Մեղկ սիրոյ համար թուլանաս մի օր.
Թէ գերի դարձած անցաւոր փառքի,
Սողաս գարշանքի ծոցը բանաւոր։

Համբերութիւնն է գոյութեան վճիռ,
Շղթան է թափը մտքի զօրութեան,
Անզուլ խաւարն է լոկ տրամադիր,
Սրբազործելու տենչը փրկութեան:

ԽԵՆԹ.

Ի՞ՆՉ Է ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ.

Հայի անցեալ ու ներկայ կուլտուրան փոքրի շատէ բարեխիղճ դիտողը կնկատէ, որ այդ կուլտուրայի մէջ կարմիր թելի նման անցնում է մի գիծ—այդ նմանողութեան գիծն է։ Եթէ յիրաւի մարդկային կուլտուրայի զարգացման գործում պատմաբանները պէտք է ազգերից ոմանց ստեղծագործող, ոմանց նմանող, կատարելագործող և ոմանց էլ տարածող ածականով բնութագրեն ընդհանրապէս, ապա մեր ազգը նմանող ազգերի շարքն է անցնելու։ Նա իւր ունեցած կուլտուրայի մէջ համարեա ինքնուրոյն բան չի ստեղծել, բաւականացել է իւր դարաւոր մարտիրոսագրութեան ընթացքում միայն ուրիշ ազգերից վերցնել իրեն մատչելի նիւթը՝ նմանել եղածին որքան այդ հնարաւոր էր իւր համար։ Անշուշտ նմանողութիւնը մարդկային հոգուն յատուկ մի յատկութիւն է և իւր հերթին շատ անգամ նպաստաւոր զարգացման համար։ Եւ ով կարող է այս խորը արմատ ունեցող և յաճախ, լաւ գործադրութեան դէպքում օգտաւէտ, հոգեկան ընդունակութեան դէմ բողոքել։ Խնդիրը այն է, թէ ի՞նչ երևոյթների է նմանում մարդ, ո՞ր աստիճան դիտակցական է այդ նմանողութիւնը և որքան խորն է ըմբռնուած նմանուելիք երևոյթը։

Ուշադրութեան նիւթ դարձնելով մեր կուլտուրան՝ նկատում ենք, որ նա մեծ մասամբ իսկապէս նմանողական է. բայց որքան անցեալի վերաբերմամբ պէտք է խոստովանել, որ այդ նմանողութեան մէջ մարդիկ եղել են բարեխիղճ և հեռատես, նոյնքան ներկայումս թեթևակի և վայր ի վերոյ վերաբերմունք են ցոյց տալի դէպի նմանուելիք երևոյթը։ Ով մեզանից չի խոստովանի, որ մեր բոլորիս ուշքը, կուլտուրան զարգաց-

նելու տեսակէտից, ուղղուած է դէպի Եւրոպան, որովհետև մեր մէջ չկայ այնքան ոյժ, այնքան պատրաստութիւն, որ անկախ ստեղծագործութեան ուղիով գնայինք. սակայն որ բարեխիղճ քննադատը չի նկատի, որ մեր նմանողութեան գործում էլ մենք անպատրաստ, թերի ենք, որ Կրիլովի հետաքրքիր դերում ենք—գնդասեղի չափ փոքր զեռունները նկատում ենք, իսկ վիթխարի փղի մօտից անցնելով ուշք էլ չենք դարձնում նրա վրայ։ Այս վնասակար անուշադրութեան հիմքը ոչ միայն մեր ընդհանրապէս աչքի ընկնող ընդունակութիւններից զուրկ լինելու մէջ պէտք է փնտրենք, այլ նաև մեր անպատրաստութեան մէջ։ Մի երևոյթ հասկանալու համար հարկաւոր են՝ ընդունակութիւն և պատրաստութիւն. երբ այս երկու անհրաժեշտ պայմանները բացակայում են, անխուսափելիօրէն երևոյթը կամ կիսատ է հասկացւում կամ նոյն իսկ սխալ։

Մեր վերջին տարիների կուլտուրական գործը քննելիս նրկատում ենք, որ կարծես թէ մեր մտաւորականները հասարակական գործի մէջ մտնելիս չեն ուզում հաշիւ տալ, թէ որքան իրենք ընդունակ են կամ որքան պատրաստութիւն ունին արդէն անհրաժեշտութիւն դարձած նմանողութեան գործը բարեխիղճ և գիտակցօրէն առաջ տանել։ Որ մեր գործը կուլտուրայի զարգացման դէպքում այժմ Եւրոպայի կուլտուրային նմանելն է և այդ կուլտուրան մերովսանն իւրացնելը, այդ փաստը անվիճելի է, բայց որ մենք անհրաժեշտ ու կարևոր երևոյթներին նմանելը թողած՝ մանր մունր և շատ անգամ խարուսիկ, շլացուցիչ երևոյթների ենք աշխատում նմանել, դրան թող պերճախօս վկայ լինի մեր զուր տեղը մեծ աղմուկ բարձրացնող մամուլը։

Քանի տարի է, որ մեր հասարակական գիտակցութեան արթնանալու, բողբոջելու և ծաղկելու համար մեր մամուլը շեփոր է փչում, թմբուկ է զարկում. ի՞նչ է սակայն այդ շեփորի ձայնը - մեծ մասամբ մի օրհներգութիւն ուղղուած աշխատաւոր գիւղացիութեան և իրաւազուրկ ու ընչազուրկ բանուորութեան հասցէին, որոնք սակայն դժբաղդաբար ոչ լսում են այդ օրհներգը և ոչ էլ մի շօշափելի օգուտ ստանում։ Տեսնում

էնք, որ մեր հասարակութեան ղեկավար սիտղոսով պսակուած-ները իրենց հոգացողութեան մենաշնորհ դարձած նիւթի հետ մեծ մասամբ կամ ծանօթ չեն կամ սխալ են ըմբռնում։ Հասարակութիւնը նրանց կարծիքով կամ աշխատաւոր գիւղացիութիւնն է, կամ չորրորդ դասակարգ բանւորութիւնը. կամ միւս ծայրահեղութիւնը՝ վարձկան բանուորի քրտինքով հարստացող բուրժուազիան։ Նայեցէք մեր գրականութիւնը և կրտեսնէք, որ 5—15 կոպէկանոց թարգմանական բրոշիւրներով է ողողուած դասակարգային խնդրի վերաբերեալ։ Մարդիկ այն աստիճանի միակողմանիացել, մանր խնդիրներով տարուել, խճճուել են, որ էականն ու կարևորը վաղուց անուշադրութեան են մատնուել։ Այս հանգամանքը ես բացատրում եմ նրանով, որ մենք մեր նմանողութեան գործում անգամ անբարեխիղճ, տկար ու թեթևամիտ ենք, որ գոնէ փոխ առնելու դէպքում լաւի ու վատի, կարևորի ու երկրորդականի խիստ զանազանութիւն չենք դնում։ Որքան մարդու պատրաստութիւնը քիչ է, որքան մարդ դուրկ է խոր ընդունակութիւնից, նոյնքան նա մի երևոյթի երկրորդական, մանր ու անկարևոր կողմերին է աշխատում նմանել. ևս առաւել նոյնը կարելի է ասել մի ազգի՝ ուրիշի կուլտուրային նմանելու խնդրում։ Դժբախտաբար, հասարակութեան ղեկավարները իրենց թիւր և միակողմանի գործերի պատասխանատուութիւնից ազատ են և օգտուելով իրենց բացառիկ արտօնութիւնից, ի չարն են գործ դնում ուրիշների բարեմտութիւնը։

Շատ անգամ է լսւում, որ հայ մտաւորականը և մանաւանդ նոր, սկսնակ սերունդը չի հետաքրքրում մայրենի գրականութիւնով և գիտութիւնով, բայց թող այդ ֆիլիպպիկա կարդացողը հանդէս գայ և մատնանիշ անէ այն նիւթերը, որոնցով նա ուզում է սերունդ կրթել, այն գրքերը, որով հայ մտաւորականը հնարաւորութիւն ունի բարեխղճօրէն իւր հոգեկան ու մտաւոր պաշարը հարստացնելու և իւրացնելու, երբ չորս կողմդ մեծ մասամբ բրոշիւրներ են, երբ եղած աշխատանքները դասակարգային գիտակցութեան պրիզմայից են անցկացրուած, այն ժամանակ ինքնաճանաչ մտաւորականը

իւր զարգացման ու յառաջադիմութեան նախանձից դրդուած ակամայից ուշքը դարձնում է օտար լեզուով եղած գրականութեան և օտարի կուլտուրայի մէջ է փնտրում իրեն հետաքրքրող հարցերի լուծումը։ Ցուէք նրան լուրջ, քննական, թէկուզ թարգմանական, գրականութիւն, լայն, առողջ գաղափարներ մատակարարող գրքեր, որ նա իւր հետաքրքրութեան կենդրոնը հայ գրականութիւնը դարձնի։ Վերցրէք մեր դպրոցները օրինակի համար և կտեսնէք, որ իւրաքանչիւր ուսուցիչ ոչ միայն ստիպուած է աշակերտների ինքնազարգացման համար մտածելու դէպքում օտար լեզուով գրքեր առաջարկել ընթերցանութեան համար, այլ և շատ անգամ օտար լեզուով ձեռնարկները դարձնել դասագրքեր։

Մանաւորելով խօսքս նկատեմ, որ այս վերջին 4—5 տարիների ընթացքում մեր գրականութիւնը ոչ միայն չի տուել, այլ և խնդիր չի բարձրացրել այն առթիւ, որ լուրջ քննութեան առնուի ըստինքեան ուելի քան անհրաժեշտ «ինչ է հասարակութիւն» երևոյթը։ Ամեն օր կկարդաք թերթերում յանուն հասարակութեան կատարուած գործեր, հասարակութեան հասցէին ուղղուած, երբեմն չափաւորութեան սահմանից դուրս մեղադրականների շարքեր. կտեսնէք որ հասարակութիւնը օգնութեան է կանչւում մեծ, հասարակական գործչին պատուելու, որքան կարելի է շատ փող տալով նրան և այլն։ Բայց ով է մինչև այժմ կարդացել հէնց այդ աղմկարար թերթերում, թէ ի՞նչ է ինքը այդ հասարակութիւն ասածդ, ինչպէս է կազմւում, ի՞նչ օրէնքներ են իշխում նրա զարգացման մէջ, որոնք են նրա յառաջադիմութեանը նպաստող հանգամանքները և ի՞նչ պայմաններ արգելք են հանդիսանում նրա զարգացման ընթացքում։ Այս հիմնական ու անհրաժեշտ հարցերը երբ պարզ չեն, երբ քննութեան առարկայ չեն դարձել հասարակութեան մէջ, կարելի՞ է այդ հասարակութեան անդամներին դնահատութեան այս կամ այն չափի տակ դնել և որքան բարեխիղճ են այդպիսի հասարակութեան «գործիչները»։ Մեր հասարակութիւնն էլ զարնան հովերով կենդանացաւ, բայց արթնանալուց յետոյ իր առաջ տեսաւ միայն անա-

պատ, որտեղ մշակողների ու լուրջ ղեկավարների բացակայութիւնը խիստ աչքի էր ընկնում։

Ժամանակ է վերջապէս լուրջ, խոհեմ աշխատանք սկսելու այս հարցի համար։ Գուցէ մեզանում դեռ չունենք ծեռնհաս ու պատրաստի անձինք, որ կարողանան ինքնուրոյն կերպով մշակել այս խնդիրը, այն ժամանակ դիմենք օտար գրականութեան, թարգմանենք, փոխադրենք աչքի ընկնող հեղինակների գրուածքները, տանք վերջապէս այս ամենից առաջ լուծուելիք խնդրի բացատրութիւնը, եթէ ուզում ենք իսկապէս մեր գոյութեան իրաւունքը պաշտպանած լինել գիտակցական կերպով։

Իմ նպատակն է այստեղ առնուազն այս խնդրի կարեւորութիւնը շեշտել և տալ քաղուածօրէն եղած լուծումներից ամենատաչքի ընկնողները։ Պարտք եմ համարում յիշելու, որ ես հիւսում եմ այն մտքերն ու ուղղութիւնների էական կողմերը, որոնք իմ կարծիքով աւելի արժէքաւոր են և քննութեան արժանի, կցելով սրան նաև իմ հասկացողութիւնը։ Օգտուել եմ մեծ մասամբ հետևեալ աշխատութիւններից.

L. Gumplowicz Grundriss der Soziologie.
Г. Зиммель Соціальная дифференціація.
A. Loria Soziologie.
Н. Карѣевъ Введеніе въ изученіе соціологіи.
М. Ковалевскій Современные соціологи.

I

Ի՞նչ է հասարակութիւնը հարցը ըստ էութեան քննութեան է առնում և իւր ամբողջութեամբ հետազօտութեան նիւթ դարձնում սոցիոլոգիան։ Այս գիտութիւնը մարդկային գիտութիւնների համակարգութեան մէջ ամենավերջինն է ըստ ժամանակագրութեան և կարելի է ասել, դեռ ևս ոչ ամենտեղ և ոչ ամենքից ճանաչուած է իրր գիտութիւն։ Սոցիոլոգիան 19-րդ դարում ծնունդ առնելով ամենայն յամառութեամբ և տոկունութեամբ շարունակում է մինչև այժմս էլ իւր գոյու-

թեան իրաւունքները ճանաչեցնել տալ գիտական աշխարհում ընդհանրապէս։

Մարդկութիւնը իւր քաղաքակրթութեան, կուլտուրական զարգացման ընթացքում որքան աւելի է ընդարձակում իւր մտաւոր հորիզոնները թէ բնութեան և թէ մարդու վերաբերեալ կատարուած ուսումնասիրութիւնների աշխարհում, նոյնքան աւելի բարդանում են և բազմանում գիտութիւնները։ Մարդկութեան հետ աճում է նաև նրա գիտութիւնը։ Իւրաքանչիւր դար աշխատել է իւրովսանն նոր հորիզոն բաց անել մարդու առաջ և սրա հետ միասին առաջ բերել նոր հորիզոնը ուսումնասիրող մի նոր գիտութիւն։ 19-րդ դարը մարդկային գիտութիւնների շարքում տեղ աւեց մի նոր գիտութեան՝ սոցիոլոգիային, որի ծաղկումն ու առաջադիմութիւնը վերապահուել է մեր դարուն։

18-րդ դարի վերջին գիտական ուսումնասիրութիւնները միացած իրական կեանքի մէջ բռնկած մեծ յեղափոխութեանը, չկարողացան հասարակութեան ինչ շինելու հարցը ըստ արժանւոյն և ուղիղ վճռել և իբրև առկախ խնդիր ժառանգութիւն թողին 19-րդ դարին, որը, պէտք է խոստովանել, այս դէպքում պատուաւոր ժառանգ հանդիսացաւ։ 18-րդ դարում հասարակութիւնը ըստ էութեան քննութեան չէր առնուել, չնայելով, որ ժամանակի մեծ գլուխները և անծնաղոհ մարդիկ, օր ու գիշեր աշխատում էին հասարակութեան բարեկեցութեան ու լաւ ապագայի, «ոսկէ դարի» հիմքը դնել։

Մարդկութեան բարօրութեան համար վաղուց ի վեր կռուախնձոր դարձած «ոսկէ դարը», որ մինչև քրիստոնէութիւնը համարւում էր արդէն եղած, կատարուած մի իրողութիւն և միայն քրիստոնէութիւնից յետոյ նորից ապագայում իրականութիւն ստանալու տենչի է վերափոխւում, 18-րդ դարը աշխատում էր ձեռք բերել այն, հիմք ունենալով անհատը և նրա ոյժերը։ Կարծում էին, որ անհատն է այն ոյժը, որը կարող է փակուած դրախտի բանալին գտնել և բաց անել երջանկութեան դուռը։ Անհատն էր հասարակութեան մէջ դերիշխող ոյժը այն ժամանակուայ կարծիքով, անհատը հասարա-

կութիւնից աւելի ուժեղ էր համարուում. անհատի ստեղծագործող և ճանապարհ բացանող դերի մասին ոչ մի կասկած չէր կարող լինել։ Այս ուղղութեամբ կատարուած երկար արիւնհեղութիւնները և աւերածութիւնները թէ մտաւոր և թէ նիւթական աշխարհներում ցոյց տուին, որ ընտրուած ճանապարհը սխալ է, որ անհատի ոյժը չափից դուրս բարձր է գնահատուել և առաջ քաշուել և միւս կողմից հասարակութեան նշանակութիւնը ըստ էութեան չի հասկացուել, հասարակական ոյժը չի գնահատուել լրջօրէն։ Ահա հանդէս է գալի 19-րդ դարը այդ սխալը ուղղելու և իւր ուշք ու միտքը դարձնում է ամբողջապէս հասարակական ոյժի վրայ, քննութեան է առնում հէնց իրենց հասարակութեան իբրև մի պատմական և այժմ էլ զոյութիւն ունեցող տուեալ, այս քննութեան արդիւնքն է լինում գիտական նոր ճիւղի, սոցիոլոգիայի, հանդէս գալը յանձին Օգիւստ Կոնտի—Ֆրանսիայում։

Գիտական աշխարհը իւր ուշադրութիւնը դարձնում է նոր գիտութեան վրայ. աշխատաւորների թիւը շուտով բազմանում է. ուսումնասիրութիւնը առաջ է գնում հսկայական քայլերով։ Սակայն 19-րդ դարու կիսից յետոյ նոր գիտութեան շուրջը մի տեսակ շփոթութիւն է ծագում. մտքերը պղտորուում են և նոր գիտութեան հակառակորդների թիւը աճում է։ Արդէն բաւական յառաջադիմած քաղաքատնտեսութիւնը, նոր հիմքերով ամրապնդուած իրաւաբանութիւնը, ժամանակի իշխող բնական գիտութիւնը, փորձնական հոգեբանութիւնը, իւրաքանչիւրը իւր հերթին աշխատում է իւր վրայ առնել նոր գիտութեան առաքելութիւնը, աշխատում է ինքը լրացնել այն, ինչոր ուզում է նոր գիտութիւնը կատարել և այսպիսով նոր ծնուած մանուկ գիտութիւնը հէնց օրօրոցում խեղտել։ Այս գիտութիւններից իւրաքանչիւրը միայն իւր տեսակէտով է նայում խնդրին. հասարակութեան ինչ լինելը աշխատում է իւր յատուկ, միակողմանի միջոցներով լուծել, որ և չի յաջողուում և ոչ մէկին, քանի որ խնդիրը աւելի լայն և բազմակողմանի բովանդակութիւն ունի, քան այդ գիտութիւնների առաջարկած լուծումները առանձին առանձին վեր-

ցրած։ 19-րդ դարու 80-ական թուականներում կրկին մեծ թափով հանդէս են գալի նոր գիտութեան ջատագովներ և աշխատում են ուրոյն ճանապարհով և անկախ միջոցներով գիտութիւնների շարքում պատուաւոր տեղ տալ ու պաշտպանել սոցիոլոգիային։ Այս դէպքում առանձնապէս Իտալիան հանդէս է բերում մի շարք գիտնականներ, ապա Ֆրանսիան տալիս է ականաւոր գիտնականներ, Ռուսաստանը ևս իր հերթին յետ չի մնում մի քանի տաղանդաւոր գրողներ տալուց նոր գիտութեան ճանապարհը հարթելու համար։ Միայն Գերմանիան է, որ յամառօրէն մինչև վերջերս էլ պնդում է իւր հայեցակէտը, թէ սոցիոլոգիան առանձին գիտութիւն չէ, որ նա մտնում է այս կամ այն գիտութեան մէջ։ Գերմանական համալսարաններում մինչև օրս էլ (ինչպէս նաև Ռուսաստանում մինչև վերջերս) չկան առանձին ուսուցչապետներ, որոնք սոցիոլոգիան դարձնէին յատուկ դասախօսութեան նիւթ (բացառութեամբ Բերլինի համալսարանի ուսուցչապետ Զիմմելի, որը երբեմն կարդում է սոցիոլոգիայի մասին, բայց զանազան անունների տակ)։ Որքան և յամառէր նոր գիտութեան դէմ ժողուած կռիւը և տևական, այնուամենայնիւ նա կարողացաւ յաղթանակը տանել։

Առաջները հասարակութեան ինչ լինելը ուսումնասիրելու, քննելու դէպքում հասարակութիւնը մասերի էին բաժանում և առանձին մասերը ուսումնասիրում, կարծելով որ այդ մասերի ուսումնասիրութիւնը բաւական է խնդրի ամբողջական պարզաբանութեան համար։ Նատերը հասարակութեան մէջ տեսնում էին իբրև էական ոյժ և գլխաւոր տարը իրաւունքը և որովհետև իրաւունքը արդէն մի առանձին գիտութեան՝ իրաւաբանութեան նիւթն է կազմում, առարկում էին, որ սոցիոլոգիան այս տեսակէտից աւելորդ է. նոյնը անում էին նաև տնտեսագէտները, տնտեսութիւնը համարելով ղեկավարող ոյժ հասարակութեան մէջ և քաղաքատնտեսութեանն էին վերապահում հասարակութեան ինչ լինելու ուսումնասիրութիւնը։ Նման ընթացք էին բռնել մասամբ և բնագէտները. հասարակութիւնը նմանեցնելով օրգանիզմի և նրա զարգացման, յառաջա-

դիմութեան ընթացքը օրգանիզմի զարգացման օրէնքներով բացատրելով։

Այս բոլոր առարկութիւններում աչքի է ընկնում մի հիմնական թերութիւն, այդ այն է, որ վերոյիշեալ գիտութիւնները հասարակութիւնը ոչ թէ իւր ամբողջութեամբ են քննութեան առնում, այլ տարրալուծում են, ընտրում մի տարրը և այդ էլ համարում և էական և ամբողջը փոխարինող տարրը։ Մթթէ պարզ չէ սակայն, որ ամբողջի տեղ մասը ընտրել՝ արդէն իսկ խնդրի քննութեան ամբողջութեան համար վտանգաւոր է. հնարաւո՞ր է, որ մասը ամբողջի դերը խաղայ և պարզ ու լրիւ արտայայտէ այն, ինչոր ամբողջը ունի իւր մէջ։ Թէ իրաւունքը, թէ տնտեսութիւնը, թէ մարդու օրգանական զարգացումը հասարակութեան մէջ միայն բաղադրիչ երևոյթներ են, միայն մասեր են ամբողջ տուեալի. այդ բոլորը պէտք է քննութեան առնուին միասին վերցրած, կապակցուած միմեանց հետ, իրար հետ յարաբերութեան մէջ մտած դէպքում և ոչ առանձին առանձին։ Ինչպէս մի տուն այլ բան է, այլ հասկացողութիւն, այլ տուեալ, քան այդ տան բաղադրիչ մասերը (քար, փայտ, աւազ, կիր, կարասիներ և այլն), նոյնպէս հասարակութիւնը այլ երևոյթ, հասկացողութիւն է, քան նրա բաղադրիչ մասերը առանձին առանձին վերցրած։ Սոցիոլոգիան կոչուած է քննելու ամբողջը իւր էութեամբ, ամբողջութիւն կազմող մասերի յարաբերութիւնները, ընդհարումները, կապակցութիւնները, որոնք միացած մասեր են տալիս և ամբողջ պատկերը։

Բացի այս մի գիտութիւն ոչ միայն իւր նիւթով է մի այլ գիտութիւնից տարբերւում, այլ և իւր ուսումնասիրութեան մեթոդով. նոյն նիւթը կարելի է ուսումնասիրել զանազան մեթոդներով, զանազան տեսակէտներով, այդ դեռ չի նշանակում ի հարկէ, որ նիւթի նոյնութեան պատճառով այդ գիտութիւններից մէկի գոյութիւնը պէտք է ժխտել։ Մի բոպէ նոյն իսկ ենթադրենք, որ սոցիոլոգիան նոյնն է ուսումնասիրում, ինչ որ միւս գիտութիւնները, այդ դեռ մեզ իրաւունք չի տալի նրա գոյութիւնը իբրև առանձին գիտութիւն ժխտել, քանի որ նա այլ տեսակէտով է մօտենում հարցին։

Մինչդեռ մարդկային գիտութիւնների աղքատիկ շրջանում մի նոր գիտութեան հանդէս գալը աւելի շուտ կապուած էր նիւթի նորութեան ու առանձնակի բնաւորութեան հետ, այժմ, երբ գիտութիւնները բարդացել են, երբ ուսումնասիրութիւնների որակն ու քանակը խիստ աճել է, հնարաւոր է դարձել մի նոր գիտութեան երևան գալը հէնց իրենց այդ գիտութիւնների միջից։ Սկզբում մարդը իւր առաջ ունէր մի մեծ աշխարհ չմշակուած նիւթերի, չհետազօտուած երևոյթների և դրա համար ստեղծում էր նոր նոր գիտութիւններ համապատասխան երևոյթին և նիւթին։ Այժմ գիտութիւնները իրենք այնքան են բարդուել, որ կարիք է զգացուում քննութեան ենթարկելու հէնց իրենց գիտութիւններին, որոշելու նրանց արժէքը ընդհանրապէս մարդկային յառաջադիմութեան տեսակէտից և այս ոչ պակաս կարևոր խնդիրը իր քննութեան նիւթ է դարձնում մի նոր գիտութիւն, օրինակ սոցիոլոգիան։ Հոգեկան գիտութիւնների (geisteswissenschaften) խիստ կտրուած լինելը իրարից կարծես ըստինքեան մի դրդիչ է դառնում մի նոր, այդ բոլոր գիտութիւնները միմեանց հետ կապող, գիտութեան առաջ գալուն։

Մինչդեռ ուրիշ գիտութիւններ ըստ մեծի մասին աշխատում են նախ ուսումնասիրուելիք նիւթը մշակել, պարզել, ապա անցնել ուսումնասիրութեան մեթոդի խնդրին, նոր գիտութեան համար կարևոր է եղած նիւթի մշակութեան ձևի, եղանակի մասին հոգ տանելը, նոր մեթոդի մշակութիւնը։ Մարդկային հասարակութեան զանազան կողմերը ուսումնասիրող գիտութիւնները տալիս են միայն զատ զատ տեղեկութիւններ, որոնց սոցիոլոգիան միացնելով աշխատում է նոր մեթոդով ուսումնասիրել։ Սոցիոլոգիան ոչ միայն միւս գիտութիւնների տուած նիւթերից է օգտուում, այլ և նրանց մեթոդներից, աշխատելով գործածել սրանցից իւրաքանչիւրի իւր համապատասխան դէպքում ամբողջութիւնը հասկանալու համար։ Մարդկային հասարակութեան վերաբերեալ գիտութիւնները շաղկապողը և մի ընդհանուր նպատակի ծառայեցնողը այսպիսով սոցիոլոգիան է։

«Ժամանակակից կենսաբանութեան վրայ իրաւունք ունենք նայելու իբրև երկրի վրայ եղած օրգանական կեանքի զանազան կողմերը ուսումնասիրող բոլոր առանձին առանձին դիտութիւնների փիլիսոփայութեան վրայ. ճիշտ նոյն տեսակ ընդհանրացնող և միացնող փիլիսոփայական նշանակութիւն ունի նաև սոցիոլոգիան» *)։

Ասացի, որ նոր գիտութիւնը իր գոյութեան իրաւունքը ձեռք բերելու համար կատարել է ահագին ոլորապտոյտ ճանապարհ և անցել է զանազան շրջաններ։ Խնդիրը լաւ հասկանալու համար կարևոր է աչքի անցկացնել այն գլխաւոր ուղղութիւնները, որոնք մինչև այժմ գոյութիւն են ունեցել և այսպիսով պատմականօրէն պարզաբանել նրա ներկայ վիճակը։ Նրա մօտ 60 տարուայ գոյութեան ընթացքում հանդէս են եկել ոչ միայն զատ զատ անհատական մտածողներ, այլ և կազմուել են որոշ ուղղութիւններ, որոնք ունեցել են երբեմն գերակշռող դիրք և բաւական հետևողներ։ Այս իսկ հանգամանքը, տեսական պայքարը, ուղղութիւնների կազմուելը ապացոյց է, որ խնդիրը զուր տեղը բարձրացրած մեծ աղմուկ չէ, որ այդ հարցը այժմէական է և կարևոր։ Որքան մի ոյժ հզօր է, նոյնքան մեծ է լինում նրան դիմադրելը։ Դիմադրողների քանակից և ցոյց տուած եռանդից կարող ենք մակաբերել, թէ որքան մեծ է հակառակ ոյժը։ Սոցիոլոգիայի կարևորութիւնը և ոյժը կարելի է այսպիսով հէնց նոյնիսկ նրա հակառակորդների թուից ու ոյժից հասկանալ։

II

Օգիւստ Կոնտ եւ մտաւորական ուղղութիւն.

Սոցիոլոգիայի հայր Օգիւստ Կոնտը, որը 1830 թ. լոյս ընծայեց իւր «Դրական փիլիսոփայութեան կուրսը» աշխատութիւնը, հիմք դրեց նոր գիտութեան և ուղղութիւն տուեց սոցիոլոգիային։ Մինչև Կոնտը 18-րդ դարու փիլիսոփաները հասարակութիւնը համարում էին մարդկային մտքի գիտակ-

*) Карѣевъ Введеніе въ изуч. соц. 3.

ցական, գիտաւորեալ մի ստեղծագործութիւն։ Հասարակութիւնը, ըստ Ռուսսոյի, համաձայնութեան եկած անհատների մի խմբակցութիւն էր. մարդիկ հասկանալով հասարակական կեանքի կարևոր ու օգտակար նշանակութիւնը, փոխադարձ համաձայնութեան գալով հաստատել էին հասարակական կեանքը։ Կոնտը իւր ուսումնասիրութեան մէջ նախ բողոքում է այդ թիւր հասկացողութեան դէմ, գտնելով, որ հասարակութիւնը ոչ թէ արուեստական մի երևոյթ է, այլ բնական, նոյնքան, որքան օրգանիզմը ինքը բնական է։ Մարդիկ ոչ թէ զատ զատ կենցաղի վնասները հասկանալուց յետոյ համաձայնութիւն են կայացրել միատեղ կեցութեան, այլ այս դրութիւնը բնութեան արդիւնք է, անկախ մարդկային կամքից և ցանկութիւնից առաջ եկած։ Այս հայեացքը մի բողոք էր ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ պաշտպանուող դաղափարի. այս պատմական մեծ երևոյթը ինքը ցոյց տուեց, որ հասարակութիւնը արհեստական մի երևոյթ չէ և ուրեմն ըստ ցանկութեան էլ չի կարելի փոփոխութիւնների ենթարկել։ Իբրև բնութեան արդիւնք, իբրև մի տուեալ դրութիւն, որի առաջ գալու մէջ մարդը ինքը անմիջական դեր չունի, Կոնտը հասարակութիւնը, կամ ինչպէս ինքն է ասում «հասարակական ֆիզիկան» ուսումնասիրելու համար առաջարկում է իւր մշակած դրական փիլիսոփայութեան մեթոդը։ «Դրական փիլիսոփայութեան հիմնական ընոյթն է քննել բոլոր երևոյթները, իբրև այնպիսիներ, որոնք ենթարկուած են բնական անփոփոխ օրէնքների. վերջիններիս ճշգրիտ որոշելը և որքան կարելի է դրանց թիւը խտացնելը, մեր բոլոր ջանքերի նպաստակն է. ի նկատի ունենալով ընդսմին, որ այսպէս ասած սկզբնական և վերջնական պատճառները մարդկային մտքին բոլորովին անմատչելի են *)։

Կոնտը սոցիոլոգիան համարում է մի տեսական գիտութիւն, մի գիտութիւն, որը աշխատում որոնել ընդհանուր օրէնքներ։ Կոնտը տեսական գիտութիւնները փորձնական գիտութիւններից բարձր է գնահատում։

---

*) Карѣевъ Введ. 13 եր.

Կոնտը սոցիոլոգիան բաժանում է երկու մասի՝ շատատիկ և դիւնամիկ (կայուն և շարժուն դրութիւններ)։ Շատատիկ մասում ուսումնասիրում է հասարակութեան մէջ եղած կարգը, այն կազմակերպութիւնը, որով հասարակութիւնը կառավարւում է, որով հասարակութեան անդամները կապւում են ի մի ամբողջութիւն։ Շատատիկը ուսումնասիրում է հասարակութեան հաւասարակշռութեան պայմանները և ղեկավարող ոյժերը. իսկ դիւնամիկը զբաղւում է հասարակութեան զարգացման, յառաջադիմութեան օրէնքներով։ Կոնտը որովհետև իւր տուած դիտութիւնների համակարգութեան մէջ տեղ չէր տուել հոգեբանութեանը, համարելով վերջինիս ֆիզիոլոգիայի մի մասը, ուստի նրա տուած հասարակական կարգի ուսումնասիրութեան մէջ հոգեկան միութիւնը, հոգեկան կապակցութիւնը ի նկատի չի առնուած. նա հասարակութեան հաւասարակշռութիւնը բացատրում է իբրև բնութիւնից դրուած մի դրութիւն այնպէս, ինչպէս օրգանիզմի դրութիւնն է։ Սակայն նա մոռանում է, որ առնուազն ժամանակակից հասարակութեան ուսումնասիրութիւնը ցոյց է տալի, որ որքան մարդկային հասարակութիւնը յառաջադիմում է, այնքան ֆիզիքական արտաքին կապերի տեղ հոգեկան կապերն են դեր խաղում։ Կարևորն այն է միայն, որ Կոնտը պահանջում է հասարակական կարգը, հաւասարակշռութիւնը ուսումնասիրելու դէպքում ուշք դարձնել ամբողջութեան վրայ։ Կոնտն է, որ առաջին անգամ շեշտում է, թէ հասարակութիւնը ըստ էութեան ուսումնասիրելու դէպքում պէտք է խոյս տալ տարրալուծելու, մասերի բաժանելու մեթոդից և ամբողջութիւնը պէտք է առաջ քաշել և. ամբողջը անբաժան կերպով ուսումնասիրել։

Հասարակութիւնը ուսումնասիրող դիտութեան դիւնամիկի էական կողմը Կոնտը համարում է մարդկութեան յառաջադիմութիւնը կամ, աւելի ճիշտ ասած, զարգացումը. Կոնտը ընդունում է, որ առհասարակ մարդկային հասարակութիւնը միատեսակ է զարգանում և որ մտաւոր զարգացումը մարդկային առաջադիմութեան գերակշռող սկզբունքն է։ Քանի որ մարտու մտաւորն է ղեկավարում հասարակութեան ընթացքը,

քանի որ միտքն է առաջ մղող և ուղղութիւն տուող ոյժը հասարակական յառաջադիմութեան խնդրում, ուստի հասարակութեան արտաքին կեանքն էլ պէտք է իւր հերթին համապատասխանէ այդ մտաւոր զարգացմանը: Մարդկային մտաւոր զարգացման մէջ Կոնտը տեսնում է երեք շրջան. աստուածաբանական, մետաֆիզիկ և դրական-գիտական: Սրան համապատասխանում են հասարակութեան արտաքին կեանքի զարգացման երեք շրջաններ — սկզբում զինուորական շրջան, ապա օրէնսդրական, որին հետևում է ինդուստրիական շրջան:

Որքան և Կոնտը դրական փիլիսոփայութեան հետևող էր, որքան և. պահանջում էր ուսումնասիրել երևոյթները և այստեղից հանել ընդհանուր օրէնքներ, սակայն վերջին դէպքում նա շեղւում է իւր տուած օրէնքից: Կոնտի տուած հասարակութեան զարգացման երեք մեծ շրջաններում ոչ թէ նրա երևոյթների, եղած պատմութեան ուսումնասիրութեան արդիւնք են, այլ իւր մտածած, իւր նախօրօք կազմած ծրագիրն է, որի համաձայն նա ուզում է հասարակութեան մինչև ինքը ունեցած զարգացումը բացատրել, ուրիշ խօսքով՝ նա ունի իւր տրամաբանական մտածողութեան տեսական օրէնքները և. աշխատում է հասարակութեան սկզբից մինչև ինքը կատարած զանազան ձևափոխութիւնները որև է կերպ յարմարացնել իւր ստեղծած օրէնքներին:

Կոնտը հասարակութիւնը համարում է միակ տուեալ, որի հետ սոցիոլոգիան գործ պիտի ունենայ. անհատի գոյութիւնը գիտական ուսումնասիրութեան տեսակէտից նա ժխտում է: Հասարակութեան զարգացման մէջ միայն հասարակական մտաւոր ոյժն է դեր խաղացողը և ոչ անհատական ոյժը: «Հանճարեղ մարդիկ, ասում է նա, որոնց մեծ մասամբ վերագրում էին կատարուած յաջողութիւնները, կարծես միայն նախորոշուած շարժման իսկական գործիքներ էին»:*) Այսպիսով նա մի կողմից կռւում էր 18-րդ դարու հայեացքների դէմ, երբ անհատական ոյժը չափազանց էր գնահատւում, միւս կողմից

*) Карѣевъ—Введ. в. из· соц. 23-եր.

պակայն ընկնում էր մի սխալի մէջ, անհատին գործիքի դեր տալով հասարակութեան զարգացման խնդրում։

Կոնտի այս տեսութեան ամենաթոյլ կողմն այն է, որ նա լռելեայն ընդունում է գոյութեան և մտածողութեան համապատասխան լինելը։ Նրա կածիքով միտքը և գոյութիւնը հաւասարազօր գաղափարներ են և իրար ծածկում են. միտքը իւր ամբողջ բովանդակութեամբ համապատասխանում է գոյութեանը. այն, ինչ որ միտքը արտադրում է և ունի իւր մէջ, ըստ Կոնտի գոյութեան համապատասխան է։ Այս տեսութեան սխալը հէնց այն է, որ միտքը գոյից նիւթ առնելով, կարողանում է իւր ծնողից աւելի բան ծնել իւր իսկ միջից։ Միտքը իւր հերթին ուսումնասիրում է գոյութիւնը, այն ինչ որ կայ. բայց ոչ անխուսափելիօրէն այն ամենը, ինչ որ գոյութիւն ունի միայն, այլ աւելի երևոյթներ։ Մտքի մենք շատ երևոյթներ, գաղափարներ ունենք, որոնք ըստ ինքեան ոչ գոյին են համապատասխանում և ոչ էլ գոյութիւն ունին։ Բաւական է յիշել մեր երևակայութիւնը և նրա արդիւնքները, մեր ցնորքները, մեր իդէալները մի կողմից և գոյութեան իսկապէս ինչ լինելու և ինչպէս լինելու, հասկանալու անհնարինութիւնը միւս կողմից, տեսնելու համար՝ թէ ինչ վիհ կայ երկու տարբեր երևոյթների մէջ։ Այս տեսակէտից որքան արժէքաւոր է Կոնտի սոցիոլոգիայի ստատիկը, թէև քիչ մշակուած, նոյնքան թոյլ և միակողմանի է նրա սոցիոլոգիայի դինամիկը։ Աւելացնենք նաև այն, որ Կոնտը մարդկային հասարակութեան զարգացման ղեկը տալիս է մտքին և ոչ թէ ընդհանրապէս հոգուն։ Միտքը մարդկային հոգեկան աշխարհի միայն մի արտայայտութիւնն է և մի կողմի ղեկավարը, մինչդեռ հոգին աւելի խորը և բազմակողմանի է և ունի այլ և այլ արտայայտութիւններ. օրինակ կամքը, զգացմունքները, որոնց թէ գոյութիւնը և թէ կատարած դերը մարդու կեանքում ժխտել չի կարելի։

Մանրամասն քննութեան առնել Կոնտի մարդկային հասարակութեան զարգացման երեք շրջանները այստեղ աւելորդ է. բաւական է յիշել ընդհանուր պատմութիւնից մի քանի դէպքեր ցոյց տալու համար, որ Կոնտի տուած բացատրու-

թիւնը սխալ է։ Օրինակ միջին դարում իշխում էր մետաֆիզիկ աստուածաբանական ուղղութիւնը մարդկանց մտքերում. բայց հասարակական կեանքում չկար զինուորական ամուր կազմակերպութիւն. կամ հէնց նոր դարում, երբ իշխում է դրական փիլիսոփայութիւնը, մենք չենք տեսնում ամենուրեք հասարակական կազմում ինդուստրիական կազմակերպութիւն։

Կոնտը ունեցել է բաւականաչափ հետևողներ, որոնք ոչ ըստ ամենայնի հետևել են իրենց ուսուցչին, այլ օգտուելով նրա տուած հասարակութեան ինչ լինելու բացատրութիւնից, աշխատել են իրենց հերթին վերլուծել հասարակութեան մէջ գործող ոյժերը, ընտրել դրանցից մէկը և այդ գործօնով բացատրել հասարակութեան զարգացումը։ Այդպիսիներից են Աշլի Կվէտլէը, Բօկլը, Մաքս Միւլլէր և այլն. սրանք բոլորն էլ մարդկային հասարակութեան զարգացման մէջ տեսնում են իբրև մշտափոփոխ և յառաջադիմող տարր միտքը և մարդկային գիտութիւնը, իսկ մարդու հոգեկան միւս արտայայտութիւնները նկատում են իբրև աւելի կայուն տարրեր. այդ պատճառով մարդկային քաղաքակրթութեան զարգացման էական դրդիչ գործօնը համարում են գիտութիւնը, միտքը (Բօկլ. Անգլիայի քաղաքակրթութեան պատմութիւնը)։

Pessimist

(Կը շարունակուի)

ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ [1]

ՐՕԶԵԳԵՐԻ

Զատկի կիրակի
Տասն և վեցերորդը տարուայ մէջ։
Սիրելի անձնուէր բարեկամ։

Սիրով յօժարւում եմ ցանկութեանդ՝ նամակներիս մէջ քո գրութիւնների բովանդակութեան մասին ակնարկներ չանել։ Դու փափագում ես, որ նրանք ամբողջովին նուիրուած լինին Ադամի ընտանիքին։ Քո ասելով վէպի նման բան է ստացուելու։ Թերևս։ Դուցէ և հետաքրքրական լինի նրա կարդալը, սակայն իրականութեան մէջ երբեմն շատ անտանելի է լինում։

Նամակներս մարդու ցոյց չ'տաս, եթէ ոչ անկարելի կ'լինի որևէ մէկի աչքին երևալ։ Տպագրութիւնը էլի մի կերպ կարելի է անել—նրան ոչ ոք չի հաւատայ։

Ձեր քաղաքացիները ոչինչ չէին հասկանայ այն խորհրդաւոր աշխարհից, ինչ որ իրանից ներկայացնում է դիւղը աւագ շաբաթուայ օրերին։ Ամբողջ շաբաթ է մի մեծ տօն է։ Ամեն բան, ինչ աշխարհային է, երկրորդական տեղն են անցնում, տրնային բոլոր աշխատանքները քողարկուած են զարմանալի ներդաշնակցութեամբ, որոնց մասին աշխարհիկ մարդիկ ոչ մի գաղափար չունին։ Թէ որ ինձ էլ մնացած չլինէին մանկութեանս յիշողութիւնները, ինքս էլ ոչինչ չէի հասկանայ, չէի գնահատի այն ամենը, ինչ որ կատարւում էր աչքիս առաջ։ Ձը ծաղրես, փիլիսոփայ, բայց ճշմարիտն եմ ասում, որ երբեմն ննջեցեալներից կարծես թէ յարութեան հոգմ է փչում. դարաւոր հանդուցեալները կարծես կենդանանում են... կիրակի օրը խաչելութիւնը իջեցրին պատից և դրին սեղանի վրայ։ Երեկոները տնեցիք հաւաքւում են սեղանի շուրջը և Ռոխերը կամ Ֆրանցելը

1) Լումայ № 4

կարդում են Տիրոջ չարչարանքների մասին։ Դորանից յետոյ միայն, առաջին անգամ ամբողջ օրուայ ընթացքում ծերունիները որևէ տաք կերակուր են ընդունում։ Աւագ հինգշաբթի օրը ընթրիքը սովորականից աւելի ճոխ էր, ի նշան խորհրդաւոր ընթրիքի, որից յետոյ գնացինք ջրհորը և ոտերը լուացինք։ Բոլորեքեան բոբիկ էին մանդալիս խոտի վրայ, որը արդէն կանաչել էր։ Ասում են թէ ով աւագ հինգշաբթի օրը բոբիկ մանդայ, ամառը նրան կայծակ չի խփի։ Ուրբաթ և կիրակի օրերը անցրինք եկեղեցում։ Պատուհանները, սրբոց պատկերները—բոլորը ծածկուած էին կապոյտ շորով. խաչելութիւնը դրած էր գետնի վրայ եկեղեցու մէջտեղը և ամենքը խոնարհւում էին մինչև գետին և համբուրում խաչած ծեռները... ոչ զանգահարութիւն, ոչ երգեհոն, նրանց փոխարինում են քշոցները։

Ուրբաթ օրը, ուշ գիշերին, Ադամը միայնակ կարծելով իրան, չոգեց խաչելութեան առաջ և խորասուզուեց աղօթքի մէջ։ Հեկեկանքի ծայներ լսեցի... Այս մարդը ծանր վիշտ ունի և ես գիտեմ թէ ինչ է այն։ Զատկի գիշերը սարի գագաթին խարոյկ է վառած ի նշան որսորդութեան սկզբի։ Ալմգայի երիտասարդները արդէն մի քանի օրէ ցախեր են ժողովում և, երբ Հոյղենդորֆում վերջացաւ ժամերգութիւնը, աւագ շաբթուայ մռայլ տրամադրութիւնը հենց որ խարոյկը վառեցին, փոխուեց սանձարձակ ուրախութեան։ Տաք, լուսնկայ գիշեր էր. ծիւնը արդէն վերջացել էր և սոճի հաստ ճիւղերի վրայ տեղաւորուել էին երաժիշներ, սրանք կարող էին անարգել նուագել ու զածի չափ, առանց վախենալու անհանգստացնել փայտմորիկներին, որոնք այդ տարի դեռ չէին նկատւում շրջակայքում։

Ռոխերը, Ֆրանցելը և ես էլ գնացինք. բայց Ռոխերը, որի ծեռքը դեռ փաթաթած էր, այնպէս տխուր էր, որ ոչ երիտասարդների հանաքները, ոչ աղջիկների ծաղրածութիւնները չ'էին զուարճացնում նրան։ Առանձին կերպով աչքի էր ընկնում իր կոպիտ չարութիւններով Մարենցելի «Վարազ» կոչուած որդին։ Նա այնպիսի անվայել հանաքներ էր թոյլ տալիս իրան, որ աղջիկները զզուանքով փախչում էին նրանից։ Խարոյկի

բոցը ուրախ վառւում էր. նրա մօտ վառեցին փոքրիկ խարոյկներ, որոնց վրայ թռչկոտում էին երիտասարդները: «Վարազ»-ը մղեց Ռոխերլին էլ թռչելու: Ռոխերլը թռաւ, բայց քիչ մնաց ընկներ կրակի մէջ, ես բռնեցի նրան: Յայտնուեց որ «Վարազը» տղայի ոտից թել էր կապել և նրա թռչելու ժամանակ թելից քաշել: Ես պաշտպան հանդիսացայ Ռոխերլին և և սկսեցի քոթկել «Վարազին», նա բղաւում էր թէ հանաք էր անում:

—Այս էլ հանաքի համար է. ասացի և շարունակեցի դանակոծել: Շուտով միացան և աղջիկները: Կարծում էր թէ նրանք աւելի մեղմ կ'վարուին հետը և տղային յանձնեցի իրենց. բայց շուտով ստիպուեցի միջամտել նրա կեանքը ազատելու համար: Աղջիկները ուզում էին խեղդել, կտոր կտոր անել նրան. այդպէ՞ս վարուել Ռոխերլի հետ, որի ձեռքը ցաւում է, եկէք իրան անպիտանին դցենք կրակի մէջ:»

Վերջապէս «Վարազը» դուրս պրծաւ նրանց ձեռքից և փախաւ: Իսկ Ռոխերլին ամէն կողմից ցաւակցութիւններ էին յայտնում: Այստեղ նկատեցի, որ այս տխուր երիտասարդը բոլոր աղջիկների կուռքն էր: Սակայն նա չի էլ կասկածում, կամ գուցէ նրա համար միևնոյն է այդ. տղան փախաւ նրանցից:

Երբ միասին տուն էինք վերադառնում, յանկարծ Ռոխերլը զուարճանալով լուսնի լուսի տակ լեռնային դաշտանկարներով, ասաց չափազանց տխուր ձայնով.

Որքան դեղեցիկ է տիեզերքը:

Լուռ էինք, թւում էր թէ ինչոր ուզում է ասել ինձ, սակայն դրա փոխարէն կանգնեց և յենուեց ծառին:

—Հանդել—ասաց նա ցածր և լռեց. նա խորը ախ քաշեց և ճնշուած ձայնով շարունակեց.

—Բարբելը լաց էր լինում:

—

Բարբելը լաց էր լինում:

Ի՞նչ է նշանակում այս: Բարբելը, որ փակած է եօթը կողպէքի տակ, որը առաջ այնքան զուարթ, այնքան զրուցասէր

էր։ Հին ժամանակները, այսինքն եկուոր վարձուորի երևալուց առաջ։ Ե՞րբ էր լաց լինում, ինչի՞ համար։

Ոտքերը էլ ոչինչ չասաց։

Մօտեցանք տանը։ Նա ձեռքը մեկնեց ինձ, կարծես թէ խոստովանութիւնից յետոյ, բարեկամական զգացմունք զգաց դէպ ինձ։

—Բարի գիշեր, Հանդել։

Այս Զատկի գիշեր աչքս չեմ փակել։

Բարբելը լաց էր լինում...

Տասնեօթներորդ կիրակի.

Շարունակում եմ։ Զատկական զուարճութիւններն անցան։ Այս մարդկանց կրծքերից կարծես ուրախութեան պաղ աղբիւր դուրս բղխեց։ Քրիստոս յարեաւ և հասաւ գարունը։

Մեր առաջ տարածուած հովիտներում, մարգագետինների վրայ այնպիսի կանաչ երևաց, որ ոչ հին և ոչ նոր նկարիչները անզօր են նկարագրել։ Մարգագետինների միջև սահում են աղբիւրները, որոնցով ներքև է ծորում սպիտակ ծմեռը։ Հեռուում բարձր սարերի վրայ դեռ ամեն ինչ ծածկուած է ծիւնով։ Այժմ աշխատում ենք մարգագետինների և արօտատեղիների վրայ. պէտք է լուալ, սանրել, սնունդ և ջուր տալ նրանց։ Առաջին գործը կերակրելն է, որքան որ պարարտութիւնը բաւականանում է. այնուհետև խոսր սանրում ենք փոցխով, մաքրում ենք չոր ճիւղերից և աղբից, ուղղում ենք խլուրդների փորփրած տեղերը, այնպէս որ դետինը բոլորովին հարթուում է, կարծես արդուկով ողորկած լինի։ Յետոյ կիրճերից ջուրը ջրփողն ենք տանում, իսկ այն տեղից կողքի փորուածքներով թողնում ենք ողողելու մարգագետինը և արբուցանել ադահաբար չար կլանող դետինը, որի վրայ ծաղկում են սուր, թարմ խոտերը։ Դետնի այս ոռոգումը սքանչելի զբաղմունք է։ Երբ մարգագետինը բաւականին ջրուեց, դետինը կարծես թէ փակեց իր միլիոնաւոր բերանները և ջուրը փայլուն քօղի նման հոսում է հովտի մէջ. այդ ժամանակ ծածկում ենք ջրփողը։

Երեկ Ադամը կանգնած էր դաւթում, նայում էր կտրան

և գլուխը թափահարում։ Ծիծեռնակները դեռ չեն երևում։ Իսկ երբ Աւետումին նրանք չ'կան, վատ նշան է, որովհետև նրանք երջանկութեան բանբեր են համարուում։ Ադամը տեսել է, թէ ինչպէս նրանք պատում են զանգակատան շուրջը։ Բայց ինչո՞ւ չեն մօտենում նրա տանը։

—Հայր, ասում եմ ես—այսուհետև ծիծեռնակները աւելի ուշ ուշ կ'գան մեր կողմերը և վերջապէս բոլորովին կ'դադարեն մեր կողմերը թռչելուց։

—Մի՞թէ երկնային դատաստանը արդէն մօտեցել է։

—Երկնային դատաստանը այստեղ ոչ մի մեղ չունի։ Պատճառն այն է, որ սկսել են թռչուններին չափից դուրս կոտորել։

Եւ պատմեցի, թէ ինչքան են կոտորում թռչուններին Դալմացիայում, հարաւային Տիրոլում և Իտալիայում։

Նա ձեռները ծալած լսում էր ինձ սպշութեամբ։

Այս շաբաթ մի քանի անգամ փորձեցի նայել Բարբելի աչքերին։ Նրանք չեն փոխուել. միշտ նոյն հեզ, մանկական մեծ մեծ աչքերն են։ Ճիշտ է, նրանց մէջ մի ինչ որ գէջ փայլ է երևացել։ Նա էլ է երբեմն կտրան նայում։ Եկան երաժշտահաւերը, սարեակները, սակայն ինչպէս երևում է, նրան բաւական չեն դոքա։ Ինձ վրայ ոչ մի ուշադրութիւն չի դարձնում և այդ ծանր է ինձ համար։ Գոնէ մի չարանար էլա ինձ վրայ։

Զատկի երկուշաբթի օրը եկաւ Կօնրադը, նա որ գրնդակահարել էր Ռոխերլին։ Նա մտաւ շատ քաղաքաւարի կերպով, առանց զէնքի և հարցրեց տանն է Ռոխերլը թէ ոչ։

Մայրը փնթփնթաց՝ երևի անտառումն է, որս է անում։ Ուրիշ ինչ տեղ կ'լինի։

Հայրը բարեսրտութեամբ աւելացրեց, թէ Ռոխերլը ժամից դեռ չէ վերադարձել։

Որսորդը դուրս գնաց և նստեց ջրհորի մօտ գոխի վրայ, Զատկական սովորութիւնների համաձայն հայրը հրամայեց կնոջը հիւրասիրել երիտասարդին. սկզբում կինը վրդովուեց։ Հիւրասիրե՞լ որդու մահաբեր թշնամուն. յետոյ երևի քրիստոնէական զգացմունքները գերակշռեցին և սկսեց ափսէի վրայ միս կր-

տրտել, դարսեց ծուանները, մի քանի կտոր հաց։ Բայց որսորդին անձամբ մատուցանել նա անկարող էր. «Տէրը չի պահանջի այդ ինձանից», և ամենն ինձ պահեց։ Զղում էի որ իրաւացի էր։

Իսկ որսորդը դեռ նստած էր և սպասում։ Վերջապէս երևեցաւ Ռոխերլը իր տօնական զգեստով, դդակը ծաղիկներով զարդարած։ Որսորդը ընդառաջ գնաց.

—Քեզ եմ սպասում, ասաց նա։

—Ահա թէ ի՞նչ,—պատասխանեց Ռոխերլը առանց կանգ առնելու.

—Նստիր այստեղ, Ռոխերլ. ներս չեմ ուզում գալ։ Խօսելու բաներ ունիմ քեզ հետ։

Ռոխերլը դժկամակութեամբ նստեց դռան ափին։

—Ուզում էի հարցնել ինչպէս է ձեռքը։

—Ինքդ տեսնում ես. ասաց Ռոխերլը փաթաթած ձեռքը ցոյց տալով։

—Գնդակը դո՞ւրս եկաւ։ Կարողանո՞ւմ ես աշխատել։

—Դեռ չեմ կարող շարժել։

—Ցաւո՞ւմ է։

—Իհարկէ. մանաւանդ դիշերները։

—Եթէ գնդակը դուրս դար, ասաց որսորդը և լռեց։—Գիտես շատ չիմար բան եղաւ, շարունակեց նա։—Անցեալ շաբաթ երեք ամսուայ ռոճիկս ստացայ։

—Լաւէ, պատասխանեց Ռոխերլը։—Տօներին փողը միշտ հարկաւոր է։

—Դորա համար չէ, Ռոխերլ. գիտես, մի խնդիր ունիմ քեզ։ Դու պէտք է ձեռքիդ համար մի օրինաւոր բժշկի հետ խորհրդակցես։ Թող տեսնի գնդակը դուրս է եկել թէ ոչ, որպէսզի այդպէս թերանդամ չ'մնաս։ Իսկ եթէ չէ դուրս եկել... չէ իմ պարտքս է հոգալ դորա մասին։ Մի նեղանայ վրաս, Ռոխերլ։

Նա բացեց թաշկինակը և միջից հանեց փողերով լի քսակ։

Ռոխերը զայրացած շտապով բարձրացաւ տեղից։

—Ցարգելի Կօրնադ, ինչ որ քաշել եմ այս ձեռքի պատճառով, անհնար է որևէ բանով փոխարինել։ Իսկ որպիսի տան-

ջանքներ կան դեռ ապագայում։ Հաւատում եմ, որ խղճում ես ինձ։ Չէ՞ որ քո պատճառով է, որ ամբողջ կեանքս անպէտք է դառել։

Որսորդը մի անգամ էլ նայեց տանը և հեռացաւ։ Իսկ ես տեսայ, որ Ռոխերլը իր մօր զաւակն է։ Եթէ մարդիկ կարծում են թէ փողով կարելի է ամէն ինչ ուզել, կ՚հիասթափուին Ադամի տանը։ Այստեղ ամէն տեսակ դրամներ չեն ընդունւում։

Գրե՞լ եմ արդեօք քեզ, որ մեր դժուարահաւան Ադամի փոխարէն լանդտագի ներկայացուցիչ ընտրեցին Կուլմբօկին. այնբիրտ, կոպիտ Կուլմբօկին, որ, զիջողութիւններ անել չգիտէ։

Այ թէ ինչ բան է անցնում մտքովս. եկ ամառը արի Ալմգա։ Այստեղ աւելի զով է և կեանքը աւելի նախամարդկային, քան հարաւային Տիրոլում։ Հօյզենդորֆի հիւրանոցում ամէն ինչ կ՚գտնես։ Միմիայն Հաւաննայի սիգարներ բեր հետդ։ Ինքդ կ՚տեսնես թէ ինչպէս եմ աշխատում։

Տասնեւմեկերորդ կիրակի

Ահա եկաւ և մայիսը։ Այժմ, ծերուկ, կարող եմ քեզ այստեղ հրաւիրել։ Ամէն տեղ ծաղիկներ են ծաղկում, նոյն իսկ անդուկի վրայի նկարած ծաղիկները, երբ արեւը լուսաւորում է նրանց։

«Կոնտինենտալ փոստի» հրատարակիչը քաղաքով հրապուրելու փորձեր է անում ինձ։ Արժանացրեց նաև ամենասիրելի նամակի։ Ասում է որ այլևս չեն պահանջում ինձանից փաստեր բնաւորութեանս և խօսքիս հաստատ մնալու համար։ Իսկ ինձ հարկաւոր է վերադառնալ մարդուն աւելի վայել լուսաւորեալ աշխարհը։ Քաղաքը դրախտի նման է դառել, բոլոր այգիները ծաղկել են։ Բայց չէ՞ որ այստեղ, մեզ մօտ էլ դրախտ է և այն՝ Ադամն էլ մէջը։ Զկայ միայն Եւան։ Այնուհետև պ. Շտէյնը հաւատացնում է, որ այժմ ես կրկնակի ցանկալի կ՚լինեմ իբրև աշխատակից... Ի՞նչ քաղցր է երգում. երբէք նա այդպէս չէ երգել։ Ի հարկէ որ ես կոյր եմ մնում դէպի իմ անձնական օգուտս, շնորհակալութիւն եմ յայտնում նրան և գրում որ անկարող եմ հետևել նրա հայրական խորհուրդներին,

որովհետև պարտաւորուել եմ ամբողջ տարի ծառայել։ Ի հարկէ նա կ'ափսոսայ... ոչ ինձ, այլ իր քսան հազար կրօնը։

Վերջապէս օգտակար դարձայ այս ամայի անկիւնում. իրանք ամենքն էլ անկեղծութեամբ խոստովանում են այդ։ Այլևս վախենալու ոչինչ չունեմ, կարող եմ մինչև վերջը աշխատել։

Ապրիլի կէսից հերկումենք։ Երբ պէտք եղաւ դուքանի մասերը կարգի բերել, ամենաանհրաժեշտ բանուորը դտայ իմ մէջ. այսինքն՝ դարբինը։ Ծերունին նոյնիսկ հիացած էր ինձանով։

Սկզբներին հերկելը չափից դուրս յոգնեցնում էր ինձ, այժմ գործն արդէն կարգին առաջ է գնում։

Իսկ հողի բուրմունքը։ Գետնի այդ սքանչելի հոտը։ Դէմքին փչում է ինչ որ թարմ, զովացուցիչ, խիժաւէտ... դժուար է նկարագրել այդ։ Ես հասկացողութիւն էլ չունէի այդ կեանքի շնչառութեան մասին։ Իսկ ինչպէս է ցնծում հողին, եթէ դիտենաս։

Սարի դիք զառիվայրի վրայ պէտք է ներքևից վերև հերկել, երբ մենք վերևն ենք բարձրանում, ցածումը արդէն Ադամը պատրաստւում է ցանելու։ Բաց դլխով, հեղ և վսեմ միաժամանակ, ծերունին քայլում է շառատ ակօսների միջով և իր հատիկները յանձնում հողին, կարծես թէ սրբագործութիւն է անում։ Ցորենի առաջին բուռը սրբութեամբ բերանին մօտեցրեց։ Նա համբուրեց հատիկները ինչպէս սրբութիւն։ Կեանքումս երբէք չեմ ունեցել այն զգացմունքները ինչ ունեցել եմ այս օրերին։ Կարծես գտել եմ իմ սեպհական տունը, կարծես անառակ որդին կրկին վերջապէս վերադարձաւ իր հինաւուրց, սուրբ հայրենիքը։ Այո, բարեկամ, գիւղացին—ամենահին մեծ ազնուականութիւնն է։ Ամենից առաջ Արարիչը, իսկ նրանից յետոյ—նորա լիազօր գիւղացին։ Դրան պէտք է հաւատայ նա, ով ինքը անձամբ ձեռքը դրել է բաց ակօսին...

Վարելուն հետևում է ցանքը, ցանքից յետոյ հողը ցաքանում և հանդիստ են թողնում։ Այնուհետև ինքներս քաշւում ենք մի կողմը և աղօթում ենք անձրևի ու արևի լոյսի համար։ Սորանից յետոյ ինչ էլ պատահի ցորենին, հողագործից

ոչ մի կախում չունի. վերջինիս միայն ծեռները ծալել և աղօթել՝ «Հայր մեր» դիտց մեր հանապազօր տուր մեզ։»

Ինչ թաւում է, որ եթէ գիւղացին անաստուած դառնայ, նրա հողի վրայ այլևս ոչինչ չի ծաղկի... թէպէտ մենք էլ մեր կսրոդացածը կ'անենք. այսինքն մարկեդով հողի կոշտերը կրմանրենք քաղհան կանենք աւելորդ խոտերը, հաստած արտը կրպաշտպանենք զանազան շատակեր կենդանիներից մինչև այն օրը, երբ երթանք մանգաղով հնձելու հասունացած հասկերը..

Այժմ դորձ եմ ածում չսպիտակացրած քաթանի շապիկ. եթէ դիտենաս թէ որքան դուրեկան և թեթև է դա. ինչպէս ազատ է շնչում մարդ, ինչպէս հով է նրանով աշխատելիս։ Երանի թէ երևելի մարդիկ հասկանան թէ ինչ դժբաղտութիւն է ներկայացնում նորածև զգեստը, թէ ինչ ծիծաղելի կապանքներ են նրանք։ Ներկերով ճոխացրած այդ պատեանների միջից չեն կարող դոլորշիանալ ոչ մի հիւանդութիւն և ոչ մի մեղք։ Այս ամենը միում է մարդու մէջ...

Այդ կողմից ես չեմ հասկանում մեր Բարբելին։ Նա մինչև այժմ էլ հագնում է իր ծմեռուայ հաստ վերնազգեստը. մօրն էլ դուր չի գալիս այդ, աղջիկը խոստովանել է նրան, որ իր ամառուայ կարճ զգեստը տուել է մի աղքատ կնոջ նրա մանկիկի համար վերմակ կարելու համար։ Սովորաբար աղքատները աշխատում են Բարբելին տանը գտնել—այդ դէպքում նրանք աւելի են ստանում։ Նա դիտէ լսել խեղճերի դանդատները, գիտէ մխիթարական խօսքեր ասել նրանց. այս էլ իր տեսակի ողորմութիւն է։ Ադամի ասելով կարողութիւնից խեղճերին մասն հանելը լաւ բան է, իսկ կարեկցել նրանից աւելի լաւ։

Ես զուարճանում եմ մայիսի օդով որքան հնարաւոր է։ Դեռ ուշ երեկոյին, երբ եղները դոմում դարման են ուտում (այժմ որպէս աշխատողներ աւելի լաւ սնունդ են ստանում քան ծմեռը, երբ ծոյլի նման կանգնած էին), ես նստած եմ թումբի վրայ մաքուր օդում և դիտում թէ ինչպէս են երկնքի վրայ աստղերը մէկ մէկ վառուում... քանի անգամ նկատել եմ, որ Ռոխերլը այդ ժամին ծախ ծեռքով մեծ դժուարութեամբ փնչիկներ է կապում և դարսում պատուհանի վրայ

Բարբելի համար։ Այսպէս մի անգամ Ռոխերլը կանգնեց կեռասենու մօտ և սկսեց հայհոյել և ատամները կրճտացնել։

—Ռոխերլ, տարօրինակ է երեկոյեան աղօթքդ։

Նա բռունցքը խփեց ճակատին։

—Ձեռքդ ցաւում է՞, ի՞նչ է։

—Բարբելը, բացականչեց նա։

—Բա՞րբելը, քո՞յրդ. ի՞նչ է պատահել նրան։

—Ամեն մի պատահածին աւելի է սիրում, քան ինձ։

—Ո՞ւմ մասին է խօսքդ։

—Այդ ես գիտեմ։

Մի՞թէ ինձ է ակնարկում, անցաւ մտքով, նա ընկաւ դիրկս, սկսեց լալ, հառաչել և վերջապէս ասաց—չէ՞ որ սիրում եմ նրան, կ'սպանեմ ինձ։

Փորձում էի նրա յուսահատութեան հանաքի ձև տալ, բայց ինքս էլ վրդովուած էի։

—Հեշտ է քեզ հանաքներ անելը, ասաց նա մի փոքր հանդարտուելով,—ես գիտեմ թէ ում մասին են խօսում։

Նա դնաց քնելու, իսկ հովտում աղմկում էին առուակները....

Տանևիններորդ կիրակի.

Այս նամակը, բարեկամս, երևի թէ կը դրեմ շարունակ երկու կիրակի։ Պատճառն այն չէ, որ մատներս կոշտացել են. և ոչ այն, թէ այժմ դերադասում եմ ժամանակս թարմ օդում անցնել։ Երկար պատմութիւն է այդ։ Եթէ միայն վէպ լինէր այդ, իսկ ես—վիպասան եմ։ Բայց սա ճակատագիր է և ես անբաղդ մարդ եմ։ Երևի արդէն հասկանում ես, որ մեզ մօտ ինչ որ վատ բան է կատարւում։ Կամ քո մէջ դեռ անվայել մտքեր չեն ծնուել։ Սակայն կարելի էր հո ժամանակակից ճաշակով վէպ գրել մի քաղաքացու մասին, որ դնացել է գիւղ, ընդունուել բարի մարդկանցից և փոխարէնը հատուցանում է դայթակղեցնելով նրանց միակ աղջկան...

Խոստովանում եմ, որ եղել են բոպէներ, երբ փորձութիւնը մօտ էր։ Բայց ես դիմադրել եմ դրանց։ Սակայն ուրա-

խանալու ոչինչ չունիմ.—չէ՞ որ այնուամենայնիւ ուրիշների դրութիւնը վատ է լինում։

Բայց պատմեմ կարգով, ապա թէ ոչ քո մտքերն էլ կշրջփոթեմ։ Ինչպէս արդէն քեզ յայտնի է, իմ ամենահին ծանօթս Հոյզենդորֆում դպրոցի ուսուցիչն է Գուիդօ Վինդէրը, որը և ուղարկեց ինձ Ադամի մօտ։ Ժամանակով ինչ որ լարուած յարաբերութիւններ առաջ եկան մեր մէջ. այժմ ամեն ինչ պարզուեց։ Նա դեղեցիկ չէ։ Այնպէս ծաղկատար է, որ երեսը կարծես դրոշմուած է եղել հիւսուած աթոռի վրայ, ինչպէս ասում է Ռոխերլը։ Բացի դրանից անշնորհք, մեծամիտ և կամակոր է, թէպէտ ընդհանրապէս առողջ երիտասարդ։ Կիրակի օրերը մենք պատահում ենք իրար և զրուցում։ Ես գնում եմ նրա մօտ գրքերի և լրագիրների համար, որ ինձ ուղարկում են նրա անունով. սոքա հրապուրում են ինձ միմիայն նրանով, որ Ադամի տունը արգելուած պտուղ է. իր տեսակի գիտութեան ծառի խնձոր է։

Բազում անգամ նկատել եմ, որ ուսուցիչը ինչ որ ծածկում է ինձանից, հասկանալի է չէ՞ որ չի ճանաչում ինձ և ես էլ չեմ հաղորդել նրան պատմութիւնս։

Այսօր, երբ պատրաստուեցի տուն վերադառնալ, ուսուցիչը ցանկութիւն յայտնեց ուղեկցել ինձ։ Արդէն վաղուց ուզում էր ճանապարհ գցել ինձ և ինչ որ գործի մասին խօսել։ Գնացինք գետի ուղղութեամբ, բայց սար չ'բարձրացանք. մրտանք հովիտը և դուրս եկանք Այմգայի ստորոտը, որտեղ ծեան հիւսերի ճնացորդների տակից արդէն դուրս են եկել բարակ, թարմ խոտերը, կանաչել են կուենիները և ծաղկել նրանց կարմիր բողբոջները։ Գորշագոյն քարերը տեղ տեղ դուրս են ցցուել զառիվայրի վրայ, հեռում երևում է քարաժայռի ճեղքուած պատը։ Ափսոս, որ նկարել չ'գիտեմ։ Բայց տեսարանները կ'մնան։ Պէտք է մարդկանց նկարագրել։

Առաջ, յիշում եմ, խօսում էինք Ֆրանցելի մասին. շատ աշխոյժ տղայ է, ասում է ուսուցիչը։ Դպրոցում առաջին աշակերտը չէ, սակայն ոչ ոք նրա նման ուշադրութեամբ և

գնող կերպով չի նայում կենդանիներին, բոյսերին, քարերին։ Լաւ կ'լինէր ուղարկել քաղաք ուսանելու համար։

—Հեռացէք ինձանից ձեր քաղաքի հետ, բացականչեցի ես։ Ի՞նչ պիտի անի քաղաքում։ Առանց նրան էլ քաղաքում խելօք մարդիկ շատ կան։ Թող գոնէ խելօքներից մի քանիսը մնան գիւղում։ Եթէ բոլոր ընդունակ մարդիկ քաղաք քաշուին, այն ժամանակ իրականութեան վրայ զարմանալու ոչինչ չ'կայ։

—Նրանց գիւղում մնալու դէպքում ոչինչ չի փոխուի, ասաց ուսուցիչը։

Այն, ինչոր կատարւում է, մենք չենք կարող փոխել. այդ պատճառով էլ գերադասելի է ընդունակ ոյժերը քաղաք ուղարկել, որտեղ նրանք չեն կորչի։

—Ես ինքս երբեմն գրել եմ նոյնանման բաներ, ասաց վարձուորը հապճեպով։—Այսինքն գրել եմ բարեկամներիս. բայց այժմ այլ կերպ եմ մտածում։ Ամեն ինչ երկրաղնդի մէջն է։ Ես ազգային հարցն էլ աշխարհագրական հարց եմ համարում։ Ուսուցիչը ծիծաղեց։

—Եթէ միայն ազգայնութեան մէջ լինի խնդիրը, շարունակեց նա, այն ժամանակ գերմանացիները, որոնք տարածուած են ամբողջ երկրաղնդի վրայ, հեշտութեամբ կարող են հեռանալ, թողնելով իրանց անշարժ սեպհականութիւնը կամ փոխանակել հողերը ֆրանսիացիների կամ սլաւոնների հետ։ Ժամանակակից Բիսմարկը կարող կ'լինէր քարտէզը վերցնել և շախմատի քարերի նման տեղափոխել նրա վրայ բնակուած ազգութիւնները։

—Բայց այդ անկարելի է. բացականչեց ուսուցիչը։

—Եւ անկարելի այն պատճառով, որ մարդիկ կապուած են իրանց հողի հետ, որին կպչում են ազգայնութեան մասնիկները։

—Ուրեմն, դուք կարծում էք, որ մարդս հողի հետ աւելի ամուր կապով է կապուած, քան ազգայնութեան հետ։

—Հասկանալի է...

—Բայց չէ՞ որ բնական մարդը թափառաշրջիկ է, հողի հետ չ'կապուած։

—Իսկ լուսաւորեալ մարդը կարող է ապրել և կատարե-

յագործուել միմիայն այն ժամանակ, երբ կապուած է հողի հետ։ Եւ տիեզերական կռիւը գոյութիւն ունի միմիայն իրանց երկիրը նոյն ժողովրդի համար պահպանելու նպատակով։

—Թէ ամբողջ խնդիրը սեփական երկիրը պահպանելու մէջն է, ուրեմն դիւղացին ամենակուլտուրական մարդն է աշխարհիս երեսին։

—Իսկ եթէ այդպէս էլ լինի, եթէ իսկ որ դիւղական կեանքը այն բարձր կուլտուրան է, որ բաւարարութիւն է տալիս մարդուս ամեն ցանկութիւններին, երես չ'տալով, չ'յոգնեցնելով նրան։ Դիւղական կեանքը բարձր է գործարանային կեանքից նրա սոցիալական կարիքներով և նրա անբաւարարութեամբ. բարձր է վաճառականական կեանքից, որ մարդու ձեռքով ստեղծուած ամեն ինչ անընդհատ տեղափոխում է տեղից տեղ յագեցնելով հարուստներին, մինչդեռ մարդկանց մեծագոյն մասը կարօտութեան մէջ է և ոչնչանում է։ Ես չեմ հասկանում, թէ ինչու մեր օրերին սեպհական հողեր ունեցող մարդիկ թողնում են նրան և ի՞նչպէս կարող է դիւղական ուսուցիչը համակրել նրանց։

—Բայց միթէ մենք, ուսուցիչներս, պարտաւոր ենք դեղջուկներ ստեղծել։ Մենք ուսուցանում ենք մանուկներին, որպէսզի կարողանան կերակրել իրանց, և առաջին անգամը չէ, շարունակեց նա դժգոհութեամբ, ինչ նկատել եմ որ Ադամի վարձուորը գիտնականի պէս է խօսում։ Կասկածելի է այդ...

—Մի՞թէ կարծում էք, որ լրտես եմ։

—Աղնիւ խօսք, երբեմն այդպէս է թւում ինձ։ Դուք իսկական դիւղացի չէք, որքան էլ որ բարձր կարծիք ունենաք նրանց մասին։ Ոչ, ո՛չ, Հանս, ինձ չէք կարող խաբել։

—Կարծո՞ւմ էք։

—Զափից անցնում է. դուք տեղացի չէք, դուք պատճառներ ունիք այստեղ մնալու։ Ես ձեզ աւազակի տեղ չեմ դնում. —աւազակը ամբողջ ամիսներով այդպիսի ծանր աշխատանքներ չի անի։ Բայց այնուամենայնիւ կ'ցանկայի իմանալ, թէ ի՞նչ է նշանակում այս ամենը։

Նա կանգ առաւ, երկու ձեռքով բռնեց բաճկոնիցս և

հարցրեց.—այժմ պարզ ասացէք, Հանս, ինչ էք ուզում այդ տանը. ինչո՞ւ էք անպատեհառ Ադամի տանը ապրում։

Նրա կարմիր դէմքը աւելի ևս կարմրեց, աչքերը արիւնով լցուեցան։ Տեսնելով նրա զայրոյթը, կամակորութեամբ լռութիւն էի պահպանում։

—Կասէ՞ք թէ ոչ։

Իսկապէս ինչո՞ւ ամեն բան չ'պատմել այս մարդուն. քաշուելու բան չունիմ։ Սակայն ինձ վրդովում է նրա հարցուփորձի եղանակը։

—Ուրեմն չէ՞ք ասելու, ինչն է պահում ձեզ այնտեղ։

—Պարզ է, որ չեմ ասի։

—Շատ լաւ։ Այդ դէպքում ես ինքս կասեմ ձեզ։

—Նո՛ւ, ի՞նչ։

—Աղջիկն է դուռ գալի ձեզ։

—Աղջի՞կը, ի՞նձ։

—Դուք ուզում էք տիրել աղջկան։

—Աստուած իմ, վարժապետ, բայց ինչո՞ւ չցանկալ այդ։ Ձեր ի՞նչ գործն է։

—Ինչ գործ ունի՞մ։ Այդ կասեմ ձեզ։ Աղջիկը ինձ է պատկանում։

Իսկ այժմ, գիտնական, համբերութիւն ունեցիր ամբողջ շաբաթ սպասել։ Շարունակութիւնը կ'լինի։

Թարգմ. ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆ

(Կը շարունակուի)

ՔՕՍԱ-ԴԱՂ ԼԵՐԱՆ ՎԿԱՆ*)

V

Խաւար և տաղտկալի գիշերը վրայ հասաւ։

Աղթամարի մենաստանը հազարաւոր անբաղդ փախստականներին ծածկեց իր սգազգեաց թեւերի տակ. առաջին անգամը չէր, ինչ նրա վիրաւոր զաւակները այդ հինաւուրց սրբավայրումն էին ապաստան գտնում։ Նա վշտալից մօր պէս բարձրից անթարթ աչքերով նայում էր այդ տարաբաղդ զաւակների խառնիճաղանճ խմբերին ու լուռ ու մունջ խորասուզւում անցեալի գիրկը։ Որքան քամիներ, որքան փոթորիկներ էր անցել նրա սեաւոր գլխով. որքան արիւնների, որքան լաց ու արտասուքների, սուգ ու հառաչանքների էր նա ականատես եղել։

Բայց այսօրուայ նման դառն վիշտ ու խոցեր երբէք չէր զգացել. այսօր նա միայնակ պիտի մնար շրջապատուած ջրերի ահռելի կոհակներով։ Նրա տարաբաղդ հիւրերը այդ գիշեր տալիս էին նրան իրանց վերջին հրաժեշտի ողջոյնը։ Նա տխուր ու մելամաղձոտ էր. նրա ժռայլ զանգուածը մի վիրաւոր, որդեկորոյս ծերունազարդ հօր էր նմանւում, որի սիրասուն զաւակները ասես ընդմիշտ խլուում էին նրանից։ Շուտով լսուեց խաւարի միջից եկեղեցու զանգակների տխրահնչիւն ղողանջիւնը. դա նշան էր, որ պատսպարուածները պիտի ափ իջնէին, ուր նրանց սպասում էին մի քանի նաւեր։ Զանգակների ձայնի հետ մի քանի տեղերում վառուեցին ճրագներ, որ բազմութիւնը կարողանար անվնաս նաւերին մօտենալ։

Վերջին անգամ ծանր վշտից տոչորուած բիւրաւոր շրթունքները տուեցին իրանց անկեղծ ու նուիրական համբոյրները այդ դարաւոր սրբավայրի պատերին. վերջին անգամ բիւրաւոր վիրաւոր սրտերից լսուեցին տխուր հառաչանքի ձայներ, խեղդող լռութիւնը դարձեալ տարածուեց ամեն տեղ. միայն ստէպ-ստէպ լսւում էին ծովի եզերքին հազարաւոր ոտքերի տրոփիւններ։ Ամենից վերջ բազմութեանը հետևում էին Արթօն, Վահէն, Սալվին և Թորոս-բիձան, որոնք հետն էին մտել կղզին։ Նաւերը

---

*) «Լուսայ» № 4.

շարժուեցին դէպի ցամաք. այնտեղից բազմութիւնը պիտի շարունակէր ճանապարհը-փախուստը։ Ամեն մարդ լուռ ու մունջ հնազանդւում էր անողոք ճակատագրին. միայն Արթօն էր, որ նայելով շարժուող սմբոխի վրայ, մրմնջաց Վահէին.

—Տես, տես, քանի հազարի է հասնում այս թշուառների թիւը։

Վահէն նայեց և գլուխը կախ գցեց. նա մահը, գերեզմանը առաւել գերադասելի էր համարում, քան այդ չարքաշ վիճակը։ Նա ցանկանում էր այդ բազմութեանը տեսնել իրանց օջախի բոցերի մէջ և նրա մոխրի կոյտերի հետ խառնուած թաղել դրանց ոսկրները։ Նա թուլամորթ, փոքրոգի, ստորաքարշ էր համարում այն անհատին, այն դժբաղդ ազգին, որը չը գիտէ իւր օջախի, իւր հայրենիքի թևերի տակ աւանդել իւր շունչը, իւր հոգին։ Այն օրից, երբ զրկուել էր Սօնայից, մահը, գերեզմանը մի առանձին նշանակութիւն էին ստացել նրա համար։

Վերջապէս, դուրս եկաւ մտատանջութեան գրկից և պատասխանեց.

—Իրօք սարսափելի թիւ են ներկայացնում այն թշուառութեան իսկական ներկայացուցիչները. սակայն ի՞նչ օգուտ, երբ իրանց չարքաշ գլուխները փրկեցին, թողնելով նուիրական վայրերը։ Ո՞ւր են շարժւում, իրանք էլ չը գիտեն. չէ՞ որ վաղը, թերևս, այնպիսի վիճակի ենթակայ լինեն, որ մահը հազար անգամ գերադասելի լինի. շարժւում են դէպի անյայտ ապագան. բայց արդեօք այն մշուշապատ ապագան մխիթարական ո՞ւ է բան խոստանում է դրանց։ Ցուսահատութեանս մէջ ես չը գիտեմ, ի՞նչ ասեմ, ի՞նչ անէծք, նզովք կարդամ այն դժբաղդների գլխին։ Տեղն է դրանց, տեղը։ Արժանի են, որ իրանց նիստ ու կացը տակաւին չեն կշռադատել. ո՞վ է դրանց սրի ու կրակի ճարակ դարձրել. չէ՞ որ իրանց վսեմափայլ փաշաների անմեղ զոհերն են դրանք։ Թշուառ ժողովուրդ, միամիտ ամբոխ, դու քո ուրախութիւններիդ և տրտմութիւններիդ մէջն էլ գիտէիր քո հլու հաւատարմութիւնը ցոյց տալ քո փաշաներիդ. դու քո հարսանիքիդ խնճոյքներին էլ ամենանանդրանիկ բաժակդ պատկառանքով դատարկում էիր քո փաշաներիդ արևշատութեան կենաց մաղթելով։ Դու քո սուգ ու շիւանիդ ժամանակն էլ նոյն չափ պատկառանքով ըմպում էիր առաջի բաժակդ, մաղթելով տիեզերքի նախախնամութեան ձերբ պահել քո փաշաներիդ նման սուգերից, վա՛յերից... իսկ այժմ... այժմ ի՞նչ ստացար քո հաւատարմութեանդ համար.—սուր ու կրակ, վիշտ ու տառապանք, հալածանք ու պանդխտութեան դաւաղան։

Ահա՛ քո վարձատրութիւնը։

—Չէ, Վահէ, ինչու այդքան սկեպտիկ լինել դէպի ապագան. ինչևիցէ. ճակատագիրը փրկել է դրանց սրից ու կրակից։ Որ մեռնէին, ինչ օգուտ իրանց աւերուած օջախներին։

Մի՞թէ քիչ են կրակի ու սրի զոհ գնացել։

—Թող ապրեն, տեսնենք կարելի՞ է ապրել անուանել այն։ Մօտիկ ապագան կպարզէ։

Դուրս գալով նաւերից, բազմութիւնը բաժանուեց փոքրիկ խմբերի և առաջ ընթացաւ դէպի Ալաշկերտի սահմանը, արտասուքով և վէրքերի արիւնով ներկելով իր անբաղդ ճանապարհը։ Այո, արիւն ու արտասուք, լաց ու հառաչանք, սուգ ու շիւան նրանց անբաժան ընկերներն էին։ Ցերեկով ճանապարհ գնալ անկարելի էր. այս ու այն քրդական ցեղի ձեռք կընկնէին և զոհ կը գնային արիւնարբու թշնամիներին. ուստի ստիպուած էին գիշերով, գաղտագողի, հազար ու մի զգուշութիւններ ձեռք առած շարունակել իրանց ճանապարհը։ Վերջապէս մի կերպ հասան Հէկէ-Զոր գիւղը, ուր Արթօն, վարձելով նրանց համար տեղական քրդերից երկու վալաղ, ինքը իւր մնացեալ ընկերների հետ շտապեց հեռանալ դէպի Մուստաֆա-փաշայի բանակը՝ միանալու իւր միւս ընկերներին։ Սալվիին, որը կրում էր Տըրխ գեղջուկի սպառազինուած զգեստներ, Արթօն թողել էր փախստականների մէջ, որ նրանց հետ շարունակէ ճանապարհը մինչև սահմանը և սպասէ իրան։ Այսպէս, այդ ճակատագրից հալածուածները շարունակում էին իրանց ճանապարհը։ Ամբակները իրարից բաւականին հեռաւորութեան վրայ էին գտնուում և այդպէս էլ առաջ էին ընթանում։ Աւելորդ է ասել, որ ամբողջ ճանապարհը տանջանքների, փորձանքների մի բով էր տարաբաղդների համար։

Քանի որդեկորոյս մայրիր կային, որոնք փորձանքի առաջին րոպէին կորցնելով իրանց զաւակներին, այժմ պղտոր սրտով, արիւն-արտասուք թափելով հետևում էին իրանց բեռնաւորուած ընկերուհիներին, նախանձելով նրանց վրայ։

Եւ այսպէս, նրանք՝ միշտ ընկեր ունենալով խաւար գիշերները, առաջ էին շարժուում։ Երկրորդ օրը պատսպարուեցին Դիլան գիւղի ձորերում, որտեղից հետևեալ օրը արդէն Զիլանա-Զորն էին ընտրել իրանց հանգստավայրը։

Սալվին պահապան հրեշտակի նման միշտ հետևում էր վալաղներին և իւրաքանչիւր անգամ, երբ նրանք չար դիտաւորութեամբ կամենում էին վրիպել հալածականների ուղին, սպառնում էր նրանց, հաւատացած լինելով, որ նրանք կարող են առաջնորդել այդ անբաղդներին մի ոնէ քրդական գիւղ, ուր նրանց կորուստը անխուսափելի կլինէր։ Վալաղները ատամները կրճը-

տացնում էին անվեհեր ծպտեալ աղջկայ վրայ, բայց ինչ կարող էին անել, երբ նա աւելի ծանօթ էր վայրերի հետ և միշտ իր ասածն էր անել տալիս, համոզելով, որ իր ցոյց տուած տեղերով ճանապարհ շարունակելը անվտանգ է. իսկ երբ վալաղները փորձում էին հակառակել, իսկոյն հեռանում էր նրանցից, պատսպարւում մի ժայռի տակին, հրացանի բերանը ուղղում էր դէպի նրանց ու պահանջում հնազանդուել և իր ցոյց տուած տեղերով առաջ ընթանալ։ Զիլանայ-Զորակում նա չափազանց յոգնած և թուլացած լինելով, պարկեց փոքր ինչ հանգստութիւն տալու իր վաստակած անդամներին, ժուանալով ըստ իր սովորութեան շրջապատուել պահապաններով, որոնք հսկում էին նրան քնած ժամանակ։

Մինչ նա ծանր-ծանր խոմբացնում էր, նենգամիտ վալաղները գաղտագողի մօտեցան նրան և խորին զգուշութեամբ զինաթափ արին. այստեղ մնացին զմայլուած նրա երկար-երկար վարսերի վրայ, որոնք խնամքով սանրուած էին և մորթեայ գտակի տակ դրած. սակայն երկիւղ կրելով, որ նա յանկարծ կարող է զարթնել, աւելորդ համարեցին ստուգելու այդ գաղտնիքը, այլ ընդունելով նրան լոկ հոգևորականի տեղ, հեռացան նրանից։

Սալվին ոչինչ չզգաց, այլ շուռ գալով միւս կողքի վրայ, շարունակեց խոմբացնել. յանկարծ լսուեց մի աղիողորմ ճիչ և մի փոքրիկ մանուկի լալագին աղաղակ, որը գլխին խփելով, անընդհատ կրկնում էր.—վայ մարէ, վայ մարէ, վալաղները տարան իմ մարէին...

Սալվին շանթահար եղածի նման վեր ցատկեց քնած տեղից, ձեռքը մեկնեց դէպի հրացանը ու մնաց սառած։ Այլայլուած այս դէպքից, յուսահատութեամբ դէպի հեծող մանուկը վազեց և, իմանալով որ նրա մարէին դէպի մօտակայ անտառը տարան, իր հետ վերցրեց մի քանի կտրիճ երիտասարդներ ու ընկան նրանց յետևից։ Փոքր ինչ հեռանալով թշուառ խմբերից, նըրանք գտան դժբաղդ մարէին, որի մէջքից գցելով Սալվիի հրացանի պարանը երկու ածդահայ քրդեր հրացանի այս ու այն գլխից բռնելով քաշում տանում էին անբաղդ զոհին։

Սալվին կատաղածի նման ճչաց նրանց վրայ և սկսեց սպառնալիքներ կարդալ. սակայն վալաղները, դիւային քրքիջ բարձրացրին ու. պատասխանեցին, որ արդէն վաճառել են այդ աննման կնոջը, որը ֆլայ լինելու ափսոս է, «ֆլան այսպիսի հրեշտակի տիրել չէ կարող, նա մեր կուրմանջներին *) սազ

*) Քրդերին։

կդայ,—կրկնում էին նրանք,—վերջապէս եթէ շատ խօսելու լինես, քեզ էլ էն աշխարհը կճանաչենք, մենք մեզ վարձատրութեան համար կին էլ պիտի վերցնենք, էլ ինչո՞ւ ես հարայ-հրոց դրել...

Սալվին և ընկերները սկսեցին քարեր շպրտել նրանց վրայ, բայց դաւաճան վալադները կանգնեցին ու սկսեցին հրացաններ արձակել։ Սալվիի ընկերները երկու զոհ տալով յետ փախան, վերադարձան իրենց խմբակների մօտ։ Սալվին չնայած, որ գնդակները վզզոցով անցնում էին իր մօտով, դեռ հետևում էր քրդերին. վերջապէս, կորցնելով յոյսը, նա գոչեց.—Լսեցէք, անզգամներ, ձեզ այդ աժան չի նստի. նա, ով ձեր խնամքին յանձնեց այս թշուառներին, ճանաչում է ձեզ, նա ձեզանից վրէժխնդիր կլինի, եթէ դուք երկինքն էլ թռչելու լինէք կամ ծովի անդունդը մտնէք. նա Արթօն է, որին ձեր քրդերը «Ալան-Արթօ» են կոչում, հա՜...

Վալադները իրար երես նայեցին, բայց չհաւատացին. ուստի շարունակեցին ճանապարհը և մտան Աւ-Ռաշ գետակի հովտում եղած վրանները, տանելով իրանց հետ արդէն ուշաթափ եղած «մարէին»։

Սալվին այլևս չվերադարձաւ իր հայրենակիցների մօտ, այլ շտապեց դէպի Վանայ ծովակը, յուսալով գտնել Արթօյին և հաղորդել նրան այդ ամենը։

VI

Դիշերը վրայ հասաւ։ Սարսափահար ամբոխը առանց իմանալու թէ ո՞ւր է գնում, շարունակեց իր ճանապարհը։ Նման դէպքերը նոր բան չէին, այդ պատճառով նա ասես մոռացաւ ցերեկուայ պատահած քստմնեցուցիչ անցքը և, իրան յանձնելով ճակատագրի կամքին, շարժուեց տեղից։ Խօսել ցաւերի, խոցուած սրտի մասին, նա վաղուց մոռացել էր. շատ էր խօսել, բողոքել, օգնութիւն գոչել. սակայն տեսնելով, որ իւր աղաղակը միշտ էլ «ձայն բարբառոյ յանապատի» է մնացել, հետզհետէ կորցրել էր բողոքելու ընդունակութիւնը։ Միշտ ու միշտ շարժուելով դէպի առաջ և գիշերային մթութեան մէջ սնուելով յաճախ այս ու այն բոյսերով ու ցնցուելով, նա յանկարծ տեսաւ հեռուից երևացող ճրագներ։ Մինչ խմբակների գլխաւորները ժողովուած՝ խորհրդածում էին թէ՝ ինչ անեն, ո՞ւր գնան, նրանց մօտեցան մի քանի զինուած քրդեր։ Տեսնելով, որ փախչելը այլևս անհնար է, գլխաւորները սկսեցին աղաչել-պաղատել նրանց, իրանց խնայել, և

որ իրանք հալածուած փախստականներ են։ Քրդերը խղճացին և պատասխանեցին.

—Ցլաներ, մեզանից վախենալ պէտք չէ. մենք եզիդի ենք. այս գիշեր օրան հսկելու հերթը մերն է։ Օրան գտնուում է մեր վեհապանծ Շէյխ-Թէյմուրի իշխանութեան և հովանաւորութեան տակ։ Նա շատ բարի մարդ է։ Եթէ մեզ լսէք, մենք ձեզ կը տանենք նրա մօտ. նա միայն կազատի ձեզ այս տեղերից, ուր ամեն մի քայլափոխում կարող էք քրդերի հանդիպել։

—Այո, այո, կուզենք. մենք կը հետևենք ձեզ. խղճացէք մեզ. հաւատում էք, որ այս քանի օր է՝ բոյսերով ենք եօլա գնացել։

—Դէհ, որ կհետևէք մեզ, եկէք. ասացէք ձեր մարդիկներին՝ յետ չմնան մեզանից։

Բազմութիւնը հետևեց պահապան-եզիդիներին։ Քիչ ժամանակից յետոյ նրանք հասան մի մեծ վրանի, որը շրջապատուած էր օբայի միւս վրաններով և զգալի կերպով աչքի էր ընկնում։ Աղօտ ճրագը տակաւին պլպլում էր. դա նշան էր, որ Շէյխը դեռ չէ քնել։ Պահապանները յայտնեցին նրան։ Նա հրամայեց մարդկանց ներս հրաւիրել։ Փախստականների խմբակների գլխաւորները ներս մտան և ծունկ չոքեցին առաջը ու աղերսել սկսեցին նրան՝ փրկել իրանց անխուսափելի մահից։

Շէյխը տարիքով մի ծերունի էր։ Նա տխուր էր և մտայոյզ յենուած բարձերի վրայ։ Տեսնելով իրան դիմող թշուառներին, աշխատեց մեղմացնել իւր դժգոյն երեսի մռայլ արտայայտութիւնը և, զգացուած հայեացք ուղղելով նրանց, ասաց.

—Հանգիստ եղէք. ձեզ այստեղ ոչ մի վնաս չի կարող պատահել. ես կհրամայեմ ձեզ և ձերայնոց համար մի քանի յարմար տեղեր պատրաստել, ուր կարող էք մի քանի օր հանգստանալ. ապա վալադներ կտամ, որոնք կառաջնորդեն ձեզ մինչև մի ապահով տեղ։

—Շէյխը ողջ լինի, մենք վալադներ ունէինք. նրանք մեզ առաջնորդեցին մինչև Զիլանի-Զորը, ուր մեզ թալանեցին և փախցրին մեզանից մի ջահել կին, որը հազիւ էր իր չարքաշ գլուխը փոքրիկ տղայի հետ ազատել։ Նրանք մեզ թողին անծանօթ սար ու ձորերի մէջ և իրանք անյայտացան Աւ-Ռաշ գետակի եզերքին գտնուած վրաններում։

Շէյխը գլուխը թափ տուեց, իրանց լեզուով ինչ որ հայհոյանքներ ուղղեց նրանց հասցէին և հանգիստ ձայնով նկատեց.

—Այդ օրան մեզանից այնքան էլ հեռու չէ. ես, կրկնում եմ, վալադներ կտամ, որոնք ձեզ կհասցնեն մինչև այդ օրան, ուր կգտնեն ձեր վալադներին, որոնք և կառաջնորդեն ձեզ ձեր ցան-

կացած երկիրը։ Ես նամակ կտամ այդ օբայի տիրոջ անունով։

Այս ասելուց յետոյ, հրամայեց իւր մօտ կանչել օբարաշուն։ Երբ սա մի քանի րոպէից յետոյ յայտնուեց, Շէյխը հրամայեց տեղ պատրաստել եկողների համար և ուտեստի մասին հոգս տանել։ Օբարաշին գլուխ տուեց և հեռացաւ, կրկնելով, որ ամէն ինչ կարգին կլինի։ Եկողներին տեղաւորելուց յետոյ, նա իր հետ առնելով մի քանի մարդկանց՝ սկսեց շրջել վրանէ վրան և հաց ու պանիր ժողովել։ Շուտով ահագին քանակութեամբ հաց ու պանիր բաժանուեց եկողներին։ Թշուառները ապշեցուցիչ ախորժակով ուտելուց յետոյ, համարեա իրար վրայ թափթփուելով պարկեցին քնելու։ Մի քանի օր էր արդէն ինչ հանգիստ չէին քնել, այդ պատճառով էլ շուտով տիրեց խորին լռութիւն, որը ստէպ-ստէպ ընդհատւում էր նրանց ծանր խորմփոցներով։ Առաւօտեան շատ ուշ վերկացան։ Չնայած, որ Շէյխը ցանկանում էր դարձեալ մի քանի օր պահել, նրանք թախանձեցին արձակել իրանց։ Բարի Շէյխը, հակառակ իւր ցանկութեան, ստիպուած եղաւ արձակել նրանց իւր առաջնորդ-վալադների հետ, տալով խոստացած նամակը։

Անհուն շնորհակալութիւն յայտնելով Շէյխին նրա բարեսրտութեան համար՝ թշուառների այդ խմբակները առաջ շարժուեցին առաջնորդների հետ։ Նրանք հանդարտ շարունակեցին իրանց ճանապարհը մինչ ցանկացած օրան, ուր օբայի տէրը, կարդալով Շէյխի նամակը, հրամայեց փնտռել իրանց մօտ ապաստան գտած այդ թշուառների վալադներին։ Շուտով գտան նրանց։

—Ինչպէս որ յանձն էք առել վալադութիւն անելու այս խեղճերին, պարտական էք կատարելու ձեր խոստումը, եթէ ոչ, կհրամայեմ ձեզ այստեղ սրախողխող անել. բացի այդ դուք փախցրել էք սրանցից մի խեղճ երեխայի մօր, որին պիտի վերադարձնէք իւրայիններին,—սպառնական ձայնով նկատեց օբայի տէրը։

—Տէր, ձեր հրամանը ճշտիւ կկատարենք և վալադութիւն կանենք մինչև մեր հողի սահմանը, ինչպէս խոստացել ենք այդ. բայց այն կինը, որի մասին յիշեցիք, արդէն ուղարկել ենք մեր կողմերը. եթէ կբարեհաճէք, մեզանից մէկը կվերադառնայ նրան բերելու, իսկ միւսը՝ սրանց վալադութիւն կանի, մինչև որ կինը կհասնի իւր ընկերներին,—պատասխանեցին երկու վալադները միաժամանակ։

—Լաւ, թող ձեզանից մէկը գնա այն կնոջը բերելու, իսկ միւսը առաջնորդէ նրանց. վայ ձեզ, եթէ խաբելու լինէք ինձ,—սպառնաց օբայի տէրը։

—Քաւ լիցի, թող մենք մուսուլման չլինենք, եթէ դրժենք մեր խոստումը։

Փոքր ինչ հանգստանալով բազմութիւնը նախկին մի վաղի առաջնորդութեամբ շարունակեց ճանապարհը, իսկ միւսը վերադարձաւ առևանգուած կնոջը բերելու. երկու ընկերներ նայեցին իրար երեսի, փոքր ինչ փսփսացին ու բաժանուեցին միմեանցից՝ մէկը վերադարձաւ կնոջը բերելու, միւսը, բազմութեան հետ ճանապարհը շարունակելու։

Ոչոք չհասկացաւ նրանց խորհրդաւոր հայեացքների թունալից նշանակութիւնը, սակայն եթէ ուշադրութիւն դարձնող լինէր, անշուշտ կլսէր, որ մէկը միւսին ասում է.—Օզման, դու այդ շների հետ գնա, իսկ ես շատ շուտով մեր պզմաՀներով *) դրանց առաջը կկտրեմ, մէկ ենք տարել, դեռ շնորհակալ չեն լինում. այ, այնտեղ դրանց հախիցը կգանք. այնքան ջէյրաններ թոցնենք, որ իրանք էլ շուարած մնան, էլ ոչ թիւ իմանան պահել և ոչ համար։ Աշխատիր Գոմ-Դաուդարի գետակում գիշերել և մեզ սպասել...

—Լաւ... ընդհատեց նրան միւսը.—Սլօ, դէհ, շտապիր,—ասաց Օզմանը և վազեց հասաւ բազմութեան ու շարունակեց նրանց հետ իր ճանապարհը։ Այստեղ այնտեղ ընկնելուց, սար ու ձոր անցնելուց յետոյ, վերջապէս, նրանք հետևեալ օրը երեկոյեան հասան Գոմա-Դուդարի գետակը, ուր և պիտի գիշերէին։

Խմբակները ժողովուեցին և այդ ահաւոր ձորակի դարևոր լռութիւնը շուտով փոխուեց խառնիճաղանճ շշուկների, ասես, քար ու թուփ լեզու էին առել այդ դժբաղդների ցաւ ու դարդը ողբալու։ Մի կերպ ծմակի, չոր քարի ու թփի տակ իւրաքանչիւր սօբաղդը կծկուեց, նզովք կարդալով անողոք ճակատագրի հարուածներին, որ այդքան անգութ կերպով զրկել էր նրանց հայրենի օջախի սրբութիւններից, նրա միշտ անարատ անկողնուց։

Երէկ նրանք տուն ու տեղի, փափկասուն օթեակների տէր էին։ Իսկ այսօր, աւաղ, մի քարի, ժայռի էին կարօտ։ Թանձր խաւարը ծածկեց ամբողջ շրջակայքը իւր մթաշաղ թևերի տակ։

Ընդհանուր լռութիւնը ստէպ-ստէպ ընդհատւում էր մարդկային ոտքերի գաղտագողի ձայներով, որ կամաց-կամաց հեռանում էր նիրհող բազմութիւնից դէպի ձորակի հեռաւոր խոռոչները, որոնց մօտ անցնում էր շրջակայ գիւղերի ճանապարհը։

---

*) Ազգականներով։

Ահա նա բաւականին հեռացաւ փախստականներից և կուչ եկաւ մի մեծ քարի կողքին, որը ասես դիտմամբ շպրտել էին ճանապարհի եզերքին։ Մի փոքր լուռ մնալուց յետոյ, յանկարծ կամացուկ փընթփընթաց ինքն իրան.—ինչո՞ւ են ուշանում. չլինի թէ մի բան պատահած լինի։ Մինչ սա այսպիսի կասկածների մէջ էր, քիչ հեռու, ճանապարհի վրայ երևաց ձիաւորների մի ստուար խումբ, որ ամենայն զգուշութեամբ դէպի ձորակն էր շարժւում։ Քարի կողքին կուռ եկող անծանօթը ականջները սրեց և ուրախացաւ. եկողների հանդարտ խօսակցութիւններից ճանաչեց մի ձայն, որը պարզ նրան հասկացրեց թէ եկողները ովքեր են։ Իւր երկայն բոյով գիշերային նենգամիտ խաւարաշրջիկ ոգիների պէս ցցուեց նրանց առաջ և հազիւ լսելի ձայնով հարցրեց.

—Ալ, ինչո՞ւ ուշացաք. հոգիս դուրս եկաւ սպասելով. հաւա լաւ ժամանակ եկաք։ Ա՜խ, ափսոս, գիշերը շատ խաւար է։

—Ոչինչ, Օզման, գայլին ու գողին մութ գիշերն է պէտք։ Ասա, տեսնենք, լաւ մարալներ տնտղել ես աչքովդ, որ իսկոյն գտնենք, թէ չէ մեր վրայ հարաքեաթ չի մնացել. քանի ժամանակ է, ինչ անընդհատ արշաւել ենք. եթէ էդ շներին տիրանալու սէրը չլինէր, ես վաղուց վեր էի եկել ձիուցս և մեռածի պէս քնել,—խռպոտ և կոշտ ձայնով պատասխանեց նրան Ալոյի ձայնը։

—Տնդտել տնդտել եմ և գիտեմ ով է քարի տակին կուռ եկել, միայն ինչպէս անել, որ միանգամից գտնենք այդ բոլորին։

—Միամիտ. մենք փոքր ինչ հեռու վայր կգանք ձիերից և դարան կմտնենք. իսկ դու մեզանից ոչ հեռու մի մեծ կրակ վառիր և հաւանածդ մարալներին ժողովիր ու հրամայիր իրանց նազանի ձայնով դլօներ ասեն։ Մենք կրակի մօտ կը տեսնենք նրանց և իւրաքանչիւրս իւր բաժինը կվերցնի ու կանյայտանայ. համա լաւ ողբաձայն դլօներ կասեն, հա՛. չէ՞ որ նրանցից համարեա բոլորի սիրտն էլ վիրաւոր է։

—Դէհ լաւ, միայն զգոյշ, որ Շէյխը չիմանայ։

—Ո՞վ է նրան լուր տանողը. կարծում ես դրանք մէկ էլ սիրտ կանեն վերադառնալ ու պատմել նրան իրանց գլխի եկածը. բացի այդ, նա ինչ կիմանայ, որ մենք ենք եղել։

—Ես այս բոպէիս կրակը իւր հուրի և մալաքներով պատրաստ կանեմ։

—Քիչ ժամանակից յետոյ ճիշտ որ կրակը իւր հրեղէն բոցերով լուսաւորեց ամբողջ շրջակայքը և Օզմանը սկսեց մէկ-մէկ կիսաքուն անբաղդ գեղջուկ հարս ու աղջիկներին քաշ տալ

նրա շուրջը։ Ով որ հաժարձակւում էր ձայն ծպտուն հանել և հակառակել, ցղղում էր հրացանի բերանը և անզուսպ հայհոյանքների հոսանքի հետ կրկնում, որ ինքը շատ տխուր է և ուզում է մի փոքր երգի ձայն լսել ու ուրախանալ։ Թշուառները ստիպուած էին խմբուել կրակի շուրջը. բայց որքո՞ն սիրտ ու տրամադրութիւն էր մնացել երգ ասելու։

Ոչոքի բերանը չէր բացւում։ Օղմանի կատաղութիւնը գագաթնակէտին էր հասել. վերջապէս, միմեանց յետևից լսուեցին մի քանի խուլ ու կցկտուր ձայներ, որոնք ընդհանուր սուգի տպաւորութիւն էին թողնում լսողի վրայ։ Կարծես գիշերային յաւերժահարսներ լինէին։ Հեռու, շատ հեռու, սար ու ձոր արձագանք առած, կրկնում էին նրանց իւրաքանչիւր բառերի հնչիւնները...

Լ՝օ, լ՝օ, լ՝օ... Կրակի մէջ դաժդս երգեմ.
Սիրտս էրեմ, հոգիս էրեմ.
Թէ՞ էս վէրան վաթանից
Ի՞նձի էրեմ, պրծնեմ...
Լ՝օ, լ՝օ, լ՝օ...

Լ՝օլ՝ները անընդհատ կրկնւում էին ձորերում. յանկարծ միանգամից մի արտասովոր իրարանցում ընկաւ կրակի շուրջը. վա՜յ, վո՜ւյ, օխ ու վա՜խի ճիչերը սուր կերպով զարնւում էին այս ու այն կողմը։ Դարան մտած քրդերը նրանց վրայ էին արձակուել և աշխատում էին նրանց գրաստների վրայ դնել ու թոցնել. բայց դժբաղդ զոհերը մահու չափ դիմադրութիւն էին ցոյց տալիս և իւրաքանչիւր անգամ իրանց շպրտում ձիերից։

Մինչ այս, յանկարծ մօտակայ թփերի միջից բազէի ոռնոցի ձայն լսուեց։ Դա Արթօյի ազդանշանն էր, որի հետ մի ակնթարթում լսուեցին մի քանի տասնեակ հրացանի գնդակների վզզոցներ։ Քրդերը իրար ետևից վայր էին գլորւում իւրաքանչիւր վզզոցի ժամանակ և չէին կարողանում հասկանալ թէ՝ ում հետ գործ ունենն։ Նրանցից որը սպանուեց, որը վիրաւորուեց, իսկ փոքրամասնութիւնը հազիւ հազ իր գլուխը առաւ, կորաւ խաւարի մէջ։

Սալվին ժամանակին գտել ու հաղորդել էր Արթօյին վալդների չարամտութեան մասին։ Արթօն իսկոյն նրանց ետևիցն էր ընկել և այդ ձորակում հասել։

Հետևեալ առաւօտ բազմութիւնը Արթօյի և իր խմբի հետ, ծռելով ճանապարհը, շարժուեց դէպի Խասթուր գիւղը։

ԽԱՆԶԱԴԷ

(Կը շարունակուի)

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Quelques notes sur les eaux minerales du Caucase et en particulier sur la ville de Kislovodsk et sur la source de Narzan par Dr. Babaïan-Babaiew. Paris, *1909.*— *Մի քանի ծանօթութիւններ Կովկասի հանքային ջրերի և մասնաւորապէս Կիսլովոդսկ քաղաքի ու Նարզան աղբիւրի մասին։ Փարիզ. 1909 թ։*

Այս վերնագրով «Լումայի» խմբագրութիւնը ստացաւ բժշկապետ պ. Աւետիք Բաբայեանից իւր յօրինած և ներկայ 1909 թուին Փարիզում հրատարակած մի գրքոյկ, որ բաղկացած 22 մանրատիպ երեսներից՝ արտատպած է Annales d'Hydrologie—*«Ջրաբանական տարեգրութիւն» կոչուած 1909 թ. պարբերական հրատարակութիւնից։ Մեր հայրենակից յարգելի Դոքտորը, որ ահա մօտ ութը-ինը տարի բնակութիւն է հաստատել իւր ընտանիքով Ֆրանսիայի մայրաքաղաքում, մի տեսակ մասնագէտ միջնորդ է հանդիսանում իւր հայրենիքի և Ֆրանսիական հասարակութեան միջև՝ հաղորդելով սորան մեր երկրի վերաբերմամբ բժշկական և ջրաբուժական գիտութեան մասին տեղեկութիւններ, որ անշուշտ հետաքրքիր պիտի լինին հայ ընթերցողներիս համար ևս։*

Առաջին անգամը չէ, որ պ. բժ. Բաբայեանը համանման գրութիւններով ու յօդուածներով հանգամանօրէն ծանօթացնում է Ֆրանսիացիներին Կովկասի հանքային ջրերի բուժական բաղադրութեան, բուժիչ յատկութեանց

և ընդհանրապէս մեր հանքաջրային հարստութեան հետ։ Այսպէս օրինակ, ՝ի թիւս այլոց, վերոյիշեալ «Ջրաբանական տարէգրութեան» նախընթաց հատորներում հրատարակած ունի արդէն իւր «կրծքացաւերի բժշկումն Աբասթումանի ջրերով» յօդուածը, որպէս և 1899-ին «Թիֆլիսի հանքային աղբիւրներ» վերնագրով գրութիւնը «Archives générales d'hydrologie etc» պարբերականի մէջ, և այլն։

Այս անգամ նոյնպէս վերև առաջ բերած վերնագիր կրող գրքոյկով նա որպէս Ռուսաստանի կամ, ինչպէս ինքն է ասում, աւելի շուտ Կովկասի թղթակից-աշխատակից, իւր պարտաւորութիւնն է համարում հաղորդել ջրաբանական գիտութեամբ հետաքրքիր ֆրանսիացիներին մի քանի ծանօթութիւններ մասնաւորապէս Նարզան աղբիւրի և Կիսլովոդսկ քաղաքի մասին, ուր չորս տարուց ՝ի վեր ամեն ամառ, զբաղուած է ինքը գործնական բժշկումով, ինչպէս և տասնու-հինգ տարի շարունակ Աբասթումանի հիւանդանոցում զինուորական բժիշկ-խորհրդատու եղած։ Համառօտ կերպով յիշելով Անդրկովկասի և Հիւսիսային Կովկասի մէջ գտնուած յայտնի ու հասարակութեանը ծանօթ հանքային ջրերի բուժավայրերը՝ դոքտորը անցնում և մանրամասն նկարագրում է ֆրանսիացիներին իւր զեկուցման առարկան՝ այն է Նարզան աղբիւրը և Կիսլովոդսկ քաղաք-բուժավայրը։ Այս մասին թէև ոչ շատ ընդարձակ, բայց և բաւականին օգտակար մասնագիտական տեղեկութիւններ է տալիս հետաքրքիր ընթերցողներին, որով և մեր հայրենակիցը իւրովսանն նպաստում է բժշկական և մասնաւորապէս ջրաբուժական գիտութեանը Կովկաս երկրի վերաբերմամբ։

Ն. ՅԱՐՈՅ

ԿՈՍՏԱՆԵԱՆՑ Կ. «Տ. Ներսէս Ե. Աշտարակեցի Կաթողիկոս ամենայն Հայոց. մի հատուած նորա պատմութիւնից».
Ալէքս. 1909.

Վերջին տարիների յեղափոխական շարժումները, որոնք շատ համակրելի գաղափարներ էին պարունակում իրանց մէջ, ղդալի վնաս տուին գրականութեան և մանաւանդ լուրջ գրականութեան ծաղկման. դադարեց գրեթէ գեղարուեստը, դադարեց հայրենի կեանքի ուսումնասիրութիւնն ու պատմական գրականութիւնը։ Բրոշիւրային գրականութիւնը ողողեց ամբողջ ասպարէզը, միջազգայնութիւնը, եղբայրական դրօշակի տակ սկսեց սպառնալ ազգայնութեան այն ժամանակ, երբ եւրոպական ամեն մի ազգ իր ինքնուրոյնութիւնը և ազգային առանձնայատկութիւնները պահպանելու համար պատրաստ էր թնդանօթների հեղեղ տեղալ աշխարհի վրայ։

Եւ այսպիսի մի գրական ամայութեան ժամանակ, եթէ ասուպի նման մէկ մէկ երևան էին գալիս քիչ շատ յուսաւոր գործեր ազգային, գրական, գեղարուեստական և պատմական կեանքի վերաբերեալ, մեր հայ ժողովուրդն այնպէս էր ընտելացել միջազգային բրոշիւրային գրականութեան, որ ծաղրի առարկայ էր դարձնում այդպիսիներին։

Փառք Արարչին, փոքր առ փոքր սկսել են անցնել այդ ժամանակները և ժողովուրդն սկսում է նուիրուել կուլտուրական շինարար գործունէութեան, գիւղացին բռնեց իւր մահը, արհեստաւորն իր ուրագն ու մուրճը, վաճառականն իր գաղը և գրագէտն իր գրիչը՝ կռելու, կոփելու հայրենի աշխարհի աւանդութիւններն ու սովորոյթները և գալոց սերնդին հաղորդելու իւր երկրի պարծանքները։

Արևը լուսաւորեց աշխարհը և ամեն մի գործող, ինչպէս մի մի մրջիւն, ջերմացած նորա կենսատու ճառագայթներից, սկսեց իր սովորական աշխատանքը։

Ի՞նչ է ցոյց տալիս մեզ պատմութիւնը. հայոց քաղաքական կեանքը միշտ աղէտալի է եղել ժողովրդի համար, իսկ կուլտուրական կեանքը միշտ շինարար, միշտ յառաջդիմական, որոնց հետքերը այսօր իսկ զարմացնում են նայողին։ Ուստի

մենք շատ ուրախ ենք, որ վերջերս մի ադանծին շարժում է նկատուում հայերի մէջ՝ հիասթափութիւն թէթև քաղաքական կեանքի վերաբերմամբ և ծդտում անդրադառնալու. խաղաղ, քաղաքակիրթ գործունէութեան։

—

Այս նոր, ցանկալի ասպարիզում մենք տեսնում ենք մի քանի լաւագոյն աշխատութիւններ, նուիրուած հայոց և նորա եկեղեցու պատմութեան լուսաբանութեան. Ադոնցի նոր աշխատութիւնը, Երուանդ վարդապետի մի երկու երկերը և Կ. Կոստանեանցի մի նոր աշխատութիւն—«Ներսէս Ե. կաթուղիկոսը», որ մի հատուած է միայն հեղինակի չորս հատոր ժնդարծակ եկեղեցական պատմութիւնից։

Հայոց եկեղեցու պատմութիւնը հայ ժողովրդի հոգևոր կեանքի չար ուրարիի պատմութիւնն է. հայ եկեղեցին ինքը հայ ժողովուրդն է. եկեղեցին ժողովրդի մի ամենաուժեղ գործոնն է, և պատմութիւնից ամենաարրական հասկացողութիւն ունեցողն անգամ գիտէ, որ հայ եկեղեցին հայ ժողովրդի համար այն չէ, ինչ որ օրինակ յոյն եկեղեցին յոյնի, կաթոլիկ եկեղեցին՝ կաթոլիկ ֆրանսիացու, գերմանացու, իտալացու ևն համար։ Վերջիններն այսօր յոյն են, վաղը կաթոլիկ, բայց միշտ իրանց ազգութեամբ են որոշուում. նոցա համար կրօնը արդէն կորցրել է իր էական նշանակութիւնը, բայց հայ ազգն ու եկեղեցին ամբողջ 19 դար շարունակ բոլորովին հակառակ պատկերն է ներկայացրել, նա՝ ով որ թողել է հայ կրօնը, որի կենտրոնն է եղել Էջմիածինը, դադարել է և հայ լինելուց. և սորա հակառակ, եթէ որևէ այլազգի՝ հայ կրօն է ընդունել, նա դադարել է իւր ազգին պատկանելուց և այլևս հայ է կոչուել, այնքան զօրեղ է եղել կապը հայ եկեղեցու և հայ ազգութեան մէջ։

Պ. Կ. Կոստանեանցը, իբրև ճշմարիտ պատմագրող և ճշմարիտ հայ յիշեալ գրքին կցուած իւր մի ընդարձակ յառաջաբանում շատ գեղեցիկ կերպով է նկարագրում, թէ վերջին հարիւր տարուայ ընթացքում, այդպիսի կարևոր մի գործոն ինչ սուերակ դրութեան է վերածուել շնորհիւ Էջմիածնի վարիչների անիւթութեան և անյաջողական գործունէութեան,

որի հետևանք է համարում նա Մայր Աթոռի և բոլոր հայ եկեղեցիների անշուք դրությունը, երգեցողության անխնամ վիճակը, հայ եկեղեցու ուխտի անկեալ վիճակը։ Հեղինակը բողոքում է հոտի կրոնական-բարոյական դաստիարակության անկման դեմ, ուստի և ստիպողական և հնարաւոր է համարում Մայր Աթոռի բոլոր մասերի ներքին բարեկարգությունն ու կազմակերպությունը, որի համար միակ գրաւականն է համարում նա՝ բարեկարգ ճեմարանը, գործունեայ տպարանը, կրոնական գիտակցություն տարածող Արարատը, Մայր եկեղեցու ոգեշունչ պաշտամունքները, տառապեալ ժողովրդին հոգեւոր մխիթարություն մատակարարող քարոզիչները, ազգի ոգին ու միտքը լուսաւորող և քարոզացնող հոգեւոր գիտության մշակները եւ այլ՝ մտաւոր կեանքին զարկ տուող հաստատությունները։

Վերջին ցանկություններով պ. Կ. Կոստանեանցը կարծէք ի միէ ամփոփել ո՛չ միայն ազգի լուսաւոր անդամների իղձերն ու ցանկությունները, այլ, կարծում ենք, նաև բոլոր հայ լուսաւոր—աջակողմեան թէ ձախակողմեան մամուլի վերջերս արտայայտած ցանկությունները Էջմիածնի արդի կեանքի մէջ և Տ. Տ. Մատթէոս II-ի ձեռքով կատարուելիք բարեփոխությունները Մայր Աթոռում։

Այս այսպէս։—Հապա տեսէք, որ բոլորովին հակառակն են մտածում օտար գրողները մեր մասին։ Ձեզ օրինակ „Тифл. Листокъ“ թերթի յօդուածագիր ոմն Нунусъ-ը (№ 149). Նորա կարծիքով շատ թեթեւամիտ հարց է այն՝ թէ կաթուղիկոսի անունը ո՞ր ժամանակից պէտք է յիշատակել եկեղեցիներում, օծումից առաջ թէ յետոյ. նա ծաղրում է, որ յիշատակությունը լինելու է, ըստ մեր եկեղեցու օրէնքների, օծումից յետոյ միմիայն. դուցէ Նունուսի համար միևնոյն է, եթէ նոյն իսկ հայոց կաթուղիկոսին հայոց եկեղեցում ամենևին չը յիշատակեն, կամ թէ յիշատակեն ոչ հայոց ազգընտիր Օծեալին, այլ միտրևէ Մար Շիմոնին կամ եզիդների հոգեւոր պետին։

Նունուսը ծաղրում է Կոստանեանի ցանկությունը այլազգաւան հայերի՝ Հայաստանեայց եկեղեցու ծոցը դառնալու.

„какъ будто, еслибъ они оставалисъ католиками, перестали бы быть армянами, членами арм. націи“. Ակներև է, որ այս միայն Նունուսի խորին տգիտութեան հետևանք է հայ ժողովրդի անցեալ պատմութեան։ Այո՛, պ. Նունուս, „перестали бы“. իրողութիւնն այն է, որ դժբաղտաբար դաղարում են հայ լինելուց։ Ո՞ւր են Լեհաստանի, Տրանսիլուանիայի, Հունդարիայի մօտ կէս միլիոն հայերը, որոնք կաթոլիկութիւն ընդունելով „перестали“ հայ լինելուց և այժմ միմիայն նոցա հարուստ դերեզմանատներն են մնացել ու աւերակ հայ եկեղեցիները անթիւ հայ արձանագրութիւններով. նոցանից կազմուեցաւ Աբդարովիչների, Թորոսովիչների, Տրդատովիչների և ուրիշ հազարաւոր ... ովիչների լեհական-հունդարական մի ցեղ. ո՞ւր է Հնդկաստանի հարիւր հազարաւոր հայ գաղութի բնակչութիւնը, որոնք 1—2 հարիւր տարի առաջ Հնդկաստանի ժողովրդեան աչքն էին կազմում և հայ աշխարհի յոյսն ու ապաւէնը. նոցա աննշան բեկորներն են միայն մնացել այժմ, իսկ մնացեալները հայաչեայ և հայատիպ անգլիացիներ են անգլիքան եկեղեցուն յարած. ո՞ւր են այն հարիւր հազարաւոր հայերը, որոնք վերջին վեց հարիւր տարուայ ընթացքում պարբերաբար բռնի և կամովին մահմեդական կրօն ընդունեցին և այդպիսով կցուելով թիւրք ազգութեան՝ այսօր թիւրքից աւելի թիւրք են, մոլեռանդ ու կատաղի, թշնամի հայ ազգութեան և կրօնին. օրինակներ էք ուզում, ծեզ ամենաստոյգ տեղեկութիւնները կտայ Օսմանեան հայութեան պատմութեան ու կեանքին քաջ ծանօթ Ազգիս նորընտիր Վեհապետը և նորա պատուաւոր ուղեկից Մինաս Չերազը։ Ո՞ւր են այն բազմաթիւ հայերը, որոնք XIX դարու. ընթացքում, կրօնի սահմանափակումների ժամանակ խնամութիւնների և այլ պատճառներով հետզհետէ յունադաւանութիւն ընդունելով՝ միացան ռուս ժողովրդի հետ և այսօր հայի արտաքին տիպի յատկութիւններով միայն կարելի է ճանաչել նոցա ծագումն ու արմատը։

ԴաՀրձեալ պէտք են ծեզ փաստեր։

Եւ երբ, քաջ գիտենալով վերը առաջ բերած ցաւալի իրո-

ղութիւնը, պ. Կոստանեանցը վտանգաւոր է համարում հայութեան համար դաւանափոխութիւնը, պ. Նունուսը հին դարման է քամուն տալիս, ծաղրում է հայ եկեղեցին, ծաղրում է Էջմիածինը, Մեղուի, Նոր Դարի, Սուքիասի, Նահապետեանի, Կոստանեանի անուններ է տալիս, կղերականութիւն է դտնում ամեն կողմ, երևի երազի մէջ էլ սոցիալիստութիւն տեսնելով, Մակարի օրերն է ծաղրում, խաւարամիտներ է տեսնում իւր շուրջը։

Եւ երբ հեղինակը պահանջում է Էջմիածնի Աթոռից բարեզարդութիւն, միաբանութեան անծնուրացութիւն և վերջապէս որ Էջմիածինը կենտրոն լինի հայութեան քաղաքակրթական զարդացման և լուսաւորութեան. . . պ. Նունուսը գոչում է назадъ къ предкамъ, къ мракобѣсію. . .

Այո՛, պ. Նունուս, հայատեցութեան և Էջմիածնակերութեան փառքը Գալիցինի և Կանչելիի հետ ամբողջովին Ձեզ փէշքաշ, կեղծ սոցիալիստութեան դափնիների հետ։

ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Կոստանեանց Կ. Տ. Ներսէս Ե. Աշտարակեցի Կաթուղիկոս ամենայն հայոց. մի հատուած նորա պատմութիւնից, Ալէքսանդրապոլ. 1909. գ. 30 կ.

Ա. Աբ՛ղեան. Աշխարհագրութեան դասագիրք. ա. մ. երկրորդ ճոխացրած տպ. 107 նկարով. Թիֆլիս 1909 գ. 50 կ.

Շտաուդէ. Հին ուխտի նիւթի մշակութիւնը 2 մ. գերմ. թարգմ. Սահակ աք. Սահակեանց. Թիֆլիս. 1909. գ. 1 ռ. 65 կ.

Ա. Աբէլեան. Խելագար Մինաս. Թիֆլ. 1909 գ. 20 կ.

Зензиновъ М. Чай и пошлина. Москва 1909 ц. 5 к.

Տնայնագործական Համագումար. Թիֆլիս 1909 գ. 70 կ։

Gurgen Ediljan. Kritik der Zillér. schen Formalstufentheorie.

Հայ Գրողներ Ա. կազմեցին Ղ, Աղայեան, Ա. Ահարոնեան, Յով. Թումանեան, Վ. Փափազեան. Թիֆլիս 1909 գ. 2 ռ.

М. Алавердянцъ. Пребываніе Имп. Ник. I въ Эчм. и въ Тифл. С. П. Б. 1909.

Յ. Կոստանեան. Նոր Իսրայէլի Սաղմոսներ. Բագու 1909.

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անկասկած ներկայումս մեր ներքին կեանքի ամենախոշոր երևոյթը Էջմիածնի վեհափառ Գահակալի հաստատութիւնն է և շնորհաբեր գալուստը մեր երկիրը։

Ողջունում ենք Ամենայնի Հայրապետի ողջամբ ժամանումը կովկասեան մայրաքաղաքը, Որ իւր հետ, մի նշանաւոր զուգադիպութեամբ, ազատութիւն բերեց մեր դերեալ եղբայրներին, որոնց մի ստուար մասը դեռ ևս հեծում է բանտերում։

Բոլորովին աւելորդ է խօսել այն մեծ նշանակութեան մասին, որ այսօր էլ ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը ունի ոչ միայն հայ հոգևորականութեան, այլ և բազմաչարչար հայ ժողովրդի ընդհանրութեան համար։

Կաթողիկոսի ընտրութեան օրից սկսած մինչև այսօր թէ Կովկասի և թէ Թիւրքիայի հայ մամուլը չէ դադարում ծրագիրներ և խորհուրդներ տալու աստուածընտիր Հայրապետի ապագայ գործունէութեան համար։ Աւելորդ է խօսել նաև այն յօդուածների մասին, ուր հայ գործիչներից ոմանք գլուխ են ջարդում և զոռում-զոչիւններ բարձրացնում, իրանց սեպհականելով Հայրապետի ընտրութեան պատիւը. կան և դրագէտներ, որոնք հարկաւոր են համարում բացատրութիւններ տալու իրենց նախկին սխալների մասին։ Այսպիսի մարդկանց թէ գրութիւնների, թէ տուած խորհուրդների և ծրագիրների արժէքը ինքն ըստ ինքեան հասկանալի է։

Հրապարակի վերայ կան բազմաթիւ հարցեր, որոնց մասին գրում են։ Այսպէս, օրինակ, առաջարկում են՝ աշխարհականներից բաղկացած մի մարմին ստեղծել Էջմիածնի գործերը վարելու համար. կայ Էջմիածնի տնտեսական դրութեան բար-

ւոքման խնդիր, դպրոցների, ճեմարանի, պոլոժէնեայի և այլ խնդիրներ։ Այս ամենը շատ լուրջ խնդիրներ են և նոցա ծուծումը ոչ մի կերպ չի կարող լինել փառամոլ և շահամոլ մարդկանց խորհուրդներով։

Լրագիրներում երևեցած հատուկտոր տեղեկութիւններից երևում է, որ տակաւին ժամանակը անբարեյաջող է հայութեան համար. Հայոց Հայրապետը, ինչպէս իմանում ենք լրագիրներից, ստիպուած է եղել բացատրութիւններ տալ մի այնպիսի հասարակ խնդրի մասին, որպիսին է, օրինակ, երդման լեզուի խնդիրը։ Այս հանգամանքը խիստ նշանակալից է։ Երբոր Ռուսաց Պետական Դուման խղճի և կրօնի ազատութիւն է օրէնսդրում, հայերին առաջարկում են նոյն իսկ երդման լեզուի խնդիրը։ Մենք 'ի հարկէ շատ լաւ գիտենք, որ Գալիցինի օրերը անդարձ անցել են և չեն կարող կրկնուել Ռուսաստանում շատ պատճառներով. նախ՝ որովհետև այժմ չի կարելի առանց Պետական դումայի—հասարակական կարծիքի օրէնք հրատարակել, երկրորդ՝ որովհետև ներկայ նախարարապետը ինքը ոչ մի կերպ չի կարող համակրող լինել մի աննշան ազգի ճնշման և եթէ մի քանի խնդիրներում կառավարութիւնը դեռ շարունակում է հին վերաբերմունք դէպի հայերը՝ այդ այս կառավարութեան ստեղծած դրութիւնը չէ, այլ մնացորդը հին ռէժիմի տրադիցիաների, որոնց բոլորովին անհետանալը դեռ ժամանակի է կարօտ։

Սակայն վեհ. Հայրապետի տրուասանած մի քանի խօսքերից պարզ է, որ նորին սրբութիւնը շատ լաւ ըմբռնել է ժամանակի նշանակութիւնը, որովհետև Նա միշտ շեշտում է օրէնքը և օրինապահութիւնը։ Պարզ է, որ Նա իւր անելիքը Հայ ազգի և եկեղեցու բարօրութեան համար պէտք է աշխատէ օրէնքով անել և ցանկալի օրէնքներ և արտօնութիւններ ձեռք բերել։

Ակնյայտնի է ուրեմն, որ ոչ նոր կենտրոնական ժողովներով և ոչ որևէ երևակայական մարմիններով կարելի չէ ոչինչ անել։

Պատմական դժբաղդ հանգամանքների շնորհիւ երկար դարերի ընթացքում Հայ ժողովրդի հասարակական գործերը

զրաղուել են հայ ազգի ոչ-լաւագոյն տարրերը։ Վերջին երկու դարի հայ թէ քաղաքական և թէ իրական կեանքի հետ ծանօթ և ուսումնասիրողը լաւ գիտէ, որ ըստ մեծի մասին մեր հասարակական գործերը եղել են փառամոլների և շահամոլների ձեռքերում. նախ ուրեմն էջմիածնի հետ կապուած խնդիրները տնօրինելու համար հարկաւոր են լուրջ մասնագէտներ և լաւ մարդիկ ամեն մի բաժնի համար՝ վարչական, տնտեսական, դպրոցական, իրաւական և յարաբերական։

Սոցանից բաղկացած խորհուրդը կլինի ապագայ այն ընտրովի մարմնի կորիզը, որ պէտք է նորին վեհափառութեան ջանքերով օրինականութիւն ստանայ։ Այնուհետև հանդամանքներն իրանք ցոյց կտան, թէ ինչպէս պէտք է մօտենալ միւս խնդիրների լուծման։

Վերը մենք ասացինք թէ նորին վեհափառութեան գալուստը նշանաւորուեցաւ բազմաթիւ հայ ինտէլիգէնտների ազատութեամբ. «Հայրենիք»-ում մենք մեր կարծիքը հայ ինտէլիգէնտ մարդոց բանտարկութեան մասին վաղուց յայտնել ենք «զուր հալածանքներ» վերնագրով յօդուածում։ Այս անգամ աւելորդ ենք համարում մի անգամ ևս կրկնել, այլ ցանկանում ենք միայն յիշել, որ մի խումբ հայ ինտէլիգէնտների բանտարկութիւնից ազատուելը տեղի ունեցաւ Հայոց սրբազնագոյն Հայրապետի Ռուսաստան ոտք դնելու ժամանակ, թէև նոցա մէջ կային մարդիկ, որոնք կողմնակից էին ոչ միայն Հայոց Հայրապետութեան, այլ և ամբողջ հայ հոգևորականութեան նշանակութեան նսեմացման։ Այս մասին միայն կասենք Sapienti sat!

Մենք չենք կասկածում, որ նորին վեհափառութիւնը, իբրև փորձուած և հմուտ վարչական անձնաւորութիւն, կկարողանայ յաղթել ամեն դժուարութեանց և ոչ կուսակցութիւն, ոչ անձնաւորութիւն և ոչ էլ գաղտնի մեքենայութիւններ չպիտի կարողանան կրկնել տալ անցեալ սխալները, որովհետև ամեն տեսակ տուած խորհուրդներից նա կկարողանայ ընտրել պիտանին և բարին։

ԳԱՐԵԳԻՆ ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

ՈՎ ՊԻՏԻ ԼԻՆԻ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ

Էջմիածնի ալևոր կամարները մի տարի թափուր մնալուց յետոյ վերջապէս իւր գիրկն առան նոր Հայրապետին. Հայկական ամբողջ կեանքը այն աստիճան քայքայուած է ու այնպէս է շեղուել իւր կանոնաւոր ուղիից, որ նոր Հայրապետին մեծ կամքի ոյժ է պէտք և մեծ հանճար՝ ամեն մի կեանքի երևոյթին արձագանք տալու, բարեւոքելու աղմկայոյզ կեանքը։

Շատ ցաւեր ունի Հայ ազգը և այդ ցաւերից գլխաւորը կրթական գործն է։ Նոր Հայրապետը իւր ծրագրական ճառի մէջ ինքը շեշտեց այդ և մենք լիայոյս ենք, որ նա պիտի կարողանայ կրթական գործը դնել անհրաժեշտ բարձրութեան վրայ։ Բայց կրթական գործ ասելով մենք հասկանում ենք ընդհանուր հայկական կրթութիւն. նախ քան ընդհանուրի դիմելը, մեր կարծիքով, անհրաժեշտ է նեցուկ տալ քանդուող շէնքին, որ մնացորդ բեկորները փլատակների չվերածուեն, ու իրենց տակը չթաղեն ամբողջ հայկական կրթական գործը։

Դպրոցական գործիչների ձերբակալումը մեր կեանքում վերջերս յաճախակի բնոյթ է սկսել կրել. առանձին աչքի են ընկնում Թիֆլիսի Ներսիսեան Դպրոցի տեսուչ Ահարոնեանի և Էջմիածնի ճեմարանի՝ Մ. Բերբերեանի ձերբակալումը, որոնց մասին մենք առիթ ենք ունեցել մի քանի անգամ գրել։ Այժմ, երբ հեռագիրը մեզ աւետեց որ ճեմարանի տեսուչ Բերբերեանը ազատ է ձերբակալութիւնից, մենք նորից դիմում ենք ճեմարանի տեսչի խնդրին։

Այն մութ մթնոլորտը, որը բնորոշում է այդ ձերբակալութիւնը, մենք մի կողմն ենք թողնում։ Այժմ Հայրապետը առիթ ունի ինքն անձամբ տեսնել պ. Մին. Բերբերեանին և գնահատել նրա ուսուցչական, վարչական ու մանաւանդ տեսչական տաղանդը։ Հայրապետը գիտէ նոյնպէս, որ ժամանակ է ազատել դպրոցները «ուսեալ—տգէտ» վարիչներից, զուրկ գործունէութեան եռանդից և արժանի հատուցումը կտայ Բերբերեանի նման մի լուսամիտ մարդու, որի լուսամտութիւնը հանդիստ չի տալիս ոչ խաւարամիտ «մութ» անձանց և ոչ «ռէտրոգրադ—սոցիալիստներին», որոնք զինուած ինտրիգի կեղտոտ զէնքով, անարժան բրոշիւրային զրպարտութիւններով ու աշակերտական տհաս խլրտումներով արգելառիթ էին հանդիսանում Բերբերեանին նրա շինարար գործունէութեան ժամանակ։

Բերբերեանն էր, որ կարողացաւ գէթ մասամբ (որովհետև կարճ էր ժամանակը և ուժեղ ինտրիգը) մաքրել Դէորգեան ճեմա-

բանը, այդ ռուսահայոց միակ բարձրագոյն դպրոցը կատարեալ տգիտութիւնից, որին ապացոյց կլինի Բերբերեանի զեկուցումը վերջին դէպքերի մասին վեհ. հայրապետին։

Թող գէթ այս անգամ ճեմարանում գերակշռի պայծառ լոյսը ու Հայրապետի առաջին քայլը այդ դժբաղդ դպրոցի վերաբերմամբ լինի մի այնպիսի որոշում, որը նախ կարդարացնի վեհափառի ծրագրական ճառը կրթական գործի վերաբերմամբ և ապա վեհի ապագայ ինքնուրոյն գործունէութեան նախակարապետը կլինի։

Իսկ գործունէութեան եռանդից զուրկ «Ակակի Ակակիևիչները» թող մտնեն ընդմիշտ իրենց որջերը ու դալարեն Ճեմարանի շէմքը անմիտ կերպով մաշելուց։

Վ. Ա.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ինչպէս արդէն սպասւում էր, Ն. Վեհափառութիւն Տ. Տ. Մատթէոս II կաթողիկոսը յունիսի 14-ին ժամանեց Թիֆլիս։

Թիֆլիսի կարգադրիչ մասնաժողովի կողմից մի ամբողջ խումբ ընդառաջ էին գնացել Վեհին մինչև Աղստև կայարանը, իսկ Արցախի թեմի պատգամաւոր Հ. Առաքելեանը մինչև Բալաջարի։

Թիֆլիսի ընդունելութիւնը, շնորհիւ կաթողիկոսական ընդունելութեան կարգադրիչ մասնաժողովի եռանդուն գործունէութեան, բուն ժողովրդական էր և նախկին կաթողիկոսների ընդունելութեան հանդէսներից անհամեմատ շքեղ։

Երկաթուղու կայարանում խռնուած ահագին ամբոխ ժողովրդեան, արքայասենեակը զարդարուն և ալ մահուդ սփռուած գնացքի վայրից մինչև Հայրապետական կառքը։ Արքայասենեկում խմբուած էին բազմաթիւ հասատատութիւնների, հասարակութիւնների և խմբագրութեանց պատգամաւորութիւններ։ Գնացքի առաջ սպասում էին քաղաքումս գտնուած կուսակրոններ, թեմական Ատենի ներկայացուցիչներ, քաղաքագլխի պաշտօնակատարն ու իրաւասուներ, քաղաքիս հասարակութեան պատուաւոր ներկայացուցիչներ ևն ևն. կայարանում, ինչպէս և ամբողջ ճանապարհին և հանդիսին կարգը պահպա-

նում էին կարգադրիչ մասնաժողովի անդամները, որոնք որոշ-ւում էին հայրապետական ժապաւինազարդ նշանագրոշմով։ Պաշտօնական ընդունելութիւն կառավարութեան կողմից չկար, բայց երկրիս Կոմս փոխարքայի կողմից Ն. Ս. գալուստը ողջունեց դնդապետ պ. Լազարեանը, որը և յայտնեց, որ Կոմսը ցանկութիւն ունի նոյն օրը կէսօրից յետ ընդունել Վեհին պալատ։

Այնուհետև Ն. Ս. գալուստը շնորհաւորեցին պ. պ. Ս. Ցարութիւնեան և Ա. Խատիսեան, որից յետ վեհը մտնելով իւր համար պատրաստուած կառքը, ուղեկցութեամբ իւր շքախմբի, Հայրապետական խաչ ու դաւազան կրող ծիաւոր քահանաների և ամբողջ պատգամաւորական խմբի ու Ժողովրդեան հարիւրաւոր կառքերով, դիմեց Աղէքսանդրեան այգին, որի առաջ կազմ և պատրաստ սպասում էր եկեղեցական դասը զգեստաւորուած, անթիւ ժողովրդեան հետ միասին։ Այնտեղ վեհը շուրջառ առնելով և մտնելով ամպհովանու տակ, կարգադրիչ մասնաժողովի կարգադրութեամբ և օրինակելի կարգապահութեամբ հանդէսն առաջ ընթացաւ դէպի Վանքի եկեղեցին։ Երգում էր դպիրների լիուլի խումբը։

Հանդէսը երբ Վանքի եկեղեցի մտաւ՝ վեհ. Հայրապետը ընդունուած աղօթումից յետոյ բեմ բարձրացաւ և մի իմաստալից ճառով նկարագրեց հայ ժողովրդի արդի դրութիւնը և հայ ազգի իր վերայ դրած ծանր լուծը, որ կատարել կարողանալու համար խնդրեց աղօթել. ժողովուրդը միաբան ծայնակից եղաւ Ն. Սրբութեան մաղթանքներին։

Նոյն հանդիսով վեհը դիմեց դէպի առաջնորդարան, ուր անմիջապէս ներկայացան Ն. Սրբութեան Թիֆլիսի նահանգապետն ու Էջմիածնի Սինոդի պրոկուրորը, քաղաքապլուխն և իրաւասուները և քաղաքիս հայ հասարակութեան ներկայացուցիչներ և ապա հանդիստ առաւ իւր օթևանում։

Մի փոքր յետոյ վեհը իւր շքախմբի, կարգադրիչ մասնաժողովի անդամների և ուրիշ հոգևորական և աշխարհական անձանց ուղեկցութեամբ այցելեց վրաց Սիոնի տաճարը, ուր Ն. Ս. ընդունեցին 3 քահանաներ, որոնցից մէկը մասնաւոր

տեղեկութիւններ տուեց վանքի սրբութիւնների մասին վրաց լեզուով. վերջը մի քանի խօսք խօսելով այնտեղ երկու հարևան ազգերի եղբայրական բարեկամական յարաբերութիւնների կարևորութեան մասին՝ մեկնեցաւ այնտեղից։ Այնտեղ ևս պաշտօնական ընդունելութիւն տեղի չունեցաւ։

Նոյն օրը Վեհ. Հայրապետը պաշտօնական այցելութիւն տուաւ Տ. Փոխարքային, ուր սիրալիր ընդունելութիւն ցոյց տուին Կոմս և Կոմսուհին, որոնք և անմիջապէս փոխայցելութեան եկան Հայրապետին։

Վեհ. Հայրապետը 10 օր մնաց Թիֆլիզում և թեմիս ս. Առաջնորդի, կարգադրիչ մասնաժողովի ու Թիֆլիսի հայ հասարակութեան կողմից ցոյց տրուեց ամեն տեսակ յարգանք, արժանի թէ Հայոց Հայրապետութեան և թէ յատկապէս Ն. Սրբութեան անձին։

Վանքի բակում ամենայն գիշեր ելեքտրական հրավառութիւն կար, ուր մինչև ուշ գիշեր խռնուած էր անհամար բազմութիւն, որոնք չէին ցրւում, մինչև գէթ մի անգամ վերը չէր դուրս գալիս պատշգամբ, օրհնում և բարի երթ մաղթում նոցա։

Վեհափառի Թիֆլիս լինելը նշանաւորուեց մի նշանաւոր գործով—Ներսիսեան Դպրոցի հիմնարկութեամբ. նոյն յունիսի 17-ին Նաղիբեան տիկնոջ նուիրած գետնի վերայ պ. Ա. Մանթաշեանի հաշուով հիմքը դրուեց դպրոցի նոր շինութեան, եկեղեցական փառայեղ հանդիսաւորութեամբ, ուր առաջին հիմնաքարը դրեց ինքն վեհ. Հայրապետը։ Դպրոցի հոգաբարձութիւնը ոչ մի ջանք չէր խնայել հանդէսը շքեղ ու վայելուչ կացուցանելու համար։ Ահագին թուով հրաւիրեալներին վրաններում տրուեց հանդիսաւոր նախաճաշ, որին ներկայ էին թէ Հայրապետը և թէ պետական բարձրաստիճան անձինք։ Նախաճաշը բաւական պատշաճ կերպով ղեկավարում էր Թիֆլիսի փոխ-քաղաքագլուխ պ. Ա. Խատիսեանը։

Յուլիսի 23-ին վեհ. Հայրապետը բարեհաճեցաւ հրաժեշտ տալ Թիֆլիսին և ուղևորուել դէպի ս. Էջմիածին։ Նորին սրբութեան հաճելի էր ճանապարհին այցելել Սանահնի վանքը։

Թիֆլիզից ուղեկցում էին Թեմիս ս. Առաջնորդն ու անդամ վարչապետը, կարգադրիչ Ցանձնաժողովի անդամների մի մասը և այլ պատգամաւորներ։

Սանահնում ընդունելութիւնը խիստ վայելուչ էր։ Ն. Ս. դիտեց վանքն ու միւս հնութիւնները, որոնց մասին մանրամասն բացատրութիւններ էր տալիս պ. Ստ. Լիսիցեանը։ Վերջը դիշերեց այնտեղ և միւս օրը ուղևորուեց դէպի Ալէքսանդրապոլ, և այնտեղից Անի։ Վերադառնալով Ալէքսանդրապոլ վեհափառը շարունակեց իր հանապարհը, ամբողջ ճանապարհին ընդունելով բոլոր հայաբնակ վայրերի հասարակութիւններին աղուհացով և ճառերով ու կեցցէներով և հուսկ ուրեմն յուլիսի 26-ին Տիրոջ յաջողութեամբ մուտ գործեց իւր Աթոռանիստը՝ ս. Էջմիածին։

Վեհափառը առոյգ է և ժիր և մեզ վերայ թողեց իմաստալից անձի տպաւորութիւն։

ԼՈՒՐԵՐ

Ազգիս Վեհ. Հայրապետի օծումը, ինչպէս հաղորդել է Սինօդը տեղւոյս մի քանի լրագիրներին, նշանակուած է առաջիկայ սեպտեմբերի 13-ին։

Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութիւնը Թիֆլիսի իւր բնակարանում, Աբաս-Աբադեան փողոց, բաց արաւ գրադարան-ընթերցարան։

Վեհ. Հայրապետը Անի եղած միջոցին պրոֆ. Մառին յանձնել է 600 ռուբլի Անիում կատարուող պեղումների համար։

Մոսկուայի հայ հասարակութիւնը 12000 ռուբլի է ժողովել Էջմիածնում Ազգիս Վեհ. Հայրապետի համար մի վայելուչ վեհարան շինելու համար։

Կառավարութեան հրամանով դադարեցրած է «Գործ» օրաթերթը վնասակար ուղղութեան համար։

Օգոստոսի 1-ից լոյս է տեսնում «Հորիզոն» անունով մի ուրիշ օրաթերթ։

Լոյս տեսաւ նաև «Սուրհանդակ» անունով լրագիր, առ ժամանակ երկուշաբթի օրերը։

Վանաց եկեղեցու թանգարանի վարչութիւնը ձեռնարկել է «Կիրակոս Գանձակեցի» պատմագրի հրատարակութեան։

Ազգիս Վեհ. Հայրապետի Սանահին այցելելը՝ մի բարի գործով նշանաւորելու համար կազմուած է մի մասնաժողով՝ բաղկացած պ. պ. Սա. Լիսիցեանից, Եր. Լալայեանից, Ի. Յարութիւնեանից, և Գիւտ աք. Աղանեանից՝ Հաղբատի հինաւուրց նշանաւոր վանքի վերաշինութեան համար։ Մասնաժողովի պատուաւոր անդամ է հրաւիրուած պ. Մ. Արամեանցը, որ խոստացել է և իւր նիւթական աջակցութիւնը։ Մասնաժողովը ներկայանալով Նորին Սրբութեան ամենայն Հայոց Կաթուղիկոսին Սանահնում՝ ստացաւ Նորա օրհնութիւնն ու հաստատութիւնը և թիւիս սրբ. Առաջնորդի հաւանութիւնը։ Մասնաժողովն արդէն սկսել է կարևոր խորհրդածութիւններ կատարել։

«Баку»-ի մէջ կարդում ենք, որ ներկայումս Ռոստովի և Նովոչերկասկի բանտերում գտնուում են մօտ 500 հոգի, որոնք ձերբակալուած են «Դաշնակցական» գործի պատճառով, և բանտերը իւրաքանչիւր շաբաթ լցուում են Կովկասից յատուկ գնացքով բերուող ձերբակալուածներով։—Նոցանից մի քանիսը, ինչպէս երևում է, արձակուելու են գրաւականներով. Մինաս Բերբերեանին արձակեցին 15,000 ռ. գրաւականով, իսկ գրագէտ Ա. Ահարոնեանը դեռ բանտումն է և ցաւալին այն է, որ նա բանտում հիւանդ է։ Բանտարկեալի որդին գնաց Ռուսաստան, որ վիջնորդէ գոնէ թոյլ տալ մասնաւոր հիւանդանոց տեղափոխել նորան։

Թաւրիզից „Русск. Слово“ լրագրին հաղորդում են, որ առաջիկայ տարուանից այնտեղ բացւում է հայկական համալսարան։ Հայերի այն ցնորքը, որ ունենան իրանց բարձրագոյն դպրոցը, իրանց հայ գիտնական և կուլտուրական կենտրոնը-իրագործւում է։ Այդ բանը նոցա թոյլ չտրուեց Ռուսիայում և նոքա շինում են Պարսկաստանում։ Ապագայ համալսարանի համար արդէն յատկացրած է յարմարաւոր տուն, մեծ պարտէզով և միջոցներ են ժողովել. համալսարանական հիմնական դրամագլուխ է դրուած 75,000 ռուբլի, որ լուսաւորութեան նպատակի համար կտակել է Թիֆլիս վախճանուած հայ բարեգործ Զուրաբեանը։ Բժշկական ֆակուլտէտի պիտոյքների համար դիտաւորութիւն կայ ընդարձակել Թաւրիզի քաղաքային հայ հիւանդանոցը և կլինիկայի վերածել։

ՀԱՇԻՒ

ի նպաստ Թիւրքահայաստանի հայ տառապեալների

ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ

Վերջին անգամ հրատարակուած հաշուից յետոյ (տես «Մշակ» № 31, 13 փետրվարի 1909) Մասնաժողովը հետևեալ նուէրներն է ստացել. 1) «Գործի» խմբագրութիւնից՝ 4-րդ անգամ 400 ր., 2) Թիֆլիսում հ. Յովսէփ վարդապետ Մարգարեանից՝ 3 ր., 3) «Գործի» խմբ. 5-րդ անգամ՝ 500 ր., 4) Բագուից տիկին Սոֆիա Լազարեան Մարտիրոսեանից՝ իր պսակադրութեան 20-ամեկի տօնման ծախքի փոխարէն՝ 100 ր., 5) Ա. Վէրմիշեանից՝ «Бакинское Эхо», «Баку» թերթերի միջոցով հանգանակուած 380 ր- 44 կ., 6) «Գործի» խմբագրութիւնից 6-րդ անգամ՝ 400 ր., 7) «Баку» թերթի միջոցով Ս. Աթաբէգեանի գործարանի ծառայողներից և բանուորներից 42 ր. 75 կ., 8) «Баку» թերթի միջոցով Բագուում հանգանակած ի նպաստ աղանացիների՝ 166 ր. 9 կ., 9) «Մշակի» խմբագրութիւնից 8-ր անգամ՝ 500 ր., 10) «Մշակի խմբագրութիւնից 9-րդ անգամ՝ 200 ր., 11) Աստրախանի հայ հասարակութիւնից՝ ուղարկած յանուն Ա. Մելիք-Ազարեանի՝ 1851 ր.։ Ընդամենը 5044 ր. 15 կ.։

Յունիսի 19-ին Մասնաժողովը փոխադրել է Կ.Պոլիս ռուսական դեսպանատան՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքին յանձնելու համար, ի նպաստ Աղանայի և Հալէպի նահանգների հայ սովեալների, 400 օսմ. լիրա։

Մասնաժողովը իր գործունէութեան սկզբից մինչ 30 յունիս 1909 թ. հանգանակել է ընդամենը 19,936 ր. 92 կ.։

Յիշեալ գումարից փոխադրել է Կ. Պոլիս ռուսական դեսպանատան միջոցով հայ տառապեալներին բաժանելու՝ 36,000 ֆրանկ և 400 օսմ. լիրա, որի համար վճարել է 17,189 ր. 05 կ.։ իսկ մինչև այժմ դիւանական և այլ մանր ծախք եղել է 277 ր. 86 կ., ընդամենը 17,466 ր. 91 կ., մնում է կանխիկ 2470 ր. 01 կ., որոնց 2377 ր. 20 կ.-ը պահւում է Թիֆլիսի Առևտր. Բանկում ընթացիկ հաշուով, իսկ 92 ր. 81 կ. գանձապահի մօտ։

Նուէրների ընդունելութիւնը շարունակւում է։ Խնդրւում է նուէրներն ուղարկել Մասնաժողովի գանձապահի հասցէով՝. Тифлисъ, контора А. И. Манташева и К, Аракелу Саруханяну, կամ Tiflis, Société Mantacheff et C-ie, A. Saroukhan.

ԿՈՉ

Թիւրքաց Հայաստանի հայ աղէտեալներին օգնող ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՄԱՍՆԱ-ԺՈՂՈՎԸ, վերսկսելով իր գործունէութիւնը, Կայսերական Բարձր կառավարութիւնից ստացած թոյլտուութեան համաձայն, սրանով կոչ է անում Կայսրութեան բոլոր հայ ազգաբնակութեանը՝ փութալ օգնութեան ձեռք կարկառել Թիւրքաց Հայաստանի տառապեալ և աղէտեալ հայ ժողովրդին, մանաւանդ Ադանայի սոսկալի ջարդերից յետոյ անօգնական, անտէր մնացած թշուառ որբերին։

Անօրինակ է պատմութեան մէջ և սոսկալի այն աղէտը, որին ենթարկվեց Ադանայի և շրջակայքի հայ ժողովուրդը։ Եւս առաւել ուրեմն բարոյական ահագին պարտականութիւն է ընկնում Ռուսաստանի և այլ տեղերի հայ ժողովրդի վրա փութալ ամոքել դառն վշտերը, սրբել աղի արտասուքները և փրկել անտէր, անօգնական մնացած որբերին։

Նուէրները պէտք է ուղարկել Հանգանակիչ Մասնաժողովի անդամ-գանձապահ Առաքել Սարուխանեանին այս հասցէով. Тифлисъ, Контора А. И. Манташева и К°, Аракелу Саруханяну. Tiflis, Societé Mantacheff e C.-ie, A. Saroukhan.

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ Ս. ՔԱՀԱՆԱՅԻ ՏՊԱԿ. ՀԻԼԱՐՈՎՍԿԻ—ՄՈՍԿՎԱ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԳԻՒՏ Ե. Ք. ԱՂԱՆԵԱՆՑԻ

ԳԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ Է

Դաւիթ Կաթողիկոս, մասն Բ.

Ընդարձակ յառաջաբանով, յաւելուածներով, ծանօթութիւններով և մի մեծ վիմատիպ ֆիրմանով.

ԳԻՆՆ Է 4 ՌՈՒԲԼԻ.

Բացուած է 1909 թ. բաժանորդագրութիւնը
(ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՀԱՍԿԵՐ

մանկական պատկերազարդ ամսագրի

Ամսագիրը լոյս է տեսնում Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով Մշտական աշխատակցութեամբ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԵՒ ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Ամսագիրը ունի նաև ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ուր շօշափւում են ընտանեկան կրթութեան վերաբերեալ կարևորագոյն հարցեր։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ

Տարեկան ՀԱՍԿԵՐ, մանկ. բաժին	3 ռ.	մանկավարժ. բաժ.	4 ռ.
Կէս տարուանը . .	1 ռ. 80 կ.	.	2 ռ. 10 կ.
Մէկ ամսուանը . .	— 30 կ.	.	— 35 կ.
Պարսկաստանում . .	3 ռ. 50 կ.	.	4 ռ. 50 կ.
Արտասահմանում տարեկան	ԻՆԸ ֆր.		ՏԱՍՆԵՐԿՈՒ ֆ կ.
Հրատարակութեան սկզբից մինչև 1909 թ. վերջը	11 ռ.		15 ռ

ԼՈՒՄԱՅ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ 14 ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

1909 թուին Լուման լոյս կտեսնի իւր նախկին դիրքով ամեն ամսի 20-ից յետոյ, բաղկացած 48—80 երեսներից։ Ինչպէս միշտ հարկաւոր դէպքերում, կտրուեն պատկերներ հասարակական երևոյթների առթիւ։

ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Նիւթերը պիտի գրուած լինին պարզ, մի էջի վրայ և ոչ աւելի քան 32 տպ. երես։

2. Արտատպութիւն ոչ մի դէպքում չի տրուում։

3. Նիւթերը չեն վերադարձնուում. յետ ստանալ ցանկացողները պիտի ուղարկեն փոստի ծախք։

4. Զտպուող նիւթերի մասին ծանուցում է տրուում ամսագրի մէջ պատասխանների բաժնում։

5. Թարգմանական նիւթեր ընդունուում են շատ կարճ և ընտիր հեղինակների։

ԲԱԺՆԷԳԻՆՆ է տարեկան 6 ռ., կէս տ. 4 ռ.,
Արտասահման „ 8 „ „ 5 „

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՔԻ ՀԻ ՈՒՂԱՐԿՈՒԻ

Հասցէն Թիֆլիս Պոլիցէյսկայա 7. Tiflis Polizeiskaja, 7.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ է

ՆԱՄԱԿԱԳԻՐՔ

երկրորդ ճոխացրած տպագրութիւն

АТРПЕТЪ

МАМЕД-АЛИ-ШАХЪ

Современная Персія

Съ 36 Картинами

Цѣна 1 руб.

Складъ: Тифлисъ Книж. Торг. „Гутенбергъ“. Александрополь. Типог. „Ширакъ“.